

ՄԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՐԻԱԿԱՆ
ՆԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
2011-2020 թթ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИНСТИТУТ АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

ՏԱՐԿԻՏ ԳՐԻԳՐՅԱՆ

СИРИЙСКИЙ КОНФЛИКТ 2011-2020 ГГ.

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

SARGIS GRIGORYAN

THE SYRIAN CONFLICT IN 2011-2020

ЕРЕВАН-YEREVAN

Изд. ЕГУ - YSU Press

2020

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
2011-2020 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 32:94

ԳՄԴ 66.0+63.3

Գ 888

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը:*

Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Վ. Ս. Պետրոսյան

Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռ. Կարապետյան
պատմական գիտությունների դոկտոր
Վ. Տեր-Ղևոնդյան

Գրիգորյան Ս.

Գ 888 Սիրիական հակամարտությունը 2011-2020 թթ./

Ս. Գրիգորյան: -Եր., ԵՊՀ հրատ., 2020, 216 էջ:

Սույն մենագրությունում ուսումնասիրվում են 2011-2020 թթ. (մինչև հունիս) սիրիական հակամարտությունը, դրա ընթացքը, զարգացման փուլերը, դինամիկան, Սիրիայում հակամարտող հիմնական ուժերը, հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված գործընթացները և սիրիական պատերազմին առնչվող այլ իրողություններ: Այդ համատեքստում դիտարկվում է նաև մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային արդի ուժային կենտրոնների ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը: Գիրքը նախատեսված է արաբագետների, միջազգայնագետների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 32:94

ԳՄԴ 66.0+63.3

ISBN 978-5-8084-2451-7

© ԵՊՀ հրատ., 2020

© Գրիգորյան Ս., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	7
ԳԼՈՒԽ I	
ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԸՆԹԱՑՔԸ 2011-2014 ԹԹ.....	9
1.1. Սիրիայում տիրող իրավիճակը 2011-2012 թթ.....	9
1.2. Սիրիայում տեղի ունեցած զարգացումները 2013-2014 թթ.	16
ԳԼՈՒԽ II	
ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 2015-2020 ԹԹ.....	34
2.1. Սիրիայի շուրջ տեղի ունեցող գործընթացներն ու սիրիական հակամարտությունը 2015-2016 թթ.....	34
2.2. Սիրիական հակամարտությունը 2017-2020 թթ.....	62
ԳԼՈՒԽ III	
ԱՐՏԱՍԻՐԻԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ.....	75
3.1. Իսլամական ծայրահեղական կառույցների ակտիվ ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը («Ջաբհաթ ալ-Նուսրա», «Իսլամական պետություն»)	75
<i>«Ջաբհաթ ալ-Նուսրա»</i>	78
<i>«Իսլամական պետություն»</i>	85
3.2. Սիրիական հակամարտությունն ու օտարերկրացիների ներգրավվածությունը (կովկասցիների օրինակով).....	92
<i>Ադրբեջանցիներ.....</i>	95
<i>Վրաստանցիներ.....</i>	102

3.3. Մերձավորարևելյան տարածաշրջանային երկրների՝ Սաուդյան Արաբիայի, Կատարի, ԱՄԷ-ի, Հորդանանի, Իսրայելի ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը	106
ԳԼՈՒԽ IV	
ԷԹԻՅ-ԴԱՎԱՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 2011-2020 ԹԹ. (ՀԱՅԵՐԻ ԵՎ ՔՐԴԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)	115
4.1. Սիրիահայ համայնքը սիրիական հակամարտությունում 2011-2020 թթ.	115
4.2. Քրդերը սիրիական հակամարտությունում 2011-2020 թթ.	132
ԳԼՈՒԽ V	
ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ	152
5.1. Ժննի և Աստանայի՝ սիրիական հակամարտության կարգավորման գործընթացները	152
ԱՄՓՈՓՈՒՄ	165
РЕЗЮМЕ	173
SUMMARY	178
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	183
ՀԱՎԵԼՎԱԾ	197

ՆԱԽԱԲԱՆ

Սիրիական հակամարտությունը 21-րդ դարի երկրորդ տասնամյակի թերևս ամենաողբերգական հակամարտությունն է, որը խլել է հազարավոր մարդկանց կյանքեր, անօթևան թողել ու փախստական դարձրել միլիոնավոր սիրիացիների, պատճառ դարձել ավերածությունների ու խեղված ճակատագրերի: 2011 թ. մարտից Սիրիայում սկսված և մինչ այսօր շարունակվող հակամարտությունը կազմեց արաբական աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների և ճգնաժամերի շարունակական մասը, ինչն էլ 2020 թ. դրությամբ դեռևս իր ազդեցությունն է թողնում ոչ միայն մերձավորարևելյան տարածաշրջանային, այլ նաև գլոբալ գործընթացների վրա:

Սիրիայում իրականացվող գործընթացները նաև նոր իրողությունների դրսևորման պատճառ դարձան՝ կազմելով Մերձավոր Արևելքում տեղի ունեցող փոփոխությունների և գործընթացների անբաժանելի մասը: Սիրիական հակամարտությունն ազդել է երկրից դուրս տեղի ունեցող մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային զարգացումների վրա՝ պատճառ դառնալով մի շարք ուժային կենտրոնների ակտիվ ներգրավվածության ու սիրիական հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված տարբեր ձևաչափերով գործընթացների ու բանակցությունների ծավալման:

2010 թ. վերջից արաբական երկրներում սկսված զանգվածային շարժումներն ու ցույցերը ցնցեցին ոչ միայն մուսուլմանական, այլև ողջ աշխարհը: Այսպես կոչված «Արաբական գարունն» ու մուսուլմանական երկրներում տեղ գտած փոփոխությունները, իրենց յուրահատկություններով հանդերձ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնների ազդեցության արդյունք էին: 2011 թ. մարտից Սիրիայում սկսված գործընթացներն իսլամա-

կան ծայրահեղ արմատական կառույցներին հնարավորություն ընձեռեցին վերագտնելու իրենց նոր ձևավորվող տարածաշրջանային զարգացումներում, իսկ «Արաբական գարունը» և դրա շարունակական շղթա դարձած սիրիական հակամարտությունը տվեցին այդ հնարավորությունը:

Մենագրությունում ուսումնասիրվում են սիրիական հակամարտության ընթացքը, զարգացման փուլերը, նշված ժամանակահատվածում Սիրիայում տեղի ունեցած գործընթացների առանձնահատկություններն ու փոխակերպումները, իսլամական ծայրահեղ արմատական կառույցների ակտիվությունը, Սիրիայի էթնիկ-դավանական փոքրամասնություններին սպառնացող վտանգները, հայ համայնքին առնչվող իրողությունները, քրդական գործոնի ակտիվացումը, սիրիական խնդրի հանգուցալուծման գործընթացներն ու դրանց առանձնահատկությունները:

Մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող ռազմական գործողությունները, էթնիկ-դավանական հակամարտությունները, Միջին Արևելքի քրիստոնեական համայնքների հանդեպ ճնշումները ուղղակիորեն և անուղղակիորեն կարող են մարտահրավեր դառնալ ՀՀ անվտանգությանը: Ուստի 2011-2020 թթ. սիրիական հակամարտության և ընդհանրապես Մերձավոր Արևելքում տեղի ունեցող գործընթացների ուսումնասիրությունը կարևոր ու արդիական է դառնում ոչ միայն տարածաշրջանային հասարակական-քաղաքական, էթնիկ-դավանական տեղաշարժերի ու գործընթացների, այլ նաև Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության ռիսկերի գնահատման տեսանկյունից:

ԳԼՈՒԽ I
ՄԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ
ԸՆԹԱՑՔԸ 2011-2014 ԹԹ.

1.1. Սիրիայում տիրող իրավիճակը 2011-2012 թթ.

2000 թ. Սիրիայում Բաշար ալ-Ասադը, իշխանության դեկին փոխարինելով հորը՝ Հաֆեզ ալ-Ասադին, փորձեց որոշակի բարեփոխումների ճանապարհով երկիրը կանգնեցնել 21-րդ դարին համահունչ զարգացումների ճանապարհին, սակայն սիրիական հասարակությունը պատրաստ չգտնվեց նման փոփոխություններին: Սիրիայից դուրս տեղի ունեցող արտաքին քաղաքական գործընթացներն ու դրանցում նկատվող բացասական միտումները՝ 2008-2009 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը, 2010 թ. դեկտեմբերից արաբական աշխարհում մեկնարկած փոփոխությունների և հեղաշրջումների ալիքը՝ «Արաբական գարունը», ավելի սրեցին իրավիճակը Սիրիայի ներսում:

2010 թ. վերջից արաբական երկրներում սկսված զանգվածային շարժումների ու ցույցերի արդյունքում Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում տապալվեցին վարչակարգերը, հակակառավարական ցույցեր անցկացվեցին Ալժիրում, Մարոկկոյում, Մավրիտանիայում, Հորդանանում, Իրաքում, Եմենում, Բահրեյնում, Սուդանում, Լիբանանում, բարդ իրավիճակ ստեղծվեց Քուվեյթում և Սաուդյան Արաբիայում: Սիրիան նույնպես անմասն չմնաց վերոհիշյալ գործընթացներից: 2011 թ. մարտին Սիրիայի Դարա քաղաքում իրավապահ մարմինները ձերբակալեցին 15 դպրոցականների, որոնք իրենց դպրոցի պատին հակակառավարական գրառումներ էին արել: Այս միջադեպը սկիզբ դրեց սիրիական ճգնաժամին, որի աստիճանական սրումը ստիպեց Բաշար ալ-Ասադին քայլեր ձեռնարկել երկրում լարվածությունը

թուլացնելու ուղղությամբ: Դրանցից մեկը 2011 թ. մայիսի 31-ին Սիրիայում հայտարարված համաներումն էր, ինչի հետևանքով մեծ թվով բանտարկյալներ և այլախոհներ դուրս եկան բանտերից՝ համալրելով աստիճանաբար ակտիվացող ընդդիմադիր ճամբարը¹:

Սիրիական հակամարտությունն իր սկզբնավորման ժամանակահատվածից առավելապես սոցիալական բնույթ ուներ և հետագայում աստիճանաբար ընդունեց սուր քաղաքական ուղղվածություն՝ երկիրը կանգնեցնելով խոր ճգնաժամի առջև: Աստիճանաբար ակնառու դարձան Սիրիայում ներգրավված հակամարտող կողմերը՝ ներկայիս իշխանություններն ու հիմնականում դրսից (Պարսից ծոցի արաբական միապետություններ, Թուրքիա, Հորդանան և այլն) կազմակերպվող ու ֆինանսավորվող ընդդիմադիր զանգվածը, որը սկզբնական շրջանում ներկայացված էր առավելապես «չափավոր» ուժերով (մասնավորապես «Սիրիայի ազատ բանակի» (ՍԱԲ) ստորաբաժանումները, որոնց զինյալները ռազմական պատրաստություն էին անցնում Թուրքիայի տարածքում և այնտեղից հարձակումներ էին գործում սիրիական բնակավայրերի վրա՝ աստիճանաբար իրենց վերահսկողության տակ առնելով Թուրքիայի հետ սահմանակից սիրիական որոշ շրջաններ²): 2011 թ. հունիսին հայտարարվեց սիրիական ընդդիմության հիմնական ռազմական միավորի՝ ՍԱԲ ստեղծման մասին: Արևմտյան երկրները ՍԱԲ-ը ճանաչեցին չափավոր աշխարհիկ կառույց՝ համաձայնելով համագործակցել նրա հետ Բաշար ալ-Ասադի վարչակարգի դեմ պայքարում³:

Հակամարտության աստիճանական սրման պայմաններում 2011 թ. վերջին սիրիական իշխանությունները որդեգրեցին ռազմավարական կարևորություն ներկայացնող Սիրիայի արևմտյան տարածքներն ու մարզկենտրոնները պաշտպանելու և այս հատվածներում ռազմական լայնամասշտաբ գործողություններից

խուսափելու մարտավարությունը: 2011 թ. հունիսին սիրիական իշխանությունների և քրդերի միջև սկսվեցին բանակցություններ, որոնց արդյունքում քրդերին տրվեցին որոշ արտոնություններ: Փոխարենը կանոնավոր բանակի հիմնական ստորաբաժանումները դուրս բերվեցին հյուսիսային քրդաբնակ տարածքներից՝ կենտրոնացվելով երկրի արևմտյան հատվածներում⁴: Ինչպես գիտենք, Սիրիայի կարևոր մարզկենտրոնները հիմնականում գտնվում են երկրի արևմտյան մասում, և կառավարական ուժերը քայլեր ձեռնարկեցին Հալեպ–Համա–Հոմս–Դամասկոս ռազմավարական գիծը արևելքից եկող ընդդիմադիր կառույցների ճնշումից պաշտպանելու համար: 2011 թ. վերջին, հատկապես 2012 թ. սկզբին սիրիական բանակը զգալի ներուժ կուտակեց այս հատվածում՝ փորձելով դիմակայել ընդդիմադիրների ճնշումներին ու ակտիվությանը, որն ուղղված էր ռազմական գործողությունների արեալը այս հատված տեղափոխելուն: Պետք է փաստել, որ այդ ժամանակ Սիրիայի արևմտյան հատվածը հիմնականում խուսափեց ակտիվ գործողություններից, իշխանությունների որդեգրած մարտավարությունը արդյունք տվեց, և այստեղ գտնվող մարզկենտրոնները հիմնականում մնացին կառավարական ուժերի վերահսկողության տակ:

2012 թ. գարնանը Սիրիայում կառավարական ուժերի և ընդդիմադիրների միջև շարունակվող զինված բախումները առավել թեժ, լայնածավալ և արյունալի բնույթ ստացան: Իրավիճակը երկրում մնում էր լարված և փոփոխական հաջողություններով էր զարգանում: Հակամարտության այդ փուլում Սիրիայի տարածքների զգալի հատվածը, այդ թվում՝ հիմնական խոշոր մարզկենտրոնները, գտնվում էին կառավարական ուժերի վերահսկողության տակ, սակայն արդեն կային բնակավայրեր, որտեղ ընդդիմադիր ուժերն էին իրականացնում վերահսկողություն՝ այնտեղ ստեղծելով սեփական տեղական ինքնակառավարման մար-

միններ, զինված խմբեր ու շարիաթի դատարաններ: 2012 թ. գարնան ամիսներին մարտեր էին տեղի ունենում՝ խոշոր քաղաքներին հարակից ռազմավարական նշանակության օբյեկտներին տիրանալու համար, իսկ հակամարտող կողմերի շփման գիծն անընդհատ փոփոխվում էր:

2012 թ. ամռանը ընդդիմադիրները Սիրիայում հայտարարեցին «Հրաքուխ Դամասկոսում, երկրաշարժ Սիրիայում» անվանմամբ ռազմական գործողությունների մասին: Հուլիսի 18-ին Դամասկոսում իրականացված պայթյունի հետևանքով սպանվեցին սիրիական առանցքային պաշտոնյաներ: Երկրում ծավալվեցին ռազմական լայնածավալ գործողություններ՝ ներառելով մայրաքաղաք Դամասկոսը, Հալեպը և այլ տարածքներ: Կառավարական ուժերը դեռևս կարողանում էին ճնշել ընդդիմադիրներին, սակայն վերջիններս, ստանալով ֆինանսական, ռազմական և մարդկային ռեսուրսի լուրջ օժանդակություն, կարողացան դիմակայել կառավարական ուժերի ճնշումներին: Հակամարտության սկզբնական փուլում կային երկրներ, որոնք շարունակում էին աջակցել սիրիական իշխանություններին, իսկ այդ երկրների շարքում բավական ակտիվ էր Իրանը, ինչը տրամաբանական էր. Սիրիայի շիայական-ալաուիական վարչախմբին աջակցելով՝ Իրանը փորձում էր «Արաբական գարնան» զարգացումների համատեքստում սկսված հակաշիայական ալիքը մեղմացնել՝ դրդելով նաև լիբանանյան «Հիզբալլահին» ակտիվություն ցուցաբերել սիրիական ճակատում: Մյուս կողմից Ռուսաստանն ու Չինաստանն ունեին աշխարհաքաղաքական շահեր տարածաշրջանում և նույնպես օժանդակում էին սիրիական իշխանություններին⁵: Ինչ վերաբերում էր այն արտաքին ուժերին, որոնք հանդես էին գալիս Բաշար ալ-Ասադի դեմ, դրանք բազմազան էին՝ սկսած արևմտյան գերտերություններից մինչև տարածաշրջանային ուժային կենտրոններ, որոնք սկսեցին գործուն մասնակցություն

ունենալ սիրիական ընդդիմադիր ճամբարի ստեղծման գործում, և Բաշար ալ-Ասադի վարչակարգի տապալմանը ձգտող արտաքին խաղացողներն էլ ավելի ակտիվացրին ընդդիմությանը տրվող օժանդակությունը:

Արտաքին մեծ ճնշումները և Սիրիայի ապագայի կանխատեսման առումով որոշ գերտերությունների դիրքորոշումները հանգում էին Բաշար ալ-Ասադի վարչակարգի փոփոխությանը, սակայն այդ փուլում կար մտավախություն, թե որ ուժերն են դեկլարելու Սիրիան Բաշար ալ-Ասադից հետո: Այս հարցում, ինչպես նաև Սիրիայի հետագա ճակատագրի առումով, միասնականություն ու հստակ դիրքորոշում չկային ինչպես արտաքին ուժերի, այնպես էլ ընդդիմադիրների շարքերում:

Սիրիան, երկար տարիներ լինելով արաբական ուժեղ և կայացած երկրներից մեկը, միշտ զսպող դերակատար էր մերձավորարևելյան տարածաշրջանում: Այս կարգավիճակը խաթարվեց սիրիական ճգնաժամի բռնկմամբ, որի հաղթահարման և Սիրիան կրկին ուժեղ, զարգացող ու տարածաշրջանային գործընթացների լուրջ դերակատար դարձնելու համար կարևոր էր սիրիական հասարակական լայն շերտերի գործուն մասնակցությունը տեղի ունեցող գործընթացներին, ինչը չնկատվեց: Մինչ ճգնաժամը Սիրիայի ռազմական ներուժն ու հնարավորությունները նույնպես ազդեցիկ են եղել տարածաշրջանում: Սիրիական բանակն իր թվաքանակով և սպառազինությամբ զսպող դեր էր կատարում Մերձավոր Արևելքում: Իր սպառազինության մեջ ունենալով նաև նյարդակաթվածահար ներգործության նյութեր և փոքր հեռահալորության «ՄԿԱԴ» բալիստիկ հրթիռներ՝ սիրիական զինուժը կարող էր թիրախներ խոցել Սիրիայի սահմաններից դուրս: Բացի դրանից՝ Սիրիան քիմիական զենքի խոշոր արտադրող էր: Սիրիայում չորս գործարան (Հալեպում, Հոմսում, Համայում, Լաթակիայում) զբաղված էր քիմիական զենքի արտադրությամբ:

2012 թ. ընթացքում սիրիական սպառազինության մեջ քիմիական զենքի առկայությունը ակտիվ քննարկումների առիթ դարձավ հասարակական լայն շրջանակների, ռազմաքաղաքական փորձագիտական, ուժային կենտրոնների ու Բաշար ալ-Ասադին ընդդիմադիր որոշ արտաքին ուժերի շրջանում: Դրան ի պատասխան՝ հակամարտության սկզբում սիրիական կողմը անմիջապես արձագանքեց՝ հայտնելով, որ սիրիական կառավարական ուժերը չեն կիրառի քիմիական զենք ներքին բախումների ժամանակ՝ ավելացնելով, որ այն կկիրառվի միայն Սիրիայի վրա արտաքին հարձակման դեպքում:

ՄԱԿ Գլխավոր ասամբլեան 2012 թ. օգոստոսի 3-ին ձայների 133 կողմ, 12 դեմ, 31 ձեռնպահ (ՀՀ-ն ձեռնպահ է քվեարկել) հարաբերակցությամբ Սիրիայի վերաբերյալ ընդունեց բանաձև: Բանաձևում տեղ գտան սիրիական իշխանություններին ուղղված քննադատություններ և հորդորներ՝ ներքաղաքական գործողությունների ընթացքում կենտրոնանալ խաղաղ միջոցների վրա, ապահովել ժողովրդավարության և բազմակարծության հիմքերը երկրում⁶:

2012 թ. կեսերից փոփոխություններ գրանցվեցին Սիրիայի առանձին տարածքներում: Ինչպես նշեցինք, հյուսիսային որոշ հատվածներում բնակվող քրդերը կենտրոնական իշխանություններից ստացան որոշակի արտոնություններ. 2012 թ. կեսերին իրենց տարածքները պաշտպանելու նպատակով քրդերը ստեղծեցին ինքնապաշտպանական սեփական ջոկատներ, ինքնիշխան տեղական միավորներ և իրավիճակից ելնելով՝ սկսեցին ինքնուրույն իրականացնել սեփական տարածքների կառավարումը: Զուգահեռաբար Սիրիայի հյուսիսային որոշ հատվածներ

րում քրդերը հանդես եկան ինքնավարություն ստեղծելու հայտարարություններով՝

2011-2012 թթ. ընթացքում Սիրիայում ընթացող հակամարտությունն աստիճանաբար սուր բնույթ ստացավ: Սիրիական իշխանությունները որդեգրեցին արևմտյան խոշոր մարզկենտրոնների պաշտպանության մարտավարությունը: Մինչդեռ արտաքին ուժերը գործուն քայլեր ձեռնարկեցին Բաշար ալ-Ասադին ընդդիմադիր ճամբար ստեղծելու, այն կազմակերպելու, զինելու և ֆինանսավորելու համար: Միջազգային ասպարեզում Սիրիայում տեղի ունեցող գործընթացները մեղմելու որոշակի քայլեր ձեռնարկվեցին, սակայն ապարդյուն:

* Սիրիական հակամարտության հենց այս փուլից քրդական ռազմական խմբերը ակտիվորեն ներգրավվեցին ռազմական գործողությունների մեջ ոչ միայն պաշտպանելով քրդաբնակ հատվածները, այլ նաև ընդլայնելով դրանք և այդ հատվածներում հայտարարելով ինքնավարություն, ինչը ստիպեց տարածաշրջանային որոշ երկրների, մասնավորապես Թուրքիային, մտածել Սիրիայի հյուսիսային հատվածներում ցամաքային գործողությունների մասին:

1.2. Սիրիայում տեղի ունեցած զարգացումները 2013-2014 թթ.

2013 թ. Սիրիայում շարունակվեցին ռազմական գործողությունները, որոնք էլ ավելի մեծ աշխարհագրական արեալներ ընդգրկեցին: Մայիսի կեսերից Սիրիայում ռազմավարական կարևորություն ունեցող ալ-Կուսայր քաղաքը, որը գտնվում էր Լիբանանի սահմանից մոտ 15 կմ հեռավորության վրա, երկարատև և թեժ մարտերից հետո անցավ սիրիական կառավարական ուժերի վերահսկողության տակ⁷: Այն զբաղեցնում էր կարևոր ռազմավարական դիրք. այստեղով էին անցնում ընդդիմադիր զինյալներին Լիբանանից եկող ռազմական, ֆինանսական օգնությունն ու աջակցությունը, և այստեղ էին գտնվում Սիրիայի միջերկրածովյան ափամերձ շրջաններն այլ հատվածների հետ կապող ռազմավարական նշանակության կարևոր ուղիները:

Օգտվելով տարածաշրջանային գործընթացներից, հատկապես Թուրքիայում ծայր առած դժգոհության ալիքից և ալ-Կուսայրի նվաճմամբ ապահովվելով թիկունքը՝ կառավարական ուժերը սկսեցին թեժ մարտեր վարել առավել հյուսիս ընկած շրջաններում, որտեղ նրանց կողքին մարտնչում էին պարտիզանական մարտերի զգալի փորձ ունեցող լիբանանյան «Հիզբալլահի» ստորաբաժանումները: Վերջիններս սիրիական կառավարական ուժերին տրվող աջակցությունը որոշ չափով ծածուկ էին անում, սակայն ալ-Կուսայրում և դրանից հետո ծավալված ռազմական գործողություններում այն առավել զգալի ու բացահայտ բնույթ ստացավ:

«Հիզբալլահի»՝ սիրիական հակամարտությանը ակտիվ ներգրավվածությանը բազմիցս անդրադարձել էր կազմակերպության առաջնորդ Հասան Նասրալլահը: Ապրիլի 30-ին վերադառնալով Թեհրանից՝ Նասրալլահը հայտարարեց, որ պետք է աջակ-

ցել Սիրիայում իրենց շիա եղբայրներին՝ կոչ անելով կրոնական պատերազմ մղել սուննի ծայրահեղական կառույցների դեմ: Սիրիայում շիայական խմբավորման ակտիվ ներգրավումը չէր կարող անարձագանք մնալ սուննիական, հատկապես արմատական շրջանակներում: Սկսվեց քննադատությունների մեծ ալիք. ալ-Ազհարի շեյխ Ահմադ ալ-Թայիբը, սաուդական մուֆտի Աբդ ալ-Ազիզ ալ-Շեյխը, սուննիական արմատական աստվածաբան Յուսուֆ ալ-Կարադաուին և ուրիշներ քննադատեցին «Հիզբալլահի» գործողությունները Սիրիայում՝ հայտարարելով, որ սուննիներն էլ իրավունք ունեն աջակցելու ընդդիմադիրներին Սիրիայում և կոչվելու շիաների դեմ: Հունիսի 5-ին համացանցում տարածվեց «ալ-Կաիդա» իսլամական ծայրահեղական կազմակերպության առաջնորդ Այման ալ-Ջաուահիրիի՝ մոտ քսանրոպեանոց տեսաուղերձը, որտեղ ալ-Ջաուահիրին կարևորվում էր Սիրիայում ընթացող ջիհադական պայքարը՝ շեշտելով ընթացող պայքարի հակաամերիկյան ու հակաշիայական բնույթը՝ կոչ անելով բոլոր մուսուլմաններին գալ և մասնակցել այդ ջիհադին⁸:

2013 թ. Սիրիայում տեղ գտած գործընթացներում խոր արմատներ գցող սուննի-շիա հակամարտությունը, որն էլ ավելի ակնհայտ դարձավ ալ-Կուսայրի ռազմական գործողությունից հետո, տեսանելի դարձրեց նաև տարածաշրջանում տեղ գտած դավանաբանական հակասությունները. Լիբանանում անընդհատ ընթացող սուննի-շիա բախումները (որոնք այդ ժամանակ աննախադեպ աճել էին), ամենախոշոր արաբական երկրի՝ Եգիպտոսի դավանագիտական հարաբերությունների խզումը Սիրիայի հետ, այդ համապատկերում Եգիպտոսում ավելացող հակաշիայական տրամադրությունները, Իրաքի շիա բնակչության դեմ սուննիական ծայրահեղականների ակտիվությունն ու ահաբեկչությունները, Սաուդյան Արաբիայի արևելյան և հարավային շիաբնակ տարածքներում աճող դժգոհությունները, Բահրեյնում

շիայական մեծամասնության անջատողական տրամադրությունների ավելացումը նոր թափ հաղորդեցին սիրիական հակամարտությանը, որում բացահայտորեն դրսևորվեց նաև հակամարտության դավանական ներմուսուլմանական հակասությունը:

2013 թ. կեսերից իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ սիրիական իշխանությունները երկրի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում բախվեցին դժվարությունների՝ ընդդիմադիր խմբավորումների ակտիվ գործողություններին և դրանց չեզոքացմանը: Այդ իրողության ցուցիչներից մեկը Հալեպ քաղաքի բաժանումն էր կառավարական և ընդդիմադիր ուժերի ազդեցության գոտիների: Հալեպ նահանգն ու համանուն մարզկենտրոնը չափազանց կարևոր ու առանցքային նշանակություն ունեին Սիրիայի համար: Հալեպը նաև Սիրիայի տնտեսական և ֆինանսական մայրաքաղաքն էր, հետևաբար մարզկենտրոնի բաժանումը հակամարտող կողմերի միջև լուրջ հարված էր սիրիական իշխանությունների համար:

2013 թ. ապրիլ-օգոստոս ամիսներին քիմիական զենք կիրառվեց ընդդիմադիրների կողմից վերահսկվող տարբեր հատվածներում: Զենքի կիրառման միջադեպը դրդեց ԱՄՆ-Ռուսաստան երկկողմանի հանդիպումների նախաձեռնման, որոնց ընթացքում որոշվեց (որոշմանը համաձայնեց նաև սիրիական կողմը), որ Սիրիան պետք է հրաժարվի իր ունեցած քիմիական զենքից՝ դրանք դնելով միջազգային կառույցների վերահսկողության տակ՝ հետագայում այն ոչնչացնելու նպատակով: ՄԱԿ ԱԽ 15 անդամ պետությունները միաձայն ընդունեցին Սիրիայի քիմիական զենքի ոչնչացման վերաբերյալ բանաձև⁹:

Սիրիական խնդրին վերաբերող միջազգային հարթակներում նկատելի գործընթացներից զատ՝ 2013 թ. գարնան և ամռան ամիսներին Սիրիայի ներսում ընդդիմադիր ճամբարի չափավոր և ծայրահեղ արմատական թևերի միջև էլ ավելի սրվեցին հակա-

սությունները: Դրանց ավելացան նաև ծայրահեղ արմատականների և քրդական կառույցների, ինչպես նաև հենց ծայրահեղականների միջև ավելացող արյունալի բախումները:

2013 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ն և Ֆրանսիան բացահայտորեն հանդես եկան Սիրիայում ռազմական միջամտություն իրականացնելու հայտարարություններով: ԱՄՆ-ն հայտարարեց, որ ունի բավարար ապացույցներ, որ օգոստոսին Սիրիայում քիմիական զենք էին կիրառել կառավարական ուժերը, իսկ քանի որ քիմիական զենքի կիրառումը սպառնալիք էր ԱՄՆ և նրա տարածաշրջանային դաշնակիցների անվտանգության համար, ապա պետք էր իրականացնել սահմանափակ հարվածներ, որոնք ուղղված կլինեին Բաշար ալ-Ասադին սաստեղծուն, որպեսզի այլևս չկրկնվեն նման դեպքեր¹⁰:

Տարեվերջին քիչ էր խոսվում սիրիական հակամարտության խաղաղ կարգավորման մասին, միջազգային հարթակներից հնչող և Սիրիային վերաբերող հռետորաբանությունից գրեթե բացակայում էին սիրիական հակամարտության խաղաղ կարգավորման կոչերը: Բոլորի ուշադրությունը սևեռված էր հնարավոր ռազմական հարվածների վրա: Այդ փուլում Սիրիայում և նրա շուրջ ընթացող զարգացումները ցույց տվեցին, որ ռազմական լուծումների կողմ կարծիքները գերակշռում էին հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին միտված կարծիքներին: Բացառություն կազմեցին թերևս Սիրիայի քիմիական սպառազինության ոչնչացմանն ուղղված կոնկրետ գործողությունները, որոնք ընթացան միջազգային խիստ վերահսկողության պայմաններում և հստակ ժամանակացույցով, սակայն ինչպես ներսիրիական, այնպես էլ արտասիրիական զարգացումներում բուն հակամարտության կարգավորմանն ուղղված անկեղծ ձգտումներ չնկատվեցին:

2013 թ. վերջին ռազմական լարված գործողությունների թատերաբեմի էին վերածվել Սիրիայի հարավային տարածքները: Հավանաբար դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հյուսիս-արևելքում սիրիական որոշ տարածքներ անցել էին քրդերի վերահսկողության տակ, իսկ հյուսիսարևմտյան որոշ բնակավայրեր վերահսկում էին «ալ-Կաիդային» հարող իսլամական արմատական խմբավորումներ^{*}: Այս իրողության պայմաններում «Սիրիայի ազատ բանակի» և արտաքին ուժային կենտրոնների օժանդակությամբ գործող արտասիրիական այլ ուժերի՝ Սիրիայի հարավում և մայրաքաղաք Դամասկոսի ուղղությամբ ռազմական ակտիվությունն էլ ավելի նկատելի դարձավ: Սիրիայի հարավային շրջաններում նկատվեցին ընդդիմադիր զինյալների թվաքանակի աճ, այս տարածքներում արևմտյան հատուկ ծառայությունների ակտիվություն, սիրիա-հորդանանյան սահմանին կուտակված մեծաքանակ ռազմական ներուժ, ընդդիմադիր զինյալներին տրվող ռազմական օժանդակություն, վերջիններիս հասցեագրված ֆինանսական հոսքեր և այլն: Այդ ժամանակ տեղի ունեցան նաև իսրայելա-սաուդյան երկկողմանի լատենտային հանդիպումներ և քննարկումներ: Սիրիայի հարավային սահմանները ռազմավարական առումով նույնպես կարևորեցին վերոհիշյալ երկրները, ինչն արտահայտվեց իսրայելական և սաուդական հատուկ ծառայությունների ակտիվությամբ՝ նաև այս հատվածում հակաիրանական պայքարի համատեղ հարթակ կառուցելու առումով:

Գիտակցելով Սիրիայի հարավից սպասվող ռազմական հարվածի վտանգը՝ սիրիական իշխանությունները ռազմական գործողությունների հիմնական ուղղությունը 2013 թ. վերջին ամիսներին ցուցադրաբար թեքեցին դեպի հյուսիս՝ Հալեպ-Համա

^{*} Նշված տարածքներում տիրող իրավիճակի մասին կխոսենք մենագրության հետագա հատվածներում:

ուղղությամբ՝ տպավորությունն ստեղծելով, որ թուլացնում են մայրաքաղաք Դամասկոսի և ընդհանրապես Սիրիայի հարավային շրջանների նկատմամբ ուշադրությունը, սակայն շատ կարճ ժամանակահատվածում հարավում կենտրոնացնելով զգալի ռազմական ուժեր՝ այստեղ հաջողությամբ սկսեցին պայքարել զինյալների դեմ:

Ընդդիմադիր խմբավորումների դեմ արդյունավետ գործողություններ գրանցվեցին նաև Սիրիայի այլ հատվածներում, մասնավորապես հյուսիս-արևմուտքում: Այդ համատեքստում 2013 թ. սեպտեմբերին Սիրիայի հյուսիսում ակտիվ գործող «Լիուա ալ-Թաուհիդ» խմբավորումը տեղեկություն տարածեց, որ մի շարք ընդդիմադիր զինյալ կառույցներ ստորագրել են Սիրիայի հյուսիսում կառավարական ուժերի դեմ գործողությունները միացյալ համակարգելու և միասնական ճակատով հանդես գալու մի փաստաթուղթ: Սա արտաքին և ներքին լսարանին ուղղված յուրահատուկ ուղերձ էր, որի նպատակն էր ցույց տալ սիրիական ընդդիմադիր ճամբարի միասնականությունը: Այդ փաստաթղթի ընդհանուր բովանդակությունը հետևյալն էր.

- Բոլոր ռազմական և քաղաքացիական ուժերը պետք է համախմբվեին մեկ ընդհանուր իսլամական կառույցի մեջ, որը հիմնվելու էր շարիաթի սկզբունքների հիման վրա:
- Փաստաթուղթը ներկայացնում էր միայն նրանց, ովքեր ապրում և պայքարում էին Սիրիայում:
- Փաստաթղթի տակ ստորագրած ուժերը չէին ճանաչում այն կառույցները, որոնք ներկայացնում էին դրսի սիրիական ընդդիմությունը (այլ կերպ ասած՝ չէին ճանաչում այդ ժամանակ Սիրիայից դուրս ստեղծված, այսպես կոչված, «Ժամանակավոր կառավարությունը»՝ Ահմադ Տամայի ղեկավարությամբ):

- Փաստաթղթի տակ ստորագրած ուժերը կոչ էին անում համախմբվել և դադարեցնել պայքարը միմյանց դեմ:
- Հայտարարության մեջ նշվում էր, որ վերոհիշյալ խմբավորումները չէին ճանաչում այն վտարանդի սիրիական ընդդիմությունը, որը ստեղծվել և օժանդակություն էր ստանում Թուրքիայից, Կատարից, Սաուդյան Արաբիայից ու Արևմուտքից:
- Նրանք դատապարտում էին ընդդիմադիր ազգային կուսիցիայի փորձերը՝ բանակցելու ինչպես սիրիական իշխանությունների, այնպես էլ սիրիական քրդերին ներկայացնող «Քրդական ազգային խորհրդի» հետ¹¹:
- Փաստաթղթում շեշտվում էին նաև շարիաթի սկզբունքների կարևորությունն ու առաջնայնությունը՝ զգուշացնելով, որ ապագայում լինելու էր նոր փաստաթղթերի ստորագրում¹²:

Նշված հայտարարությունը ևս մեկ անգամ վկայեց, որ սիրիական ընդդիմադիր հատվածում առկա էին լուրջ հակասություններ: Արդեն նկատելի էին անհամաձայնություններ, թե ում հետ պետք է բանակցություններ վարել: Այդ համատեքստում ակնհայտ էր դառնում փաստաթղթի տակ ստորագրած ուժերի վերաբերմունքը սիրիական հակամարտության հանգուցալուծման և սպասվելիք ժնկյան բանակցություններին* մասնակցելու պատրաստակամություն հայտնած կողմերի վերաբերյալ:

Այն ուժերը, որոնք ստորագրել էին փաստաթղթի տակ (թվով 11-ը), կազմում էին Սիրիայի հյուսիսային հատվածներում կոմիտե հիմնական ընդդիմադիր զինյալ խմբավորումները, սակայն այստեղ չկային իսլամական ծայրահեղական ազդեցիկ խմբավորում-

* Սիրիական հակամարտության հանգուցալուծմանն ուղղված միջազգային գործընթացների մասին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել մենագրության 5-րդ գլխում:

ները, ինչը ևս վկայեց, որ հիշյալ փաստաթուղթը լիովին չէր ներկայացնում սիրիական ընդդիմությանը:

Նման բնույթի միավորման անհաջող փորձեր տեղի էին ունեցել նաև 2012 թ.: 2012 թ. նոյեմբերին նման հայտարարությամբ հանդես եկան «Ջաբհաթ ալ-Նուսրա» (ՋՆ)*, «Լիուա ալ-Թաուհիդ» և «Ահրար ալ-Շամ» խմբավորումները, սակայն դա նրանց չհաջողվեց: Ինչևէ, այդ հայտարարությունները Բաշար ալ-Ասադի դեմ կովող ընդդիմադիր ճամբարում առկա խմբումների և ընդդիմադիրների շրջանում գնալով սրվող պայքարի ցուցիչ էին, ինչին հետագայում ականատես եղանք:

2014 թ. նախաշեմին մերձավորարևելյան տարածաշրջանային և դրանից դուրս գտնվող առանցքային որոշ երկրներ բացահայտ հանդես եկան Բաշար ալ-Ասադի իշխանության դեմ: Այդ ուժային կենտրոնների համար առաջնահերթ խնդիր էր դրված՝ հասնելու Ասադի հեռացմանը, որը պետք է լիներ հակամարտության ռազմական լուծման ճանապարհով: Սակայն այդ փուլում հիշյալ երկրները սիրիական հակամարտության ռազմական լուծումը տեսնում էին սիրիական իշխանությունների դեմ պայքարող ընդդիմադիր ճամբարին ցամաքում աջակցելու և ռազմական օգնություն տրամադրելու միջոցով, ինչը խնդիրներ առաջացրեց թեկուզ և այդ ժամանակ ռազմական հաջողություններ գրանցող սիրիական իշխանությունների համար: Ակնհայտ էր նաև, որ այդ ժամանակ ընդդիմադիր ճամբարը ներկայացնող ուժերը բազմազան էին, և աստիճանաբար այստեղ ազդեցիկ էին դառնում իսլամական ծայրահեղական խմբավորումները, որոնք նույնպես օգտվեցին արտասիրիական ուժային կենտրոններից ստացվող օժանդակությունից: Հետագայում այդ ծայրահեղական կառույցները փոխեցին իրավիճակն ու ուժային հավասարա-

* «Ջաբհաթ ալ-Նուսրա» խմբավորմանը անդրադարձել ենք մենագրության 3-րդ գլխում:

կշռությունը սիրիական պատերազմում և վերածվեցին սպառնալիքի թե՛ Սիրիայի ներսում, թե՛ դրանից դուրս:

Նշված փուլում Սիրիայում ստեղծված իրավիճակի կայունացման կարևոր գրավականներից կարող էին լինել սիրիական հակամարտության կարգավորման մեծ տերությունների ջանքերը: Սակայն այդ օրերին անընդհատ շրջանառության մեջ դրվող «Ժնև 2»-ի կազմակերպման և հակամարտող կողմերին բանակցային սեղանի շուրջ նստեցնելու ռուս-ամերիկյան նախաձեռնությունները չառանձնացան կոնֆլիկտի հանգուցալուծմանն ուղղված «անկեղծ» միտումներով և շարունակվող ռազմական գործողությունների պայմաններում բավական խնդրահարույց դարձան: Այնուամենայնիվ, Ժնևյան գործընթացն ու տարբեր ձևաչափերով հանդիպումների անցկացումը, թեկուզ և դիրքորոշումների որոշակի միասնականության ու հստակության բացակայության պայմաններում, մեկ քայլ առաջ էին երկխոսության ու տեսակետների փոխանակման առումով՝ ի տարբերություն այդ ժամանակ Սիրիայում անդադար տեղի ունեցող պատերազմների և բախումների: Հավելենք նաև, որ Սիրիայի ընդդիմադիր ճամբարը մասնատված էր. նկատելի էին հակասություններ, տեղի էին ունենում բախումներ ընդդիմադիրների շրջանում, և չկար համաձայնեցված միասնական դիրքորոշում հակամարտության հետագա ընթացքի ու նրա կարգավորման ուղիների վերաբերյալ: Մինչդեռ կոնֆլիկտի խաղաղ կարգավորման համար անհրաժեշտ էր, որ կողմերը բանակցային գործընթացին մասնակցեին հնարավորինս ընդլայնված կազմով և ներկայացնեին սիրիական հասարակական լայն շերտերը: Ընդդիմադիրների մի մասը պատրաստ էր նստել բանակցությունների սեղանի շուրջ, իսկ մյուս հատվածը, հատկապես իսլամական ծայրահեղ արմատական ուժեր, բոյկոտում էին իշխանությունների հետ որևէ բանակցություն՝ կոչ անելով շարունակել պայքարը: Այն ավելի

էր բարդացնում հակամարտության խաղաղ կարգավորման իրատեսական ուղիների փնտրտուքը:

2014 թ. հունվարի 22-ին Շվեյցարիայի Մոնտրյո քաղաքում գումարված սիրիական հակամարտության կարգավորմանն ուղղված «Ժնև 2»-ի մեկնարկային օրը նույնպես հազեցած էր մասնակից կողմերի ելույթներով, կարծիքների փոխանակությամբ, ինչպես նաև որոշ անսովոր միջադեպերով: Համաժողովի բացման օրը մասնակից կողմերի ելույթները ավելի շատ հիշեցնում էին արդեն հայտնի դիրքորոշումների բարձրաձայնման ու դրանց միջազգային առավել լայն հնչեղություն հաղորդելու փորձեր, որոնք փաստում էին արդեն հայտնի իրողություններն ու տեսակետները: Համաժողովը կարող էր դրական արդյունքներ գրանցել, եթե կողմերը չտրվեին հավելյալ ձևականությունների ու զգայականության և փորձերի գործնական նախաձեռնություններով հանդես գալ¹³: Միևնույն ժամանակ Սիրիայում գործող ազդեցիկ քրդական կառույցները հրավիրված չէին «Ժնև 2»-ին: Մասնակցության հրավեր չստացած ԴՄԿ-ն¹⁴ քննադատությամբ հանդես եկավ՝ մատնանշելով, որ եթե Սիրիայի քրդերին ներկայացնող մեկ այլ կառույցը՝ ՔԱԽ-ը, մեկնի Ժնև, դա կդիտարկվի որպես դավաճանություն և կհանգեցնի բախումների քրդերի շրջանում: Բացի դրանից՝ ԴՄԿ-ն հրաժարվեց ընդունել «Ժնև 2»-ում քննարկվելիք փաստաթղթի պայմանները: Քրդերի շահերի անտեսումը հնարավորություն ընձեռեց քրդական որոշ շրջանակներին հիմնավորելու քրդական ինքնավարության ծրագրերը Սիրիայում և ակտիվ պայքար մղելու այդ ինքնավարության պաշտպանության ուղղությամբ¹⁵:

2014 թ. ապրիլի վերջում պարզ դարձավ, որ Սիրիայում նախատեսվող նախագահական ընտրություններին Բաշար ալ-Ասադը ևս առաջադրվելու էր: Սա պաշտոնական Դամասկոսի կողմից Սիրիայի ներսում և դրսում կոնկրետ հասցեատեր ունե-

ցող ուղերձ էր առ այն, որ Ասադը չէր պատրաստվում նահանջել և առաջադրվելու էր նախագահի պաշտոնում: Դեպքերի նման զարգացումը ստիպեց արտասիրիական ուժային կենտրոններին, հատկապես Սաուդյան Արաբիային և ԱՄՆ-ին, նոր տեսանկյունից նայել Սիրիայում ընթացող զարգացումներին և նոր ուղենիշներ մշակել հակամարտության մեջ ներգրավված ընդդիմադիր ճակատը ներկայացնող ուժերի համար: Այս համատեքստում պատահական չէին ազգային կոալիցիայի առաջնորդի՝ Ահմադ Ջարբայի այցելությունները սկզբում Էր-Ռիադ, այնուհետև՝ Վաշինգտոն: Այցելության ժամանակ մայիսին Վաշինգտոնում բացվեց Սիրիական ազգային կոալիցիայի գրասենյակը, որը ամերիկյան իշխանությունները ճանաչեցին որպես սիրիական ժողովրդի պաշտոնական ներկայացուցչություն:

Վերոհիշյալի համատեքստում պատահական չէին լրատվամիջոցներում հայտնված այն տեղեկությունները, ըստ որոնց՝ ընդդիմադիր զինյալների ձեռքին հայտնվել են ամերիկյան արտադրության նոր սպառազինություններ^{*}: Ենթադրվում էր, որ նման սպառազինությամբ ընդդիմադիր խմբավորումներն ի վիճակի կլինեին որոշակիորեն փոխել իրավիճակը ռազմադաշտում ինչպես սիրիական կառավարական ուժերի, այնպես էլ՝ ընդդիմադիր իսլամական ծայրահեղական խմբավորումների, հատկապես «Իրաքում և Շամում իսլամական պետություն» խմբավորման դեմ մարտերում^{*}: Սաուդական թագավորական վերնախավում նոր սերնդի ներկայացուցիչների ղեկավար պաշտոնների

^{*} Ամերիկյան հակատանկային ժամանակակից միջոցների առկայությունը, հատկապես սաուդական հատուկ ծառայությունների կողմից հովանավորվող խմբավորումների ձեռքին:

^{*} Նախքան «Իսլամական պետություն» անվանումը կառույցը Սիրիայում գործում էր «Իրաքում և Շամում իսլամական պետություն» անվանմամբ: «Իսլամական պետության» գործողություններին և սիրիական հակամարտությունում ակտիվ ներգրավվածությանը անդրադարձել ենք մենագրության 3-րդ գլխում:

ստանձնումը նոր շեշտադրումներ և մոտեցումներ մտցրեց սիրիական քաղաքականությունում: Նոր զինտեխնիկայի հայտնվելը ընդդիմադիրների ձեռքին, ինչպես նաև Վաշինգտոնում Ահմադ Ջարբայի այցելության ժամանակ ազգային կոալիցիայի ներկայացուցչությունը որպես սիրիական ժողովրդի անունից հանդես եկող օրինական մարմին ճանաչելը վկայեց Սաուդյան Արաբիայի ու ԱՄՆ վարքագծի փոփոխության և նոր շեշտադրումների մասին:

2014 թ. հունիսի 3-ին Սիրիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններում երկրի գործող նախագահ Բաշար ալ-Ասադը ստացավ ընտրողների ձայների մոտ 89 տոկոսը: Մյուս երկու թեկնածուներին՝ Հասան ալ-Նուրիին և Մահիր Հաջարին տված ձայների տոկոսային պատկերը համապատասխանաբար 4.3 և 3.2 էր: Երրորդ անգամ Բաշար ալ-Ասադն ընտրվեց երկրի նախագահի պաշտոնում¹⁶: Փորձագիտական շրջանակների համար Սիրիայում նախագահական ընտրությունների արդյունքները կանխատեսելի էին: Ինչևէ, Բաշար ալ-Ասադը չստացավ ձայների այն չափաբաժինը, ինչը ուներ 2007 թ. ընտրությունների ժամանակ: Բացի դրանից՝ ընտրողների թվաքանակը նույնպես փոքր էր նախորդ ընտրությունների համեմատ՝ չնայած ընտրատեղամասերում և նրանց շուրջ ներկայացվող բազմափառանոց հերթերին: Ընտրատեղամասեր բացվեցին Սիրիայի ոչ բոլոր հատվածներում, և ընտրություններ եղան այն տարածքներում, որտեղ կառավարական ուժերն էին: Պատերազմի պայմաններում ապրող և խորը ճգնաժամի մեջ գտնվող երկրում, որտեղ ռազմական գործողություններ էին ընթանում, որտեղ ամեն օր զոհեր էին գրանցվում, որտեղից միլիոնավոր սիրիացիներ ստիպված լքում էին իրենց բնակատեղիները, չէին կարող լինել նորմալ ընտրություններ, առավել ևս, որ տեղի ունեցած ընտրություններում

գրանցվեր սիրիական ժողովրդի իրական կամաարտահայտությունը*:

Նախագահական ընտրություններից հետո ակտիվ ռազմական գործողություններ գրանցվեցին Սիրիայի տարբեր հատվածներում: Խնդիրն այն էր, որ Հալեպի առանձին հատվածներ գտնվում էին ընդդիմադիրների վերահսկողության տակ: Այս շրջաններում, ինչպես նաև Հալեպի շրջակա որոշ բնակավայրերում ընդդիմադիր զինյալ խմբավորումները լավ դիրքավորված էին, և այստեղից բավական դյուրին էր զինյալների համար հրթիռակոծել և ուժեղացնել այն հատվածները, որտեղ կառավարական ուժերն էին: Քանի որ նախագահական ընտրությունները մոտենալուն պես ավելի սուր բնույթ էին կրում զինյալների կողմից ընտրությունների անցկացումը խոչընդոտելու հոետորաբանությունն ու այն ձախողելու մտադրությունը, պարզ էր դառնում, որ զինյալները կփորձեին իրենց ծրագրերն ի կատար ածել հենց Հալեպում: Ցավոք, զինյալ խմբավորումների համար որպես թիրախ ընտրվեցին նաև Հալեպի քրիստոնեական թաղամասերը, այդ թվում՝ հայաբնակ շրջանները, որի հետևանքով ունեցանք զոհեր:

2014 թ. սեպտեմբերի 23-ի վաղ առավոտյան առաջին անգամ ամերիկյան զինուժն իր կռալիցիոն գործընկերների օժանդակությամբ հրթիռակոծության ենթարկեց Սիրիայի տարածքում գտնվող մի շարք թիրախներ, այդ թվում՝ «Իսլամական պետություն» (ԻՊ) իսլամական ծայրահեղ արմատական կառույցի տե-

* Սիրիայի բնակչության մեծամասնությունը կենտրոնացած էր խոշոր քաղաքներում և դրանց շրջակայքում (Սիրիայի 9600 ընտրատեղամասերից մոտ 5500-ը կենտրոնացած էին Դամասկոսում և Հալեպում), և ընտրապայքարն էլ տեղի էր ունենալու վերոհիշյալ հատվածներում: Բացի դրանից՝ Բաշար ալ-Ասադի մրցակից թեկնածուները՝ Հասսան ալ-Նուրին և Մահիր Հաջարը, անձանթ էին սիրիական հասարակական լայն շրջանակներին, և չէին վայելում այն վստահությունն ու համակրանքը, որն ուներ Բաշար ալ-Ասադը այդ տարածքներում, ինչպես նաև ընտրությունների ելքի վրա իրենց ազդեցությունն է ունեցել նաև վարչական ռեսուրսների կիրառումը:

ղակայման վայրերը, ռազմակայանները և այլն: Զուգահեռաբար ԱՄՆ ռազմաօդային ուժերի ավիահարվածների թիրախում հայտնվեցին իսլամական ծայրահեղ արմատական մեկ այլ կառույցի՝ ՋՆ դիրքերը հյուսիսային Իդլիբ և Հալեպ նահանգներում: Ըստ տեղեկությունների՝ ամերիկյան ռազմաօդային ուժերը հրթիռակոծել էին նաև ՋՆ կազմի մեջ մտնող «Խորասանի խմբավորման» կայանատեղիները¹⁷: 2014 թ. վերջին ամերիկյան առաջին ավիահարվածները վկայեցին սիրիական հակամարտությունում ԱՄՆ անմիջական ներգրավվածության մասին, որն այդ փուլում արտահայտվեց օդային հարվածների տեսքով, իսկ հետագայում՝ արդեն ամերիկյան զինվորների առարկայական ներկայացվածությամբ Սիրիայի առանձին հատվածներում*:

2014 թ. սիրիական հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված արտասիրիական զարգացումներն աչքի չընկան ճգնաժամի շուտափույթ լուծմանը միտված որևիցե նշանակալի ձեռքբերմամբ: Սակայն 2014 թ. ընթացքում Մերձավոր Արևելքում, մասնավորապես Սիրիայում տեղ գտան որոշ զարգացումներ, որոնք այս կամ այն չափով իրենց ազդեցությունն ունեցան մերձավորարևելյան տարածաշրջանում և դրանից դուրս իրականացվող գործընթացների վրա: Տարվա սկզբից սիրիական կանոնավոր բանակը որոշ հաջողություններ արձանագրեց ընդդիմադիրների նկատմամբ Սիրիայի առանձին հատվածներում: Սիրիական հակամարտությունում էլ ավելի ակնառու դարձան ընդդիմադիր ճամբարում առկա հակասությունները, որոնք ռազմական լարված բախումների բնույթ ստացան: 2014 թ. սկզբին Սիրիայում ընդդիմադիր կառույցների շրջանում աչքի ընկավ «Իրա-

* Դա նաև վկայեց, որ Սիրիայում տեղի ունեցող զարգացումները, այդ թվում՝ իսլամական ծայրահեղական կառույցների ակտիվությունը, անմիջական սպառնալիք էին ԱՄՆ-ի համար, ինչը դրդեց ամերիկյան զինուժին ներքաշվել սիրիական զարգացումների մեջ:

քում և Շամում իսլամական պետություն» (ԻՇԻՊ) կառույցը, որը տարվա ընթացքում իր վերահսկողության տակ առավ Սիրիայի զգալի տարածքներ, այնուհետև, անցնելով սիրիա-իրաքյան սահմանը, նվաճեց Իրաքի որոշ հատվածը: Հունիսի 29-ին ԻՇԻՊ-ը վերանվանվեց «Իսլամական պետություն» (ԻՊ), վերահսկողության տակ առավ Սիրիայի և Իրաքի որոշ տարածքներ և հայտարարեց նոր խալիֆի՝ Աբու Բաքր ալ-Բադդադիի անունը¹⁸: Մերձավորարևելյան տարածաշրջանում գլուխ բարձրացրեց մի ուժ՝ «Իսլամական պետություն», որը ցրեց մերձավորարևելյան տարածաշրջանում երկար տարիներ արմատացած ամուր պետության և բանակի կարծրատիպերը՝ փոխարենն առաջարկելով շարիաթի նորմերի վրա հիմնված խալիֆայություն:

2014 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նկատվեց մեկ այլ նշանակալի իրադարձություն. սկսվեցին ԱՄՆ ղեկավարությամբ կոալիցիոն ուժերի ռազմական գործողությունները Սիրիայում և Իրաքում, որոնք իրականացվեցին օդային հարվածների տեսքով¹⁹:

Սիրիական հակամարտությունում, ռազմաքաղաքականից բացի, կար նաև տնտեսական բաղադրիչ: 2011-2014 թթ. հակամարտող կողմերի (ներսիրիական և արտասիրիական) գործողություններում տեսանելի էր նաև տնտեսական գործոնի ազդեցությունը: Տարածաշրջանի տնտեսական կարողությունների համապատկերում Սիրիան նոր ցուցանիշներ արձանագրեց, որտեղ առանցքային էին նոր էներգառեսուրսները:

Սիրիան ուներ նավթագազային զգալի պաշարներ (ըստ որոշ հետազոտությունների՝ Սիրիայի գազի պաշարները կազմում էին մոտ 285 մլրդ կ/մ, իսկ նավթի պաշարները՝ 2.5 մլն բարել): Մինչ ճգնաժամի սկիզբը էներգակիրների արտահանման ծավալների ավելացումը, նորանոր հանքավայրերի բացահայտումն ու շահագործումը զգալի ազդեցություն էին ունենում Սիրիայի

տնտեսական զարգացման վրա: Այս համատեքստում ավելորդ չէր լինի նշել, որ Սիրիայի միջերկրածովյան ավազանում հայտնաբերված գզալի քանակի գազի պաշարներն ու 2011 թ. հունիսի 25-ին Բուշերում Սիրիայի, Իրանի և Իրաքի միջև նոր գազամուղի կառուցման վերաբերյալ ստորագրված հուշագիրն ավելացրին Սիրիայի կշիռը մերձավորարևելյան տարածաշրջանի տնտեսական գործընթացներում: Վերոհիշյալ գազամուղը, որը պետք է սկսեր Կատարի և Իրանի միջև բաժանված հարավային Պարսից ծոցից, ձգվեր իրանական (մոտ 225 կմ), իրաքյան (մոտ 500 կմ) և սիրիական (մոտ 500-700 կմ) տարածքներով և անցներ Միջերկրական ծովի հատակով մինչև Հունաստան («Իսլամական գազամուղ»): Դրան զուգահեռ նախատեսվում էր կառուցել մեկ այլ գազամուղ՝ կատարյան գազը դեպի եվրոպական շուկա տեղափոխելու համար, որը, ձգվելով նույն հարավային Պարսից ծոցից, անցնելով Կատարի, Սաուդյան Արաբիայի, Հորդանանի տարածքներով, պետք է հասներ Սիրիա, որտեղ՝ Հոմսի մոտ, գազամուղը, բաժանվելով 3 ուղղությունների, այնուհետև շարժվելու էր դեպի սիրիական միջերկրածովյան Լաթակիա, լիբանանյան Տրիպոլի և շարունակվելու էր դեպի Թուրքիա: Վերոհիշյալ երկու գազամուղների մրցակցային պայքարում Սիրիայի՝ որպես տարանցիկ երկրի առանցքային դերակատարումը, անկասկած, պետք է անհանգստացներ վերոհիշյալ նախագծերի իրականացման մեջ շահագրգիռ արտասիրիական ուժերին, առավել ևս, որ Սիրիայի տարածքում առկա նավթագազային հանքահորերի, ինչպես նաև նախատեսվող և արդեն գործող նավթամուղների և գազամուղների գզալի հատվածը գտնվում էր կամ անմիջապես առնչվում ռազմական գործողությունների տարածքներին:

2014 թ. սկզբից Սիրիայի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում ընդդիմադիր իսլամական ծայրահեղական ուժերի միջև ծավալված արյունալի մարտերի, ինչպես նաև կառավարա-

կան ուժերի օդային հարվածներից զգալի կորուստներ կրած «Իրաքում և Շամում իսլամական պետություն» խմբավորումը, որը մինչ այդ բավական ակտիվ գործունեություն էր ծավալել վերոհիշյալ տարածքներում, ստիպված լքեց երկրի հյուսիսում իր զբաղեցրած շրջանները՝ շարժվելով դեպի Սիրիայի կենտրոնական տարածքներ՝ Դեր Զորի շրջան: Այստեղ դեռևս 2013 թ. կեսերից ԻՇԻՊ վերահսկողության տակ էին անցել նավթահանքեր, որոնց նավթի վաճառքից ստացվող զգալի եկամուտները լրացուցիչ բախումների պատճառ էին դարձել ընդդիմադիր իսլամական ծայրահեղական ուժերի համար: Այս տարածքներում ԻՇԻՊ առկայությունը հնարավորություն էր տալիս կառույցին վերահսկելու դեպի հյուսիս-արևելք ընկած քրդաբնակ շրջանների նավթահանքերի նավթամուղը, ինչպես նաև մոտ գտնվելու կառուցվելիք «Իսլամական գազամուղին»:

Հայացք գցելով այդ ժամանակաշրջանում ռազմական գործողությունների աշխարհագրության վրա՝ հստակորեն ուրվագծվում էին սիրիական հակամարտության թեժ կետերը, որոնք անմիջապես գտնվում էին Սիրիայի էներգակիրներով հարուստ տարածքներում կամ սահմանակից էին դրանց: Սիրիայում ռազմական գործողությունների մեջ ներքաշված մյուս ընդդիմադիր կառույցները՝ ՋՆ, «Իսլամական ճակատ», «Սիրիայի ազատ բանակ», «Ահրար ալ-Շամ» և այլն, ակտիվ էին Դամասկոս-Հոմս գծի երկայնքով, ինչպես նաև Դարայի, ալ-Կունայտրայի, ալ-Սուվայդայի և երկրի հարավային այլ շրջաններում: Վերոշարադրյալի համատեքստում պատահական չէր, որ նաև Կատարի ֆինանսական, ռազմական և գաղափարական աջակցությունը վայելող իսլամական որոշ արմատական խմբավորումների վերահսկողության տակ անցած, ինչպես նաև առավել կատաղի ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած սիրիական տարածքները համընկել էին կառուցվելիք կատարյան գազամուղի փո-

խաղրման երթուղու հետ: Համեմատելով Միրիայում տեղի ունեցող ռազմական գործողությունների և Միրիայի էներգետիկ ռեսուրսների ու վերջիններիս փոխաղրման քարտեզները՝ պարզ էր դառնում մի կողմից ռազմական ակտիվության, մյուս կողմից՝ սիրիական էներգակիրներով հարուստ տարածքների ու դրանց փոխաղրման ուղիների նկատմամբ վերահսկողություն ունենալու կապը, որը սիրիական հակամարտությունում ավելի հստակ ուրվագիծ էր ստանում: Այդ ժամանակահատվածում ներսիրիական ճգնաժամն ընդունեց մերձավորարևելյան տարածաշրջանային և գլոբալ աննախադեպ ընդգրկում, և սիրիական հակամարտության մեջ ներքաշված արտասիրիական ուժերի քանակը ստեղծեց պատերազմի մեջ ներգրավված ուժերի բազմազանություն, ինչն էլ ավելի դժվարացրեց ճգնաժամի հանգուցալուծումը²⁰:

ԳԼՈՒԽ II
ՄԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 2015-2020 ԹԹ.

**2.1. Միրիայի շուրջ տեղի ունեցող գործընթացներն ու սիրիական
հակամարտությունը 2015-2016 թթ.**

Միրիական հակամարտությունում 2015 թ. ընթացքում իշխանությունների գործողություններն աչքի չընկան արդյունավետությամբ, իսկ ռազմական գործողությունների հետևանքով սիրիական բանակը հիմնականում տարածքներ էր զիջում (ընդդիմադիր ուժերին, քրդերին): Ինչպես արդեն նշել ենք, 2012-2013 թթ. Բաշար ալ-Ասադի վարչակարգը որդեգրել էր սիրիական զինուժի հիմնական հատվածը խոշոր մարզկենտրոններում (հիմնականում հյուսիսարևմտյան, արևմտյան և հարավարևմտյան հատվածներում) կենտրոնացնելու, Հալեպ-Համա-Հոմա-Դամասկոս ռազմաճակատի գիծը հնարավորինս պահելու, վերոհիշյալ հատվածներում ընդդիմադիր խմբավորումների առաջխաղացումը կասեցնելու և օդային հարվածների միջոցով թուլացնելու մարտավարությունը: 2015 թ. սկզբին այդ մարտավարությունը սկսեց չարդարացնել իրեն, քանզի մարտերը թեժացան, և նկատվեց ընդդիմադիր կառույցների աննախադեպ ակտիվություն ինչպես հիշյալ տարածքներում, այնպես էլ Միրիայի այլ հատվածներում: Ռազմական գործողություններ էին տեղի ունենում երկրի հյուսիսային և հյուսիսարևմտյան հատվածներում՝ ալ-Ռակկա, Հալեպ և Իդլիբ, ինչպես նաև կենտրոնական և արևմտյան Համա, Հոմա, Դամասկոս նահանգներում, որտեղ մարտեր էին ընթանում Միրիայի կառավարական ուժերի և հակակառավարական տարաբնույթ զինված խմբավորումների միջև: Միրիայի հարավային ալ-Սուվայդա քաղաքում տեղի ունեցան ահաբեկչական պայթյուններ, որոնց հետևանքով զոհվեց 25 մարդ, այդ թվում՝ անթա-

քույց հակասասդական դիրքորոշմամբ հայտնի դրուզ հոգևորական Ուսահիդ ալ-Բալուսը: Հիշյալը ալ-Սուվայդայում դրուզների մասնակցությամբ հակաիշխանական աննախադեպ ցույցերի պատճառ դարձավ, որոնց ընթացքում դրուզներն առաջին անգամ հարձակումներ իրականացրին պետական կառույցների տեղաբաշխման վայրերի և շինությունների դեմ, վնասվեցին նաև Բաշար ալ-Ասադի հոր՝ Հաֆիզ ալ-Ասադի արձանները²¹: Նույն ժամանակահատվածում ԻՊ զինյալները առաջխաղացում արձանագրեցին Դամասկոսի նահանգում: Հալեպ նահանգի հյուսիսում՝ ռազմավարական կարևորություն ունեցող Մարաա քաղաքում, ԻՊ և այլ ընդդիմադիր խմբավորումների զինյալների միջև տեղի ունեցան բախումներ, որոնց հետևանքով սպանվեց 47 զինյալ: Այդ ընթացքում ԻՊ-ի դեմ պայքարող միջազգային ռազմական կոալիցիան առավել ակտիվացրեց ծայրահեղական կառույցի դիրքերի հրթիռակոծությունները: Մինևույն ժամանակ սիրիական կառավարական ուժերը որոշակի հաջողություններ արձանագրեցին Դամասկոսի նահանգի՝ ալ-Ջաբադանիի հարավարևելյան ուղղությամբ: Ալ-Ջաբադանիի մոտ տեղի ունեցած բախումների հետևանքով սպանվեցին ինչպես ԻՊ, այնպես էլ լիբանանյան «Հիզբալլահ» շիայական արմատական կազմակերպության զինյալներ, որոնք կովում էին Բաշար ալ-Ասադի իշխանության կողքին: Ընդդիմադիր «Ջայշ ալ-Իսլամ» խմբավորումը հրթիռակոծեց մայրաքաղաք Դամասկոսի քրիստոնեական Ջարամանա և Բաբ Թումա թաղամասերը²²: Լաթակիայի արևելյան և հյուսիսային հատվածներում կառավարական ուժերի և ընդդիմադիր զինյալ խմբավորումների միջև տեղի ունեցած բախումների հետևանքով ընդդիմադիրների շրջանում ևս գրանցվեցին զոհեր: Հարավային ալ-Կունայտրա նահանգում կառավարական ուժերին հաջողվեց կասեցնել ՋՆ առաջխաղացումը և ոչնչացնել նշյալ կառույցի որոշ կայանատեղիներ Դարաայում: Այդ ժամանակ ա-

րաբական և արևմտյան մի շարք փորձագիտական շրջանակների և լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում հայտնվեց Սիրիայում Ռուսաստանի ռազմական ներկայության ընդլայնման թեման: Ավելին, թեմայի շուրջ հեռախոսազրույց տեղի ունեցավ ԱՄՆ և ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների միջև, որի ընթացքում ամերիկյան կողմը խիստ մտահոգություն հայտնեց Ռուսաստանին՝ ընդգծելով, որ Լաթակիայում ռուսական ռազմական ներկայության ընդլայնումը կարող էր էլ ավելի ապակայունացնել իրավիճակը Սիրիայում*:

Պետք է փաստել, որ 2015 թ. առաջին ամիսներին իսլամականների ակտիվությունը Սիրիայի տարբեր հատվածներում ոչ միայն մարտահրավեր էր Սիրիայի տարածքային ամբողջականությանը, այլ նաև վտանգի առաջ կանգնեցրեց երկրի պատմամշակութային ժառանգությունը, որի մի մասը մնացել էր իսլամականների կողմից վերահսկվող տարածքներում: Այդ ժամանակ հուշարձանների և պատմական արժեքավոր ժառանգության զգալի հատվածը գտնվում էր ռազմական լարված գործողությունների հատվածում, և դրանք հեշտությամբ թիրախավորվում էին՝ վերածվելով կողոպտիչների գողոնի: Ծայրահեղ արմատական գաղափարներով առաջնորդվող խմբավորումները չէին կարող անտարբեր մնալ նման հուշարձանների նկատմամբ, որոնց զգալի հատվածը, ըստ իսլամականների, բազմաստվածության ու անհավատության ժամանակաշրջանի հուշարձաններ էին, հետևաբար պետք է ոչնչացվեին: Բացի դրանից՝ այդ ժամանակ բազում տվյալներ ի հայտ եկան այն մասին, որ իսլամականները վաճառում են պատմամշակութային հնաոճ իրեր՝ դրանից ստանալով

* Հետագայում՝ 2015 թ. սեպտեմբերին, տեղի ունեցավ ռուսական անմիջական ներգրավում սիրիական հակամարտության մեջ: Ռուսական առարկայական ներկայությունն ու զինուժի ավելացումը կյանքի կոչվեցին Բաշար ալ-Ասադի խնդրանքով, որը փոխեց սիրիական հակամարտության ողջ ընթացքը:

միլիոնավոր դոլարների հասնող շահույթներ²³: 2015 թ. մայիսի կեսերից Սիրիայի կենտրոնում տեղակայված Թադմուր քաղաքը, որտեղ գտնվում էին անտիկ ժամանակաշրջանի ամենահարուստ քաղաքներից մեկի՝ Պալմիրայի մնացորդները, հայտնվեց ԻՊ զինյալների հարձակման թիրախում: Սիրիական կառավարական ուժերը բնակավայրի մոտ կենտրոնացրել էին զգալի ներուժ՝ փորձելով դիմակայել մի քանի ուղղություններից իրենց վրա հարձակվող իսլամականներին, սակայն մայիսի 20-ին իսլամականներն ամբողջությամբ նվաճեցին Թադմուրը^{*}: Թադմուրն իսլամականներին հետաքրքրում էր ոչ միայն Պալմիրայի հուշարձանների համար: Կային այլ պատճառներ, որոնք դրդեցին իսլամականներին ռազմական ակտիվության Սիրիայի այդ հատվածում: Այստեղ էին գտնվում սիրիական կառավարության տիրահռչակ բանտերից մեկը՝ Թադմուրի բանտը, նաև ռազմաբազան: Տեղի բնակչության ընկալումներում դրանք ասոցացվում էին Ասադների «բռնապետական» վարչակարգի հետ: Իսլամականների առաջին քայլը վերոհիշյալ բանտն ու ռազմաբազան գրավելն էր, ինչն էլ իրենք իրականացրին: Բացի դրանից՝ Թադ-

^{*} Պալմիրայում (Թադմուր) հին հռոմեական ճարտարապետության լավագույն նմուշների և հնագույն շինությունների մնացորդները ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվել են համաշխարհային ժառանգության հուշարձաններ: Դրանց մեջ էին մտնում հնագույն քաղաքի գլխավոր ճանապարհի երկայնքով վեր խոյացող սյուներն ու մոնումենտալ կամարները: Առավել նշանակալի շինություններից էին տեղի բարձրագույն աստվածության՝ Բելի ու Բալշամինի տաճարները, թատրոնը, քարավանատունը և այլն, որոնք թիրախավորեցին իսլամականները: Պետք է նշել, որ ԻՊ զինյալները հիմնականում ոչնչացնում էին այն հուշարձանները, որոնք ժամանակին ծառայել էին որպես հնագույն աստվածությունների երկրպագության վայրեր, սրբատեղիներ, դամբարաններ, գերեզմանատներ: Թիրախավորվում էին այն շինությունները, որոնք ժամանակին ծառայել էին որպես երկրպագության վայրեր, և ըստ ԻՊ աստվածաբան-կրոնագետների՝ «կասկածի տակ են դնում միաստվածության գաղափարը»: Այս առումով եղել են մի շարք հնագույն հուշարձաններ, որոնք նախկինում երկրպագման վայրեր չէին եղել ու անվնաս մնացին:

մուրը գտնվում էր ռազմավարական կարևոր դիրքում, Սիրիայի կենտրոնում, որտեղից բացվում էր սիրիական առանցքային արևմտյան մարզկենտրոններ տանող ճանապարհը²⁴:

Սիրիական հակամարտության ընթացքում բազում տեղեկություններ և փաստեր են ի հայտ եկել, որոնք վկայել են Թուրքիա-իսլամականներ «համագործակցության» մասին Սիրիայում: Թուրքիան սիրիական հակամարտության սկզբում աջակցել է ընդդիմադիր ճամբարին, նույնիսկ գործուն մասնակցություն ունեցել սիրիական ընդդիմության ինստիտուցիոնալ և ռազմական կայացման գործում²⁵: 2014-2015 թթ. ընդդիմությանը տրվող թուրքական իշխանությունների աջակցությունն ուներ կոնկրետ հասցեատերեր (դրանք հիմնականում սիրիական հակամարտության մեջ ներգրավված թուրքական խմբավորումներն էին և մի քանի իսլամական ծայրահեղական ուժեր): 2013 թ. կեսերից ԻՊ-ն այլևս չէր դասվում Թուրքիայից աջակցություն ստացող ընդդիմադիր խմբավորումների շարքին: 2015 թ. սկզբին Թուրքիան միացավ միջազգային կոալիցիային և սկսեց օդային հարվածներ հասցնել ԻՊ կայանատեղիներին Սիրիայում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ.

- «Իսլամական պետության» դեմ հայտարարված պայքարը, որի առաջնագծում Թուրքիայի դաշնակից ԱՄՆ-ն էր, չէր կարող անտարբեր թողնել Անկարային:
- Իր սահմանին (Թուրքիայի հետ սահմանակից Սիրիայի և Իրաքի որոշ հատվածներ) իսլամական ծայրահեղ արմատական սկզբունքների վրա կառուցված բավական վտանգավոր «Իսլամական պետություն» ունենալու հանգամանքը չէր կարող չանհանգստացնել Թուրքիային:
- Դեպի Սիրիա և Իրաք իսլամականների հիմնական հոսքն անցնում էր Թուրքիայով (ինչպես նաև թուրքական տարածքներում էր ընկած իսլամականների ետադարձ ճա-

նապարհը): Թուրքիայում իսլամականների աճող ներկայությունն ու ահաբեկչությունների վտանգը դարձան իսկական գլխացավանք ու սպառնալիք թուրքական իշխանությունների համար:

Եթե ԻՊ-Թուրքիա համագործակցությունն այլևս հնարավոր չէր 2014-2015 թթ., ապա 2015 թ. վերջին հաճախակի էին հանդիպում տեղեկություններ, մի կողմից, սիրիական ընդդիմադիր ճամբարի առանցքային այլ դերակատարների՝ ՋՆ-ի և «Ահրար ալ-Շամի», մյուս կողմից՝ թուրքական իշխանությունների միջև գոյություն ունեցող համագործակցության վերաբերյալ: Իսլամական ծայրահեղ արմատական գաղափարախոսությամբ առաջնորդվող վերոհիշյալ կառույցները ԻՊ-ի հետ միասին ամենաազդեցիկ խմբավորումներից էին սիրիական հակամարտությունում: Միրիայում «ալ-Կաիդայի» պաշտոնական ճյուղավորումը հանդիսացող ՋՆ-ի և թվաքանակով ամենամեծ իսլամական կառույցի՝ «Ահրար ալ-Շամի» ջիհադական պայքարի սահմանները ընդգրկում էին հիմնականում Միրիայի հյուսիսային շրջանները (Թուրքիայի հետ սահմանամերձ սիրիական հատվածները): Թուրքիան իր ուշադրության կենտրոնում էր պահել հիշյալ իսլամական կառույցներին դեռևս 2015 թ. սկզբին, երբ ընդդիմադիրները լայնամասշտաբ ռազմական հարձակման անցան մի քանի ուղղություններով՝ հարձակվելով Թուրքիայի հետ սահմանակից Իդլիբ նահանգի համանուն կենտրոնի և հարակից բնակավայրերի վրա: Այդ հարձակման առաջնագծում ՋՆ և «Ահրար ալ-Շամ» կառույցներն էին: 2015 թ. մարտի վերջում Իդլիբ մարզկենտրոնն ու դեպի արևմուտք ընկած մի քանի բնակավայրեր անցան ընդդիմադիրների վերահսկողության տակ: 2015 թ. մայիս-հունիս ամիսներին չնվազեց ընդդիմադիր խմբավորումների ռազմական ակտիվությունը նաև Հալեպի շրջանում՝ շարունակելով ռմբակոծությունները նաև քաղաքի կառավարական ուժերի կողմից վե-

րահսկվող հայաբնակ թաղամասերի ուղղությամբ: Ընդդիմադիրների հիշյալ ռազմական հաջողությունները չէին կարող լինել առանց Թուրքիայի լոգիստիկ և այլ բնության աջակցության²⁶:

Սիրիայի հյուսիսում կառավարական ուժերի դեմ պայքարող իսլամականների շրջանում նկատվեցին բազմաթիվ թյուրքական ծագում ունեցող իսլամական խմբավորումներ: Հիմնականում թյուրքերով (թուրքեր, ադրբեջանցիներ, թաթարներ և այլն) և չեչեններով համալրված իսլամական ծայրահեղական խմբավորումների թվաքանակի ավելացում նկատվեց հատկապես Հալեպի և Իդլիբի սիրիական նահանգներում և հյուսիսային այլ շրջաններում: Թյուրքեր ընդգրկված էին նաև ՋՆ և «Ահրար ալ-Շամ» խմբավորումների կազմում: Թուրքիան սահմանակից սիրիական տարածքների վերաբերյալ ուներ սեփական ծրագրերը: Անկարան միշտ փորձել է իր ուշադրության կենտրոնում պահել սիրիական տարածքները բնակեցնող թուրքոմաններին՝ փորձելով ամրապնդել վերջիններիս դիրքերն այս տարածքներում՝ ձգտելով խորացնել նրանց նկատմամբ թուրքական իշխանությունների ազդեցությունը: Դրանով էին պայմանավորված նաև սիրիա-թուրքական սահմանագծի երկայնքով Թուրքիայի կողմից աջակցություն ստացող, ծագումով թյուրք իսլամականների թվաքանակի ավելացումն ու ակտիվությունը: Թուրքական իշխանությունների կողմից թյուրքերով և չեչեններով համալրված հիշյալ իսլամական խմբավորումների ուղղորդման մասին էին խոսում նաև այդ կառույցները ղեկավարող մի շարք առանցքային իսլամական լիդերների Թուրքիայում լինելու և սիրիա-թուրքական սահմանամերձ շրջաններում ռազմական ճամբարներ ունենալու փաստերը²⁷:

Թուրքական իշխանությունների կողմից տրվող աջակցության (քաղաքական, ռազմական, ֆինանսական) և սիրիական ընդդիմադիր ճամբարում ընթացող գործընթացներում ակտիվ

ներգրավվածության շնորհիվ Սիրիայի թուրքոմանները փորձեցին հակամարտության ընթացքում որոշակի ազդեցիկ դիրքեր ստանձնել սիրիական ընդդիմության շրջանում, իհարկե, նաև Թուրքիայի աջակցության շնորհիվ: Այդ համատեքստում ընդդիմադիր ճամբարը ներկայացնող որոշ կառույցներում ներկայացված էին նաև թուրքոմաններ, օրինակ՝ «Սիրիայի ազգային խորհրդում»՝ 16 տեղ, «Սիրիայի հեղափոխական և ընդդիմադիր ուժերի ազգային կոալիցիայում»՝ 3 տեղ և այլն: Բացի դրանից՝ Սիրիայի թուրքոմանների շրջանում ստեղծվել էին մի շարք կառույցներ, ինչպես, օրինակ, «Սիրիայի թուրքոմանների դեմոկրատական շարժումը», «Սիրիայի թուրքոմանների ազգային դաշինքը», «Սիրիայի թուրքոմանների պլատֆորմը» և այլն: Անկարայի անմիջական մասնակցությամբ թուրքոմանների գործողությունների համակարգման և միասնական դիրքերից հանդես գալու նպատակով 2013 թ. ստեղծվեց «Սիրիայի թուրքոմանների ասամբլեան», որում ներգրավված էին մեծ թվով քաղաքական կառույցներ, ինչպես նաև ռազմական խմբավորումներ:

Սիրիական իշխանությունների դեմ պայքարող թուրքոմանների խմբավորումների կազմում ներգրավված էր մոտ 10.000 զինյալ, որոնց հիմնական հատվածը մասնակցել էր Լաթակիա, Իդլիբ և Հալեպ նահանգների որոշ հատվածներում իրականացվող ռազմական գործողություններին: Սիրիայի թուրքոմաններից բաղկացած ընդդիմադիր խմբավորումները մտնում էին ինչպես ընդդիմադիր չափավոր (հիմնականում «Սիրիայի ազատ բանակի» կազմում), այնպես էլ բավական ազդեցիկ իսլամական արմատական կառույցների մեջ:

Սիրիական հակամարտության ընթացքում թուրքոմաններից բաղկացած խմբավորումներից հատկապես աչքի են ընկել.

- «Երկրորդ ափամերձ ստորաբաժանումը», որը բաղկացած էր մոտ 1000-1500 զինյալից և դեկավարվում էր Բաշար

Մուլլանի կողմից: Խմբավորումը ներառում էր նաև «Յալդրամ Բայազեդ», «Մուլթան Աբդուլ Համիդ» և այլ ջոկատներ:

- «Ջաբալ ալ-Թուրքման» կառույցը, որը ներառում էր 12 փոքր խմբավորում:

Բացի վերոհիշյալ խմբերից՝ Սիրիայի հյուսիսարևմտյան հատվածներում ակտիվ պայքար էին մղում «Մուլթան Մուրադ», «Ադբուլ Համիդ I» և թյուրք իսլամականներից բաղկացած այլ խմբավորումներ²⁸:

Թուրքմանների հետ էթնիկ-դավանական և լեզվական ընդհանրությունները գրավում էին ծագումով թյուրք իսլամականներին (թուրքեր, թաթարներ, ուզբեկներ, ույղուրներ, ադրբեջանցիներ և այլն), որոնք ակտիվորեն գործում էին Սիրիայի թուրքմաններով բնակեցված տարածքներում: Պատահական չէր, որ ադրբեջանցի իսլամականները հիմնականում ներգրավված էին Թուրքիայի հետ սահմանային հյուսիսարևմտյան սիրիական հատվածներում իրականացվող ռազմական գործողություններում*: Թյուրքական ներուժը ռազմական աջակցություն և ֆինանսավորում էր ստանում առաջին հերթին Անկարայից, որը, Սիրիայի հյուսիսարևմտյան հատվածների հետ կապված, ուներ սեփական տեսլականը:

2015 թ. վերջին Սիրիայում տեղի ունեցավ մի գործընթաց, որին գործուն մասնակցություն բերեց Ռուսաստանը. դա սիրիական իշխանություններին տրված ռուսական անմիջական ռազմական օգնությունն էր: Այդ համատեքստում սիրիական հակամարտությունը կարելի է բաժանել երկու մեծ փուլերի՝ մինչև ռուսական զինուժի անմիջական ներգրավումը և դրանից հետո: 2015 թ. սեպտեմբերին Սիրիայի կառավարությունը ընդդիմադիր

* Սիրիական հակամարտությունում ներգրավված ադրբեջանցի իսլամականներին անդրադարձ է կատարվել մենագրության 3-րդ գլխում:

խմբավորումների դեմ պայքարելու համար ռազմական օգնության խնդրանքով դիմեց Ռուսաստանին²⁹: Սիրիական հակամարտությունում ռուսական զինուժի ռազմական միջամտությունը սկսվեց 2015 թ. սեպտեմբերի վերջից օդային թեժ հարվածների տեսքով: Հետագայում ռուսներն ավելացրին իրենց ռազմական ներկայությունը Սիրիայում՝ սպառազինություն ու զինուժ տեղակայելով Տարտուս և Հմեյմիմ ռազմաբազաներում, ակտիվորեն ներքաշվելով օդային ու ցամաքային ռազմական գործողություններում³⁰:

2015 թ. սեպտեմբերին Մոսկվային ուղղված սիրիական իշխանությունների ռազմական օգնության խնդրանքը վկայեց, որ սիրիական բանակն այլևս ի վիճակի չէր արդյունավետ պայքար մղել ընդդիմադիրների դեմ, սիրիական ռազմաօդային ուժերի հարվածները բավարար չէին կասեցնելու ընդդիմադիրների առաջխաղացումը, և Բաշար ալ-Ասադի իշխանությանն անհրաժեշտ էր ռուսական ուժային աջակցություն: Ռուսական օդուժի հրթիռակոծությունները ստիպեցին ընդդիմադիր խմբավորումներին չշարունակել առաջխաղացումը դեպի սիրիական իշխանությունների համար կենսական նշանակություն ունեցող հյուսիսարևմտյան, արևմտյան և հարավարևմտյան տարածքների ուղղությամբ՝ դրդելով իսլամականներին կանգ առնել և շարժվել դեպի արևելք: Այդ ավիահարվածներին զուգահեռ սիրիական կառավարական ուժերն ու դրանց հովանու տակ գործող շիայական խմբավորումները ցամաքային գործողություն սկսեցին Հալեպի ուղղությամբ, ինչպես նաև Սիրիայի այլ հատվածներում: Այդ տարածքներում իրավիճակը կտրուկ փոխվեց հոգուտ կառավարական ուժերի, ինչը զգալի ազդեցություն ունեցավ սիրիական հակամարտության հետագա ընթացքի վրա:

2015 թ. նոյեմբերին սիրիա-թուրքական հյուսիսարևմտյան սահմանային հատվածում տեղակայված ընդդիմադիրների դեմ

սիրիական կառավարական ուժերի առաջխաղացման ժամանակ գրանցվեց մի միջադեպ, որը սրեց ռուս-թուրքական հարաբերությունները: Նոյեմբերի 24-ի առավոտյան Թուրքիայի հետ սահմանամերձ հատվածում թուրքական օդուժի կողմից խոցվեց Ռուսաստանի զինված ուժերի Սու-24Մ ռմբակոծիչ³¹: Թուրքիայի նախագահ Էրդողանը հայտարարեց որ չեն իմացել, որ ինքնաթիռը պատկանել է ռուսական օդուժին՝ ավելացնելով, որ ինքնաթիռը պարբերաբար խախտել էր թուրք-սիրիական սահմանը՝ չարձագանքելով զգուշացումներին: Միջադեպին ռուսական կողմի արձագանքը բավական կոշտ էր. Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը այն բնութագրեց որպես «հարված թիկունքից», հայտարարեց Թուրքիայի հետ հարաբերությունները դադարեցնելու և տնտեսական պատժամիջոցներ սահմանելու մասին, Թուրքիային մեղադրեց ահաբեկչությանը սատարելու մեջ: Թուրքիային ուղղված մեղադրանքներից բացի՝ Պուտինի ելույթում մի կարևոր միտք ևս հնչեց՝ կապված Միրիայի այս հատվածում ռուսաստանցի ծայրահեղ արմատականների կուտակումների: Միրիայի հյուսիս-արևմուտքում կենտրոնացած էին թյուրքերով համալրված իսլամական խմբավորումներ, որոնց շարքերում շատ էին ռուսաստանցիները: Այդ խմբավորումների ակտիվությունը հիշյալ սիրիական տարածքներում կապված էր նաև Անկարայի նպատակների հետ, այն է՝ ապահովել թուրքոմանների և թյուրք իսլամականների ակտիվ ներկայությունը Միրիայի հյուսիսարևմտյան հատվածներում: Ավելորդ չէ նշել, որ թուրքական օդուժի կողմից խոցված ռուսական ինքնաթիռի օդաչուներից մեկն ընկել էր թուրքոմանների կողմից վերահսկվող տարածքում և սպանվեց հենց նրանց ձեռքով, որոնք էլ հետագայում թուրքական իշխանություններին հանձնեցին ռուս օդաչուի դին³²: Սա ևս մեկ ան-

գամ խոսում էր Թուրքիա-սիրիական թուրքումաններ անմիջական կապի մասին*:

Սիրիայում ռազմական գործողությունների և թեժ բախումների համապատկերում 2015 թ. վերջին միջազգային հարթակներում սիրիական հակամարտության կարգավորմանն ուղղված որոշ փորձեր արվեցին: Դեկտեմբերի 18-ին ՄԱԿ ԱԽ-ն միաձայն ընդունեց սիրիական հակամարտության հանգուցալուծման վերաբերյալ բանաձև, որի համաձայն՝ ՄԱԿ գլխավոր քարտուղարին հանձնարարվեց 2016 թ. հունվարին կազմակերպել բանակցություններ սիրիական ներկայիս իշխանությունների և ընդդիմության միջև, որտեղ պետք է քննարկվեին անցումային կառավարության, նոր սահմանադրության ընդունման և ընտրությունների անցկացման հարցերը³³: ՄԱԿ ԱԽ միաձայն ընդունած բանաձևը խոսում էր միջազգային հանրության մոտ նկատվող սիրիական հակամարտության կարգավորմանը միտված դրական տեղաշարժերի մասին: Այն ենթադրում էր կրակի դադարեցում և 2016 թ. հունվարին հակամարտող կողմերի միջև բանակցային գործընթաց, որից հետո պետք ձևավորվեր անցումային կառա-

* Սիրիայում թուրքումանները հիմնականում բնակվում էին հյուսիսարևմտյան հատվածներում՝ Ջաբալ ալ-Թուրքման շրջանում (Լաթակիայի հյուսիս-արևելքում), Հալեպում, Իդլիբում (թուրքական սահմանի երկայնքով), ինչպես նաև Հոմս, Դամասկոս, Դարաա, ալ-Կունայտրա նահանգներում: Թուրքումանների թիվը մինչ սիրիական հակամարտության սկիզբը կազմում էր մոտ 200.000 (Սիրիայի թուրքումանների գնահատականների համաձայն՝ թուրքումանները շատ ավելի մեծ թիվ են կազմում՝ մոտ 1-3 մլն), որոնց հիմնական հատվածը հանդես է գալիս սիրիական իշխանությունների դեմ՝ ձևավորելով Թուրքիայից օժանդակություն ստացող կառույցներ և խմբավորումներ: Սակայն իրողությունն այն էր, որ սեպտեմբերի 30-ից Սիրիայի այդ հատվածում ռուսական օդուժի ակտիվ ներգրավվածությունը, դրան գումարած՝ նաև ռուսական ինքնաթիռի խոցման միջադեպն ու դրա հետևանքները խառնում էին Անկարայի խաղաքարտերը: Թուրքական իշխանությունների հաշվարկներում դժվարություն էին ստեղծում նաև Սիրիայի թուրքումանների քիչ թվաքանակն ու սիրիական տարբեր հատվածներում թուրքումանների ցրվածությունը:

վարություն: Հուսադրող էր նաև Ռուսաստանի և ԱՄՆ պատրաստակամությունը՝ համագործակցելու սիրիական խնդրի շուտափույթ հանգուցալուծման ուղղությամբ: Դա պայմանավորված էր առաջին հերթին ցամաքում տիրող իրավիճակով և այստեղ իսլամական ծայրահեղ արմատական կառույցների ակտիվությամբ: Նյու Յորքում որոշակի փոփոխություն նկատվեց Սիրիայի ներկայիս իշխանությունների, հատկապես Բաշար ալ-Ասադի հետագա ճակատագրի վերաբերյալ կողմերի ունեցած դիրքորոշումներում, որտեղ նախկինում կար անհամաձայնություն: Նյու Յորքում ընդունված բանաձևում նշվում էր, որ «Սիրիայի ժողովուրդը կորոշի երկրի ապագան», իսկ ԱԽ Ռուսաստանի և ԱՄՆ արտգործնախարարների հայտարարություններում միայն ակնարկներ հնչեցին Սիրիայի նախագահի վերաբերյալ, ոչ ավելին: Բացի դրանից՝ Մոսկվան կողմ էր հանդես եկել սիրիական որոշ ընդդիմադիր կառույցների ներգրավվածությանը սիրիական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում, ինչը նախկինում չէր նկատվում: Այդ ժամանակ հիմնական խնդիրն այն էր, թե ինչպես ներգրավել ընդդիմադիր ճամբարը ներկայացնող վստահելի ուժերին բանակցային գործընթացի մեջ, առավել ևս, որ սիրիական ընդդիմության մեջ ակտիվ և բավական ազդեցիկ էին իսլամական ծայրահեղ արմատական ուժերը, որոնք այլ նպատակներ էին հետապնդում Սիրիայում: Բանաձևում ահաբեկչական որակվող կառույցների շարքում հիշատակվում էին միայն ԻՊ և ՋՆ խմբավորումները՝ սահմանափակվելով միայն ընդհանուր բնորոշումներով Սիրիայում կռվող այլ նմանատիպ կառույցների դեպքում: Սակայն պետք է փաստել, որ մի շարք ընդդիմադիր ուժեր հանդես եկան հայտարարություններով, որոնք աչքի չէին ընկնում ՄԱԿ ընդունած բանաձևի վերաբերյալ լավատեսությամբ:

Միրիական հակամարտության վերաբերյալ Նյու Յորքում ընդունված բանաձևը կառուցողական բնույթ ուներ: Ըստ բանաձևի՝ նախատեսվում էր հակամարտող կողմերի միջև բանակցությունների անցկացում ՄԱԿ-ի հովանու ներքո, սակայն շատ բան կախված էր նրանից, թե որքանով կառուցողական կլինեին հենց Միրիայում հակամարտող կողմերի մոտեցումները ներսիրիական զարգացումներում:

2015-2016 թթ. ընթացքում քրդերը շարունակում էին ակտիվություն ցուցաբերել Միրիայի հյուսիսային հատվածներում: Միրիայում 2015 թ. ընթացքում նկատվող իսլամականներ-քրդեր հակամարտությունում առավելությունը քրդերի կողմն էր, որոնք աստիճանաբար զարգացնում էին հաջողությունները՝ նվաճելով տարածքներ հատկապես ԻՊ-ից, ինչպես ալ-Հասաքա նահանգի հարավում, այնպես էլ Եփրատ գետի արևմտյան ափին (քրդերի ակտիվությունը հատկապես Եփրատ գետի արևմտյան հատվածում անցանկալի դիտարկվեց թուրքական իշխանությունների կողմից): Եփրատ գետի արևմտյան հատվածում ստեղծված իրավիճակը դրդեց Թուրքիային նախաձեռնել առաջին բացահայտ ռազմական գործողությունը Միրիայի տարածքում: Այդ գործողության նպատակն այդ պահին Միրիայի տարածքների նկատմամբ վերահսկողության հաստատումը չէր, այլ թուրքական բանակի առջև դրված կոնկրետ ռազմական առաջադրանք էր, որի իրականացման հանգամանքներն ուշադրության են արժանի: Թուրքական զինուժի այդ օպերացիան նախաձեռնվեց 2015 թ. փետրվարին, որի նպատակն էր Միրիայի հյուսիսում գտնվող թուրքերի նախապապ Սուլեյման Շահի դամբարանից վերջինիս մասունքների տեղափոխումը քրդեր-իսլամականներ ռազմական բախումների թատերաբեմից հեռու՝ առավել ապահով վայր³⁴: Հիշյալ ռազմական գործողությունը թուրքական զինուժը կարողացավ կյանքի կոչել տեղի ուժերի, մասնավորապես քրդերի հետ

պայմանավորվածության արդյունքում (հետագայում նույն թուրքական ու քրդական ուժերի միջև հակասությունների և բազմաթիվ ռազմական ընդհարումների ականատեսը եղանք Սիրիայի հյուսիսային տարբեր հատվածներում):

Պետք է փաստել, որ 2015 թ. սկզբից ԻՊ Սիրիայում սկսեց զիջել տարածքներ (բացառություն էին Պալմիրայի նվաճումն ու արևմտյան ուղղությամբ առաջխաղացումը): Իսլամականների առաջին խոշոր պարտությունը սկսվեց քրդաբնակ Քոբանիից, որն ազատագրվեց քրդական ուժերի կողմից տարվա սկզբում: Քրդերը զարգացրին հաջողությունն ու ընդլայնեցին իրենց կողմից վերահսկվող տարածքները Սիրիայում: Արևմուտքում Եփրատը դարձավ «Իսլամական պետության» և քրդական տարածքների միջև բաժանարար գիծը, իսկ հարավում և արևելքում այդ գիծն անցնում էր Սիրիայի ալ-Ռակկա և ալ-Հասաքա նահանգների որոշ հատվածներով: Քրդական ստորաբաժանումներն իրենց ուժերն առավելապես կենտրոնացրին իսլամականների դեմ արևելքում և հարավում ծավալվող պայքարում: Քրդերի ակտիվության արդյունքը եղավ քրդաբնակ Քոբանիի և ալ-Հասաքայի միջև գտնվող Թալ Աբյադի նվաճումն ԻՊ-ից ու հիշյալ քրդաբնակ տարածքների միավորումը 2015 թ. հունիսին: Տարեսկզբից պարզ էր, որ սիրիական վարչակարգը որդեգրել էր երկրի արևմտյան հատվածը, այդ թվում՝ խոշոր մարզկենտրոնները վերահսկողության տակ պահելու մարտավարությունը, որտեղ կենտրոնացած էր Սիրիայի բնակչության զգալի հատվածը: Այնուամենայնիվ, ընդդիմադիր խմբավորումներն աստիճանաբար առաջխաղացում էին արձանագրում հյուսիսարևմտյան, արևմտյան և հարավարևմտյան ուղղություններով, մասնավորապես Հալեպի, Իդլիբի, Հոմսի, Դամասկոսի, ալ-Կունայտրայի և այլ նահանգներում: Շուտով սիրիական վարչակարգի որդեգրած մարտավարությունն ապացուցեց իր խոցելիությունը: Դրա վառ վկայությունն

եղավ Սիրիայի հյուսիսարևմտյան Իդլիբ նահանգի համանուն մարզկենտրոնի անցնելն ընդդիմադիր ուժերին (ալ-Ռակկայից հետո Իդլիբը դարձավ երկրորդ մարզկենտրոնը, որն անցավ ընդդիմադիրների վերահսկողության տակ) և վերջինների հետագա ռազմական հաջողությունները երկրի տարբեր հատվածներում, այդ թվում՝ մայրաքաղաք Դամասկոսի ուղղությամբ: Ստեղծված բարդ իրավիճակն էր պատճառը, որ սիրիական իշխանությունները ռազմական օգնության խնդրանքով դիմեցին Ռուսաստանին, որը սեպտեմբերի 30-ից ակտիվորեն ներգրավվեց սիրիական հակամարտության մեջ՝ օդային հարվածներ իրականացնելով ընդդիմադիր որոշ ուժերի կայանատեղիներին: Դրան զուգահեռ Սիրիայում շարունակվում էին նաև ԱՄՆ կողմից ղեկավարվող կոալիցիոն օդուժի ավիահարվածներն իսլամականների դիրքերին:

Իրավիճակը Սիրիայում և տարածաշրջանում էլ ավելի լարված բնույթ ստացավ սիրիա-թուրքական սահմանին թուրքական օդուժի կողմից ռուսական ռազմական ինքնաթիռի խոցման և օդաչուներից մեկի սպանության պատճառով, որի հետևանքը եղավ ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացումը 2015 թ. վերջին:

2015 թ. ցույց տվեց, որ սիրիական հակամարտությունը դադարել էր լինել սոսկ Մերձավորարևելյան տարածաշրջանում ընթացող գործընթացների մաս: Միջազգային հանրությունն անմիջապես իր վրա զգաց ահաբեկչության, փախստականների, ավելացող իսլամական ծայրահեղ արմատական տրամադրությունների ազդեցությունը: Այդ էր պատճառը, որ 2015 թ. վերջին ակտիվ քայլեր նախաձեռնվեցին սիրիական հակամարտության հանգուցալուծման ուղղությամբ: Դեկտեմբերին ՄԱԿ անվտանգության խորհրդի կողմից միաձայն ընդունված բանաձևն ի ցույց դրեց սիրիական հակամարտության կարգավորմանը միտված,

միջազգային հանրության մոտ նկատվող դրական տեղաշարժերը: Բանաձևը ենթադրում էր կրակի դադարեցում և 2016 թ. հունվարին հակամարտող կողմերի միջև բանակցային գործընթաց, որից հետո պետք է ձևավորվեր անցումային կառավարություն: Բացի դրանից՝ Նյու Յորքում որոշակի փոփոխություն նկատվեց Սիրիայի ներկայիս իշխանությունների, հատկապես Բաշար ալ-Ասադի հետագա ճակատագրի վերաբերյալ կողմերի ունեցած դիրքորոշումներում (համենայն դեպս, միջնաժամկետ հեռանկարում): Դա վկայում էր սիրիական ներկայիս վարչակարգի ճակատագրի վերաբերյալ արտասիրիական ուժերի ընդհանրական մոտեցումների և համաձայնությունների մասին: Ավելին, տարեվերջին միջազգային տարբեր շրջանակներում շատ էր խոսվում Բաշար ալ-Ասադի շրջապատից (այդ թվում՝ ալաուիական շրջանակներից) որոշ գործիչների Սիրիայի նախագահի պաշտոնում որպես այլընտրանք առաջ քաշելու մասին, որոնք պետք է ընդունելի լինեին սիրիական հասարակական լայն շրջանակների և հակամարտության մեջ ներքաշված խմբավորումների որոշ մասի համար: Բացի դրանից՝ Մոսկվան ընդունեց սիրիական որոշ ընդդիմադիր կառույցների ներգրավվածությունը սիրիական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում, ինչը նախկինում չէր նկատվում: Հիմնական խնդիրն այն էր, թե ինչպես ակտիվացնել հիշյալ չափավոր ու որոշ չափով կանխատեսելի ուժերին Սիրիայում և ներգրավել բանակցային գործընթացի մեջ, առավել ևս, որ սիրիական ընդդիմության մեջ ակտիվ ու բավական ազդեցիկ էին իսլամական արմատական ուժերը, որոնք այլ նպատակներ էին հետապնդում:

2016 թ. սիրիական ճգնաժամը շարունակեց լարված մնալ և ազդել ոչ միայն Մերձավորարևելյան տարածաշրջանի, այլև դրանից դուրս տեղի ունեցող գործընթացների վրա՝ չդադարելով մնալ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:

2016 թ. փետրվարի 11-ին Գերմանիայի Մյունխեն քաղաքում Սիրիայում կրակի դադարեցման շուրջ ԱՄՆ-ի ու Ռուսաստանի միջև ձեռք բերվեց համաձայնություն³⁵: Այդ համաձայնությունը ևս մեկ անգամ փաստեց, որ սիրիական հակամարտության խաղաղ կարգավորման առումով գերտերությունների դիրքորոշումներում նկատվում էին մերձեցումներ: Խնդիրն այն էր, թե որքանով էին պատրաստ կրակի դադարեցմանը սիրիական հակամարտության մեջ ակտիվորեն ներքաշված ինչպես ներսիրիական, այնպես էլ տարածաշրջանային որոշ ուժեր: Պատահական չէին Մյունխենում կայացած հանդիպումից հետո հնչած հայտարարություններն առ այն, որ հիշյալ համաձայնությունը կմնա թղթի վրա, եթե այն իրականություն չդառնա Սիրիայում: Սիրիայում զինադադարի հասնելու համար գերտերությունների ցանկությունը բավարար չէր: Ավելին, Ժնևյան բանակցային գործընթացին մասնակցող սիրիական ընդդիմության մեջ նկատելի էին տարաձայնություններ, որոնք խանգարում էին միասնական դիրքորոշում ունենալու որոշ հարցերի շուրջ, ուստի և դժվար կլինեք ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ նրանց բերել ընդհանուր հայտարարի:

Անշուշտ, Սիրիայում հայտարարված զինադադարը գործում էր երկրի միայն որոշ հատվածներում: Ամբողջական կրակի դադարեցում չէր կարող լինել, քանզի զգալի տարածքներ դեռևս վերահսկվում էին այն խմբավորումների կողմից, որոնք չէին միացել զինադադարին: Ավելին, իսլամական արմատական որոշ ուժեր շարունակում էին ակտիվությունը ռազմադաշտում: Զինադադարի վերաբերյալ հայտարարության մեջ շեշտվում էր, որ ԻՊ, ՋՆ խմբավորումների և ՄՄԿ ԱԽ ահաբեկչական կազմակերպությունների ցանկում հայտնված մի շարք կառույցների դեմ շարունակվելու էին ռազմական գործողությունները (ի դեպ, այդ ժամանակ ՄՄԿ ԱԽ հիշյալ ահաբեկչական կառույցների ցուցակի

շուրջ դեռևս կային տարաձայնություններ): Եթե հաշվի առնենք այն ակնհայտ իրողությունը, որ սիրիական ընդդիմադիր ճամբարը ներկայացնող զինյալ խմբավորումների մեջ ազդեցիկ էին թվարկված կառույցները, ապա մյուս ընդդիմադիր խմբավորումների միանալը զինադադարին քիչ չափով էր ազդելու հակամարտության կարգավորմանը, առավել ևս՝ կրակի դադարեցմանը:

Ժնևյան բանակցություններին զուգահեռ Սիրիայի Հալեպ նահանգում հակամարտող կողմերը սկսեցին կուտակել զգալի ներուժ, և 2016 թ. սկզբին Հալեպում ու դրա շուրջ ընթացող ռազմական գործողություններն ավելի լարված բնույթ ստացան: Ռազմական գործողությունները, որոնք ակտիվացան հատկապես ապրիլի վերջին՝ ժնևյան ձախողված բանակցություններից հետո, մարդկային զգալի գոհերի ու կատաղի բախումների պատճառ դարձան Հալեպում: Ռազմական գործողությունների թատերաբեմում հայտնվեց Հալեպ քաղաքը, որտեղ կառավարական ռազմաօդային ուժերի կողմից հարվածներ էին հասցվում ընդդիմադիր խմբավորումների կայանատեղիներին: Սիրիական օդուժի ավիահարվածներին զուգահեռ ընդդիմադիրները հրթիռակոծում էին Հալեպի այն հատվածները, որոնք գտնվում էին կառավարական ուժերի վերահսկողության տակ: Հալեպի հյուսիսարևմտյան Շեյխ Մակսուդ քրդաբնակ բնակավայրի շուրջ դարձյալ բախումները շարունակվեցին քրդական խմբավորումների և ընդդիմադիր ուժերի միջև: Վերջիններիս շրջանում աչքի էին ընկել այնպիսի խմբավորումներ, ինչպիսիք էին՝ ԶՆ-ն և թյուրք իսլամականներով համալրված խմբավորումները («Մուլթան Մուրադ», «Թուրքիստանի իսլամական կուսակցություն», «Իմամ Բուխարի Զամաա» և այլն): Չնայած թուրքական իշխանությունների հովանավորության տակ գործող հիշյալ խմբավորումների փորձերին՝ քրդերին հաջողվեց կասեցնել ընդդիմադիր ուժերի գրոհը

հիշյալ բնակավայրի ուղղությամբ՝ Շեյխ Մակսուդը պահելով քրդական ուժերի վերահսկողության տակ³⁶:

Հալեպից հարավ-արևմուտք ընկած Խան Տուման բնակավայրի շուրջ մայիսի սկզբից մարտերն առավել լարված դարձան սիրիական բանակի և ընդդիմադիր ուժերի (ԶՆ, «Ջայշ ալ-Ֆաթհ» «Ահրար ալ-Շամ» և այլն) միջև: Մայիսի 6-ի դրությամբ բնակավայրն անցել էր ընդդիմադիրների վերահսկողության տակ³⁷: Խան Տումանում ընդդիմադիր խմբավորումներին դիմակայել էին հիմնականում իրանական «Ղոդսի» (Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի գորամիավորում) և շիայական այլ խմբավորումների մարտիկները: Վերջինների շրջանում գրանցվեցին բազմաթիվ զոհեր (այդ մասին են խոսում արաբական ԶԼՄ-ներում տարածված տեղեկությունները, սոցցանցերում իսլամականների կողմից արված գրառումներն ու լուսանկարները)³⁸:

Ռազմական ակտիվ գործողություններ տեղի ունեցան նաև Հալեպ նահանգի հյուսիսում, թուրքական սահմանին հարակից հատվածներում ԻՊ-ի և ընդդիմադիր այլ խմբավորումների միջև: Մայիսի 8-ի դրությամբ «Իսլամական պետության» զինյալներին հաջողվել էր վերանվաճել մի քանի բնակավայրեր (Դուդիյան, Կարա Կուբրի, Թալ Շաիր և այլն)՝ սեղմելով ընդդիմադիրներին դեպի սիրիա-թուրքական սահման³⁹:

Եթե վերլուծենք Հալեպ քաղաքում և նահանգում այդ ժամանակ տիրող իրավիճակը, ապա կարելի է եզրակացնել, որ.

1. Հալեպ քաղաքում և համանուն նահանգում ռազմական գործողությունները չէին դադարում, որի պատճառներից էին՝

ա. ապրիլի երկրորդ կեսից սիրիական հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ժնյան բանակցային գործընթացի ձախողումն ու, այսպես կոչված, Էր-Ռիադի պատվիրակության (բանակցություններում հիմնականում Սաուդյան Արա-

բիայի կողմից աջակցություն ստացող ընդդիմադիր հատվածը) դուրս գալը հիշյալ բանակցային գործընթացից:

բ. Սիրիայի այս հատվածում ռազմական գործողություններին ակտիվորեն ներգրավված էին այնպիսի ազդեցիկ իսլամական ծայրահեղ արմատական կառույցներ, ինչպիսիք էին՝ Հալեպ նահանգի արևելյան և հյուսիսարևելյան հատվածներում ամրացած ԻՊ-ը և Հալեպ քաղաքի հարավարևելյան ու նահանգի արևմտյան հատվածներում ամրացած ՋՆ-ն, որոնք դուրս էին վերահսկողությունից:

2. Վերոհիշյալ երկու խմբավորումների համար Հալեպ նահանգը առանձնահատուկ կարևորություն էր ներկայացնում մի շարք պատճառներով.

ա. *Ռազմավարական-մարտավարական*. Հալեպ նահանգը սահմանակից էր Թուրքիային, իսկ սիրիա-թուրքական սահմանային անցակետերից իսլամականներին շարունակաբար (ֆինանսական, ռազմական, մարդկային) աջակցություն էր տրամադրվում: ՋՆ-ն պայքարում էր Սիրիայում իսլամական էմիրություն հիմնելու համար, որի վերաբերյալ բազմիցս հայտարարություններով էր հանդես եկել: Վերջին հայտարարությունը տարածվել էր մայիսի 7-ին «ալ-Կաիդայի» առաջնորդ Այման ալ-Ջաուսահիրի կողմից, որտեղ վերջինս կարևորում էր Սիրիայում «ալ-Կաիդայի» պաշտոնական ճյուղավորման ՋՆ ջիհադական պայքարը՝ շեշտելով, որ այդ պայքարը կավարտվի, երբ Սիրիայում հաստատվի էմիրություն, ու ընտրվի իմամ:

բ. *Հոգեբանական-գաղափարական*. իսլամական հեղինակավոր աղբյուրների համաձայն (Մահիհ, Մուսլիմ)՝ Հալեպ նահանգում էր գտնվում Դաբիկ բնակավայրը, որտեղ կայանալիք ճակատամարտում մուսուլմանները հաղթանակ էին տոնելու Արևմուտքի զինուժի հանդեպ⁴⁰: Հետևաբար հիշյալ խմբավորումները

հնարավորինս փորձելու էին ամրանալ (ԻՊ-ն այդ պահին վերահսկում էր Դաբիկ բնակավայրը) Հալեպի այդ հատվածում:

3. Սիրիական զինուժը Հալեպ քաղաքում շարունակում էր օդային հարվածների մարտավարությունը, որն այս փուլում չէր արդարացնում իրեն, քանզի հիշյալ ավիահարվածների հետևանքով խաղաղ բնակչության շրջանում զոհեր էին գրանցվում Հալեպի այն թաղամասերում, որտեղ պատսպարված էին ընդդիմադիրները: Վերջիններս պատասխան գործողություններով հրթիռակոծում էին քաղաքի այն բնակավայրերը, որտեղ կառավարական ուժերն էին (հրթիռակոծության թիրախում էին քրիստոնեական, նաև հայկական թաղամասերը): Սիրիական զինուժն այդ պահին չունեւր բավարար ներուժ քաղաքն ամբողջությամբ ազատագրելու համար:

4. Թուրքիան ուներ հեռահար ծրագրեր՝ Հալեպ նահանգի հետ կապված: Որպես սահմանային սիրիական նահանգ՝ թուրքական իշխանությունները փորձում էին ուժեղացնել թուրքական ծագումով էթնիկ խմբերի դիրքերը Հալեպ նահանգում՝ այստեղ տիրող իրավիճակն ու հետագա զարգացումները վերահսկելի դարձնելու նպատակով:

5. Թուրքիան չէր ցանկանում, որ Սիրիայի հյուսիսում քրդական ուժերը հաջողություններ արձանագրեն և ամեն կերպ խոչընդոտում էր քրդերի առաջխաղացմանը, թեկուզ և Հալեպ նահանգի հյուսիսարևելյան որոշ հատվածներում թուրքական իշխանությունների համար ոչ ցանկալի դիտարկվող «Իսլամական պետության» դեմ պայքարում: Սիրիայի քրդերի ռազմական հաջողությունները, որոնք կարող էին հանգեցնել թուրք-սիրիական սահմանի ողջ երկայնքով «Սիրիական Քուրդիստանի» ձևավորմանը, անցանկալի սցենար էր պաշտոնական Անկարայի համար՝ հաշվի առնելով քրդական հիմնախնդրի ակտիվացումը հենց Թուրքիայում:

6. Սիրիայի Հալեպ նահանգի հետ կապված արտասիրիական զարգացումներում, մասնավորապես ԱՄՆ և ՌԴ վարքագծում, համաձայնեցված մոտեցումներ էին նկատվում: Պատահական չէին Վաշինգտոնի և Մոսկվայի նախաձեռնությամբ հենց Հալեպում 48-ժամյա զինադադար հաստատելու փորձերը: Այլ հարց էր, որ Հալեպ նահանգում նման փորձերը ձախողվում էին անվերահսկելի ընդդիմադիր կառույցների ակտիվության պատճառով:

2016 թ. ամռանը բավական թեժ մարտեր գրանցվեցին Սիրիայի հյուսիսային նահանգներում: Մի քանի ընդդիմադիր խմբավորումներ («Թուրքիստանի իսլամական կուսակցություն», ՋՆ, «Ահրար ալ-Շամ» և այլն) հայտարարություններ տարածեցին, որ ռազմական ակտիվ գործողություններ են սկսում Սիրիայի Լաթակիա նահանգում՝ կառավարական ուժերից ազատագրելու Ջաբալ Աքրադ տեղանքը: Հատկանշական է, որ ընդդիմադիրների կողմից հիշյալ հայտարարությունները սոցցանցերում տարածվեցին անմիջապես Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում դրական տեղաշարժեր նկատվելուց հետո:

Ջաբալ Աքրադը լեռնային շրջան էր Սիրիայի հյուսիսում՝ Լաթակիայի հյուսիս-արևելքում, որը գտնվում էր ծովի մակերևույթից մոտ 1000 մետր բարձրության վրա: Այն մոտ էր գտնվում միջերկրական ծովափին, անմիջապես սահմանակից էր Թուրքիային և մեծ մասամբ ընդդիմադիրների կողմից վերահսկվող Իդլիբ նահանգին: Այս առումով դժվար չէր կոռուել, թե ռազմավարական կարևոր դիրք ունեցող Ջաբալ Աքրադի նկատմամբ ինչպիսի նկրտումներ ունեին թուրքական իշխանությունները, առավել ևս, որ այն գտնվում էր ալաուիական վարչակարգի բնօրրան համարվող Լաթակիայում: Պատահական չէր նաև, որ Ջաբալ Աքրադի ազատագրման ռազմական գործողությունների սկսման մասին հայտարարում էին սիրիական ընդդիմադիր ճամբարի

այնպիսի ուժեր, որոնք մշտապես գտնվել էին պաշտոնական Անկարայի ուշադրության կենտրոնում՝ ստանալով ֆինանսական և ռազմական աջակցություն: Այստեղ տեղին է հիշել, որ թուրքական օդուժի կողմից խոցված ռուսական ինքնաթիռը վայր ընկավ Լաթակիայի՝ հիմնականում թուրքումաններով բնակեցված հենց այդ հատվածում, որտեղ Անկարան փորձում էր ուժեղացնել թուրքումանների ու հիմնականում թյուրքերով համալրված ընդդիմադիր ուժերի դիրքերը: Պետք է նաև հիշել, որ ռուսական ինքնաթիռի հետ կապված միջադեպից հետո ռազմական լարված գործողություններ տեղի ունեցան Լաթակիայի այդ հատվածում, ռուսական օդուժի ավիահարվածների զգալի մասը բաժին ընկավ Ջաբալ Աքրադում գտնվող ընդդիմադիրների կայանատեղիներին: Ռուսական օդուժի և սիրիական կառավարական ուժերի ռազմական գործողությունները զգալի հարված հասցրին այստեղ պատսպարված ընդդիմադիր ուժերին: Սակայն վերջիններս բավական խոր արմատներ էին գցել այնտեղ: Ավելին, այդ ուժերը (նաև Թուրքիայի աջակցությամբ) հայտարարում էին, որ առաջ են շարժվելու՝ նպատակ հետապնդելով նվաճել ռազմավարական և մարտավարական կարևոր դիրք ունեցող Ջաբալ Աքրադը: Չմոռանանք նաև, որ Սիրիայի այս հատվածին մոտ էին հայաբնակ Քեսաբն ու շրջակա գյուղերը, և իսլամական ծայրահեղ արմատական ու թյուրքական խմբավորումները կարող էին հարձակվել Քեսաբի ուղղությամբ՝ կրկնելով 2014 թ. մարտի դեպքերը*:

ԻՊ զինյալների դեմ 2016 թ. կեսերից սկսված ռազմական գործողությունների հաջորդ փուլը հնարավորություն տվեց քրդերին օգոստոսի կեսերին նվաճելու Հալեպ նահանգում գտնվող Մանբիջ քաղաքը և շարժվելու դեպի հյուսիս՝ սիրիա-թուրքական

* Քեսաբի ուղղությամբ ընդդիմադիրների գրոհին մանրամասն անդրադարձ է կատարվել մենագրության 4-րդ գլխում:

սահմանին գտնվող Ջարաբլուս բնակավայրի ուղղությամբ: Սիրիայի այդ հատվածում տիրող իրավիճակը ստիպեց Թուրքիային էլ ավելի ակտիվ գործել: Ջարաբլուսը ԻՊ վերահսկողության տակ գտնվող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բնակավայր էր, և Թուրքիան անտարբեր չմնաց հենց իր սահմանին մոտ գտնվող այդ քաղաքի շուրջ ծավալվող զարգացումներին. օգոստոսի 24-ի վաղ առավոտյան թուրքական հատուկ նշանակության ուժերը, անցնելով սահմանը, ցամաքային գործողություններ իրականացրին Ջարաբլուս քաղաքի ուղղությամբ՝ աջակցելով տեղի ընդդիմադիր խմբավորումներին («Եփրատի վահան» ռազմական գործողությունը): Հրետանային հարվածներից հետո գործի դրվեցին թուրքական ռմբակոծիչներն ու տանկերը: Օգոստոսի 24-ի երեկոյան ընդդիմադիր ուժերը թուրքական զինուժի աջակցությամբ ԻՊ զինյալներից նվաճեցին Ջարաբլուսն ու հարակից մի շարք բնակավայրեր: Ջարաբլուսի նվաճումից հետո բախումներ նկատվեցին նաև թուրքամետ ընդդիմադիր խմբավորումների և այստեղ ակտիվ գործող քրդական ուժերի միջև:

Ըստ էության, վերահսկելով Սիրիայի հյուսիսային այդ հատվածը՝ Թուրքիան փորձեց առարկայական տեսք տալ անվտանգության գոտու ծրագրին*, որը երկար ժամանակ ծրագրված էր Անկարայի կողմից, սակայն դեպքերի բերումով այն չէր իրականացվում: Բացի դրանից՝ պաշտոնական Անկարան Սիրիայի այս հատվածում ցանկանում էր տեսնել առավել կանխատեսելի ընդդիմադիր ուժերի, քան անկանխատեսելի դարձած ԻՊ կամ Թուրքիայի համար վտանգավոր քրդերի, որոնք 2016 թ. երկրորդ կեսից բավական ակտիվացել էին Սիրիայի այս հատվածում:

Վերոհիշյալ թուրքական ռազմական ներխուժման հետևում նկատվեցին երկարաժամկետ հաշվարկներ, որոնք չէին խոսում

* Հալեպ նահանգի հյուսիսում՝ Ջարաբլուսից մինչև Ազազ 100 կմ երկարությամբ ու 60 կմ խորությամբ ձգվող գոտին:

այդ ռազմական գործողություններին ներգրավված ուժերի կողմից սիրիական հակամարտության արագ կարգավորման ցանկության օգտին: Հիշյալ հաշվարկները խարսխվել էին նաև ցամաքում տիրող իրավիճակի վերահսկողության բացակայության վրա: Իհարկե, այդ բացը նշված ժամանակահատվածում հնարավոր կլինե՞ր որոշ չափով լրացնել Սիրիայում հրադադարի գործուն մեխանիզմների կիրառման պայմաններում, սակայն իրողությունն այլ էր Սիրիայում: Այդ էր պատճառը, որ միջազգային հարթակներում մշակվող կրակի դադարեցման պայմանները, այդ թվում՝ Մոսկվայի և Վաշինգտոնի միջև այդ ժամանակ ձեռք բերված համաձայնությամբ սեպտեմբերի 12-ից հայտարարված հրադադարի ռեժիմը, չէին գործում:

2016 թ. աշնանը Սիրիայում կրակի դադարեցման հասնելու համար անհրաժեշտ էր պարզել այն ընդդիմադիր ուժերին, որոնք, իրոք, ցանկանում էին միանալ այդ հրադադարին և համագործակցության եզրեր գտնել: Այդ պահին Սիրիայի որոշ տարածքներում ամրացած ընդդիմադիր չափավոր ուժերը զիջում էին իսլամական ծայրահեղ արմատական կառույցներին: Անդադար օդային հարվածների տակ հայտնված ընդդիմադիր հիշյալ չափավոր ուժերը գնալով տրամադրվում էին դրսի ռազմական միջամտության դեմ, և այդ առումով ռազմական լուծման կողմնակից ուժերի ճամբարն ընդլայնվում էր և բարդանում էր այդ ուժերին հետ պահել իսլամական ծայրահեղ արմատական կառույցների հետ համագործակցությունից: Դեռևս ազդեցիկ էին իսլամական ծայրահեղական ուժերի դիրքերը Հալեպ և Իդլիբ նահանգներում: Այդ հատվածում ԻՊ, «Ջաբհաթ Ֆաթհ ալ-Շամ» (նախկին «Ջաբհաթ ալ-Նուսրա»), «Ահրար ալ-Շամ» կառույցները կենտրոնացրել էին մեծ ուժեր և վերահսկում էին զգալի տարածքներ:

2016 թ. դեկտեմբերին թեժ բախումներ գրանցվեցին Սիրիայի կենտրոնում: Հոմս նահանգի Թադմուր բնակավայրը 4 օր տևած

մարտերից հետո վերանվաճվեց ԻՊ-ի կողմից դեկտեմբերի 11-ին: Ըստ ԻՊ տարածած տեղեկության՝ հարձակումն իրականացվել էր մի քանի ուղղություններից, որոնց հետևանքով սիրիական կառավարական ուժերի շրջանում եղավ 352 զոհ, գերեվարվեցին 22-ը, ոչնչացվեցին 44 տանկ, 7 զրահատեխնիկա, 7 հրանոթ և այլն:

ԻՊ-ի կողմից նվաճված Պալմիրայից տարածվող տեսանյութերի վերլուծությունը թույլ էր տալիս ենթադրել, որ իսլամականների հարձակումը եղել էր անսպասելի: Պետք է նաև նշել, որ Պալմիրայի նվաճման պատճառը, ըստ որոշ տեղեկությունների, իսլամականների կողմից Պալմիրայի կաշառված զինվորական ղեկավարությունն էր եղել, որը հնարավորություն էր տվել ԻՊ զինյալներին մոտենալու բնակավայրին: ԻՊ զինյալները, զարգացնելով հաջողությունը, Պալմիրայից շարժվեցին դեպի արևմուտք և մոտ երկու օր պաշարել էին բնակավայրից մոտ 30 կմ հեռավորության վրա գտնվող սիրիական բանակի «ալ-Թիյաս» ռազմաօդային բազան՝ փորձելով նվաճել այն: Այդ ժամանակ բազայից ստացվող տեսանյութերը մտահոգիչ էին, քանզի իսլամականների անսպասելի գրոհի պատճառով ռազմաբազայում եղած զինտեխնիկան ամբողջությամբ հնարավոր չէր եղել տարահանել, և դրանք անցան իսլամականներին: Ինչևէ, Սիրիայի կենտրոնական հատվածում գտնվող Պալմիրան պաշտպանող ուժերը ձախողվեցին, որոնց պատճառներից կարելի էր նաև նշել սիրիական կառավարական ուժերի զբաղվածությունը Հալեպ քաղաքի ազատագրման գործողություններով, որտեղ սիրիական բանակը 2016 թ. վերջին լուրջ ձեռքբերումներ էր գրանցում: Նոյեմբերին կառավարական ուժերն ու կառավարամետ խմբավորումները սկսեցին վճռական ռազմական գործողությունները Հալեպը վերջնականապես ազատագրելու համար: Քաղաքի որոշ հատվածներում ամրացած ընդդիմադիր խմբավորումները համաձայնվեցին դուրս

գալ 2016 թ. դեկտեմբերին, և տարեվերջին Հալեպն ամբողջությամբ ազատագրվեց⁴¹:

2015-2016 թթ. Սիրիայում տիրող իրավիճակը և հակամարտության ընթացքը փոփոխությունների ենթարկվեցին՝ կապված արտասիրիական որոշ ուժային կենտրոնների, մասնավորապես Թուրքիայի ակտիվ ներքաշմամբ սիրիական հակամարտության մեջ: Դրանով պայմանավորված հակամարտությունը նոր թափ ստացավ. փոփոխական հաջողություններով ռազմական գործողություններ էին տեղի ունենում Սիրիայի տարբեր հատվածներում: Այդ փուլը նշանավորվեց նրանով, որ 2015 թ. սկզբից ԻՊ-ն սկսեց կորցնել տարածքներ, իսլամականների տարածքային կորուստների հաշվին քրդական զինված խմբերը կարողացան ընդլայնել իրենց կողմից վերահսկվող տարածքները՝ դուրս գալով Եփրատ գետի արևելյան ափ: Կառավարական ուժերի ամենանշանակալի հաջողությունը Հալեպ քաղաքի ազատագրումն էր ընդդիմադիրներից 2016 թ. վերջին:

Սիրիայում կրակի դադարեցման, ճգնաժամի խաղաղ կարգավորման ուղղությամբ իրականացվող քայլերն արդյունավետ չգտնվեցին: Այնուամենայնիվ, այդ փուլում նկատվեցին սիրիական հակամարտության մեջ ներգրավված գերտերությունների՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանի որոշ միասնական մոտեցումներ Սիրիայի խնդրում: Դա հետագայում արտահայտվեց այն իրավիճակով, որ երկու երկրները կարողացան համաձայնության գալ որոշ հատվածներում կրակի դադարեցման շուրջ: Բացի դրանից՝ Եփրատ գետը դարձավ այն բնական սահմանը, որը բաժանեց արևմուտքում կառավարական ուժերի (Ռուսաստանի ազդեցության գոտի) և արևելքում քրդական խմբավորումների (ԱՄՆ ազդեցության գոտի) կողմից վերահսկողության տարածքները*:

* Այդ բաժանարար գիծը գործում էր ընդհուպ մինչև 2020 թ. մայիս ամիսը:

2.2. Սիրիական հակամարտությունը 2017-2020 թթ.

2017 թ. հունվարին Սիրիայի Լաթակիա, Իդլիբ և Հալեպ նահանգներում իրավիճակը մնում էր լարված, և ռազմական գործողությունների հիմնական մասնաբաժինը ընկել էր հիշյալ տարածքներին, մասնավորապես Իդլիբ և Հալեպ նահանգներին: Լաթակիա նահանգը առանձնանում էր իր որոշակի կայունությամբ: Նահանգի զգալի մասում կառավարական ուժերն էին: Այնուամենայնիվ, Լաթակիայի հյուսիս-արևելքում՝ Իդլիբին հարող հատվածում, դեռևս գտնվում էին ընդդիմադիր խմբավորումներ, որոնք բավական ակտիվ էին: Այդ ուժերի մեջ ազդեցիկ էին թյուրքական ծագումով խմբավորումները: Ընդդիմադիրները մոտ էին հայաբնակ Քեսաբին, և ամեն վայրկյան նրանցից կարելի էր սպասել անակնկալներ (հետագայում այդ խմբավորումների կողմից նաև հրթիռակոծություններ տեղի ունեցան Քեսաբում): Սա այն հատվածն էր, որտեղ խոցվեց ռուսական ինքնաթիռը, ու սպանվեց ռուս օդաչուն, և այս հատվածում բնակվող թուրքումաններն ու ընդդիմադիր ուժերը հիմնականում գտնվում էին Թուրքիայի ազդեցության տակ:

Իդլիբ նահանգը 2017 թ. հունվարին ամբողջությամբ գտնվում էր ընդդիմադիրների վերահսկողության տակ: Իսլամական ծայրահեղ արմատական «Ջաբհաթ Ֆաթհ ալ-Շամ» խմբավորումը կարողանում էր իր վերահսկողության տակ պահել նահանգը և ճնշել ընդդիմադիր այլ ուժերի կողմից հրահրվող ցանկացած բնույթի ընդվզում: Նման դեպքեր բազմիցս նկատվել էին Իդլիբում: Նահանգում ընդդիմադիրների աճող թվաքանակն ու ազդեցության տարածումը պայմանավորված էին նաև այն հանգամանքով, որ հակամարտության ընթացքում Իդլիբը հանդիսացավ այն տարածքը, դեպի ուր բացված մարդասիրական միջանցքներով հնարավորություն տրվեց ավտոբուսներով տեղափոխելու

կառավարական ուժերից պարտություն կրած ընդդիմադիրներին (թե՛ չափավոր, թե՛ արմատական ու ծայրահեղ արմատական) իրենց ընտանիքների հետ միասին: Այս իրողությունը ձեռնտու էր հակամարտող կողմերին. նախ կառավարական ուժերը հնարավորություն ստացան վերջ դնելու ընդդիմադիրների դիմակայություններին Սիրիայի առանձին հատվածներում, իսկ պարտություն կրած, բայց հանձնվել չցանկացող զինյալները տեղափոխվեցին իրենց համար առավել անվտանգ ու ընդդիմադիրների կողմից վերահսկվող Իդլիբ նահանգ⁴²:

Հալեպի ազատագրումից հետո սիրիական կառավարական ուժերը հակամարտության այդ փուլում չշարժվեցին Իդլիբի ուղղությամբ, և նահանգի հարցը մնաց անորոշ ու միջազգային հարթակներում լուրջ քննարկման առարկա դարձավ: Իդլիբ նահանգի զգալի հատվածն ու մարզկենտրոնը 2020 թ. մայիսի դրությամբ դեռևս վերահսկվում էին ընդդիմադիր ծայրահեղական ուժերի կողմից:

Հալեպ քաղաքը սիրիական բանակի և նրանց դաշնակից ուժերի կողմից ազատագրվեց 2016 թ. վերջին, սակայն նահանգում դեռևս բախումները շարունակվում էին: Նահանգի քիչ մասն էր վերահսկվում կառավարական ուժերի կողմից: Հիմնական հատվածում քրդերն էին, մի զգալի հատվածը վերահսկվում էր թուրքական ուժերի ու նրանց դաշնակից ընդդիմադիր խմբավորումների կողմից: Մյուս հատվածում ԻՊ-ն էր, որը կենտրոնացրել էր իր ուժերը ալ-Բաբ քաղաքում: 2017 թ. հունվարին ալ-Բաբ քաղաքի համար թեժ մարտեր տեղի ունեցան մի կողմից թուրքական զինուժի, իսկ մյուս կողմից՝ ԻՊ-ի միջև: Այդ պահին քաղաքը գտնվում էր ԻՊ զինյալների վերահսկողության տակ, սակայն պաշարված էր թուրքական զինուժի և նրանց հարող ընդդիմադիր խմբավորումների կողմից: Հետագայում բավական երկար

պաշարումից հետո թուրքերին հաջողվեց նվաճել ալ-Բաբ բնակավայրը ԻՊ զինյալներից:

2017 թ. սկզբին Սիրիայի Դեր Ջոր քաղաքում արյունալի բախումներ գրանցվեցին կառավարական ուժերի և իսլամականների միջև: Իսլամականները կարողացան երկու մասի բաժանել կառավարական ուժերի կողմից վերահսկվող տարածքները Դեր Ջոր մարզկենտրոնում՝ մի կողմում թողնելով օդանավակայանը, իսկ մյուս կողմում՝ ռազմաբազան: Երկու հատվածներն էլ ԻՊ զինյալները վերցրին պաշարման օդակի մեջ: Դեր Ջորում կառավարական ուժերին օգնեցին ռուսական ռազմաօդային ուժերը՝ ավիահարվածներ հասցնելով ԻՊ դիրքերին: Դեր Ջոր նահանգը երկար ժամանակ գտնվում էր ԻՊ վերահսկողության տակ, նահանգի կենտրոն Դեր Ջոր քաղաքում սիրիական բանակն ուներ վերահսկվող թաղամաս (այդ թվում՝ քաղաքի օդանավակայանը), որին կից՝ դեպի արևմուտք, գտնվում էր սիրիական բանակի ռազմաբազան: Այն կարելի էր բնութագրել սիրիական վարչակարգի կողմից վերահսկվող «փոքրիկ կղզակ», որը շրջապատված էր «Իսլամական պետության» կողմից վերահսկվող տարածքներով: ԻՊ-ն այդ տարիների ընթացքում բազմիցս փորձել էր վերցնել այն, սակայն անօգուտ:

Կառավարական ուժերի կողմից իսլամականների գրոհը ետ չպրտելու դեպքում սիրիական բանակը կարող էր ապահովել սեփական թիկունքը՝ Դեր Ջորը միացնելով վարչակարգի կողմից վերահսկվող մնացյալ տարածքներին: Այդ մարտավարությունը հետագայում որոշ չափով արդարացրեց իրեն, և դա հնարավոր եղավ իրականացնել հատկապես Սիրիայի կենտրոնում՝ Պալմիրայի ուղղությամբ հաջող գործողությունների և Հոմս ու Դեր Ջոր նահանգների նկատմամբ որոշակի վերահսկողություն սահմանելու միջոցով:

2017 թ. ընթացքում տեղի ունեցան հակամարտության կարգավորմանը միտված մի շարք նախաձեռնություններ: Այնուամենայնիվ, ռազմական գործողությունները չդադարեցին: 2017 թ. փետրվարին թուրքական զինուժի ու նրա աջակցությամբ գործող սիրիական ընդդիմադիր ուժերի (այդ թվում՝ իսլամական խմբավորումների) կողմից ալ-Բաբ քաղաքը ԻՊ զինյալներից նվաճելուց հետո Թուրքիան հայտարարեց, որ նպատակ է դրել շարժվելու ալ-Ռակկայի ու քրդերի կողմից վերահսկվող Մանբիջի ուղղությամբ: Սակայն սիրիական բանակի առաջխաղացումը Հալեպի արևելքում ու հարավ-արևելքում կտրեց թուրքական զինուժի ճանապարհը ալ-Բաբից դեպի ալ-Ռակկա: Մարտի սկզբին Մանբիջին հարակից բնակավայրերի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվեց քրդերի և սիրիական իշխանությունների միջև, որից հետո Մանբիջ քաղաքից արևմուտք գտնվող մի շարք բնակավայրեր անցան սիրիական բանակի վերահսկողության տակ: Դրանով փակվեց նաև Մանբիջ տանող ճանապարհը թուրքական զինուժի և նրանց կողմից աջակցություն ստացող սիրիական ընդդիմադիր խմբավորումների առաջ:

Իդլիբում ռազմական ներկայություն ապահովելու նպատակով 2017 թ. հոկտեմբերին թուրքական զինուժը փոքր քանակի զինտեխնիկա և սպառազինություն մտցրեց նահանգ թուրքական Հաթայ շրջանից: Դա հնարավոր եղավ Իդլիբի զգալի հատվածը վերահսկող «ալ-Կաիդայի» ճյուղավորման հետ պայմանավորվածությունների արդյունքում⁴³: 2017 թ. վերջին թուրքական բանակը կարողացավ այս հատվածում տեղակայել ռազմական դիտակետեր, որը նպատակ էր հետապնդում ոչ միայն վերահսկելու քրդական կառույցների և խմբավորումների տեղաշարժերը հյուսիսում գտնվող Աֆրին քրդաբնակ շրջանում, այլ նաև նախապատրաստվելու ռազմական ներխուժմանը դեպի այդ տարածք*:

* Իդլիբում ստեղծված իրադրության վերաբերյալ տե՛ս №9 հավելվածում:

ԱՄՆ աջակցությամբ «Սիրիայի դեմոկրատական ուժեր» (ՄԴՈԻ)* կոչվող կառույցի զինյալները շարունակեցին առաջ շարժվել ԻՊ կենտրոնի՝ ալ-Ռակկա քաղաքի ուղղությամբ, որը հնարավոր եղավ վերցնել 2017 թ. հոկտեմբերին, և շարժվել էլ ավելի հարավ ու հարավ-արևելք՝ Եփրատ գետի ափով դեպի Իրաքի սահման: Զուգահեռաբար Սիրիայի բանակը նույնպես առաջ-խաղացում արձանագրեց ԻՊ-ի նկատմամբ երկրի կենտրոնական հատվածներում՝ ազատագրելով Թադմուրը (Պալմիրա), դուրս գալով Եփրատ գետի արևմտյան ափ (դրանով վերջ դրվեց ԻՊ-ին՝ որպես Սիրիայում լայնածավալ տարածքներ վերահսկող կառույցի): 2018 թ. սկզբի դրությամբ սիրիական բանակի ու ՄԴՈԻ-ի միջև շփման գիծն անցնում էր Եփրատ գետով, իսկ նույն ժամանակահատվածի դրությամբ քրդական ուժերը վերահսկում էին Սիրիայի տարածքի մոտ մեկ երրորդը (այդ իրավիճակը պահպանվեց ընդհուպ մինչև 2020 թ. սկիզբը՝ չնչին բացառություններով):

2018 թ. հունվարին լարված իրավիճակ ստեղծվեց նաև Սիրիայի հյուսիսարևմտյան քրդաբնակ Աֆրինի շրջանում: 2018 թ. հունվարի 20-ին թուրքական զինուժը Սիրիայի Աֆրին բնակավայրի ուղղությամբ սկսեց «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը, որի նպատակ հայտարարվեց ահաբեկչական կառույցների՝ քրդական «Ժողովրդական պաշտպանության միավորների» (ԺՊՄ, YPG)* և ԻՊ զինյալների ոչնչացումը քրդաբնակ այդ հատ-

* «Սիրիայի դեմոկրատական ուժերը» 2015 թ. հոկտեմբերին ԱՄՆ հովանավորությամբ ստեղծված կառույց էր, որի նպատակը Սիրիայի ներսում տարածաշրջանային մի շարք ուժերին, ինչպես նաև սիրիական հակամարտության մեջ ներքաշված արտատարածաշրջանային ուժային կենտրոններին ցույց տալն էր, որ ՄԴՈԻ-ն կապ չունի «Քուրդիստանի աշխատավորական կուսակցության» կամ Սիրիայում կռվող քրդական այլ կառույցների հետ և համարված է ինչպես Սիրիայի քրդերով, այնպես էլ էթնիկ այլ փոքրամասնություններով:

* ԺՊՄ կառուցվածքային, ռազմավարական-մարտավարական առանձնահատ-

վածում⁴⁴: Նույն օրը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդո-ղանը հայտարարեց, որ Աֆրիկնի ռազմական գործողություններին կհաջորդեն թուրքական զինուժի ճնշումները Մանքիջի ուղղու-թյամբ⁴⁵: Իսկ Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմը հայտա-րարեց, որ Աֆրիկնի ռազմական գործողությունների նպատակն էր Սիրիայի հյուսիս-արևմուտքում 20-30 կմ խորությամբ անվտան-գության գոտու հիմնումը⁴⁶:

Ռազմական գործողությունը սկսվեց թուրքական հրետանու և օդուժի հարվածներով՝ ուղղված սահմանամերձ քրդական բնակավայրերում գտնվող ԺՊՄ կայանատեղիներին: Հունվարի 20-ին սկսվեցին ցամաքային գործողությունները չորս ուղղու-թյամբ՝ Աֆրիկնի արևմուտքում, հյուսիս-արևմուտքում, հյուսիս-արևելքում և արևելքում, որոնց մասնակցեցին թուրքական բա-նակի հատուկ նշանակության ուժերն ու ծանր զինտեխնիկան, ինչպես նաև սիրիական ընդդիմադիր ճամբարը ներկայացնող զինյալները: Մասնավորապես, Թուրքիան Աֆրիկնի ցամաքային գործողություններում օգտագործեց թյուրքերով համալրված որոշ խմբավորումների (մասնավորապես «Լիուա Սուլեյման Շահ», «Ֆայլակ ալ-Շամ» և այլն), այդ թվում՝ նաև իսլամական արմա-տական որոշ կառույցների (օրինակ՝ չեչեններով համալրված «Ջունուդ ալ-Շամ» կառույցը⁴⁷): Աֆրիկնի հյուսիսային առանձին հատվածներում տեղի ունեցող բախումներում հիշյալ ընդդիմա-դիր կառույցների զինյալների առկայությունը թույլ էր տալիս են-թադրել, որ այդ զինյալները գտնվել էին Թուրքիայի ռազմական ճամբարներում և արագ հավաքագրվել ու տեղափոխվել էին Աֆ-րիկնի ճակատ*։ 2018 թ. հունվարին Աֆրիկնի ուղղությամբ թուրքա-

կությունների և սիրիական հակամարտության մեջ ներգրավվածությանը անդ-րադարձել ենք մենագրության 4-րդ գլխում:

* Հատկանշական էին հունվարի 24-ին քրդական համացանցային ռեսուրսնե-րում հրապարակված որոշ լուսանկարներ, որոնցում երևում էր, թե ինչպես էին

կան բանակի նախաձեռնած «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը նպատակ ուներ նաև կանխելու Սիրիայի հյուսիսում «քրդական միջանցքի» ստեղծումը:

2019 թ. վերջին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարեց, որ ԱՄՆ-ն դուրս է բերում իր զինուժը Եփրատից արևելք գտնվող Սիրիայի հյուսիսային տարածքներից: Ըստ ամերիկյան ղեկավարության՝ ամերիկյան զինուժը (մոտ 500 զինվոր) պետք է ետ քաշվեր Դեր Զոր նահանգի խորքեր՝ իրականացնելով տեղի էներգակիրներով հարուստ տարածքների պաշտպանությունը: Հիշյալի հետ կապված՝ քրդերը մտահոգություն հայտնեցին առայն, որ ամերիկացիները լքում են իրենց դաշնակիցներին (քրդերին)՝ թողնելով միայնակ այս հատվածների վրա ախորժակ ունեցող Թուրքիայի դեմ: Իսկապես, թուրքական ռազմական գործողություններն ու առաջխաղացումն այս հատվածներում շատ սպասել չտվեցին:

2019 թ. վերջին Թուրքիան նախաձեռնեց հաջորդ ռազմական գործողությունը Սիրիայում: Հոկտեմբերի 9-ին ընդդիմադիր խմբավորումները թուրքական զինուժի օժանդակությամբ Թուրքիայի տարածքից մուտք գործեցին քրդերի կողմից վերահսկվող Ռաս ալ-Այն և Թալ Աբյադ բնակավայրեր՝ փորձելով Սիրիայի հյուսիսային այդ հատվածում ստեղծել մոտ 100 կմ երկարությամբ և 30 կմ խորությամբ վերահսկողության գոտի: Թուրքիայի նախաձեռնած այդ ռազմական գործողությունը ստացավ «Խաղաղության ակունք» անվանումը*:

Աֆրիկայում գտնվող թուրքական բանակի զինվորները ցուցադրում թուրքական ազգայնական «Գորշ գայլեր» խմբավորման խորհրդանիշը:

* Սիրիական հակամարտության ընթացքում (2011-2020 թթ.) թուրքական զինուժը Սիրիայում իրականացրել է 6 ռազմական բացահայտ գործողություն՝ 2015 թ. փետրվարին Սուվեյման Շահի մասունքների տեղափոխման ռազմական օպերացիան, 2016 թ. օգոստոսին «Եփրատի վահան», 2017 թ. հոկտեմբերին Իդլիֆում ռազմական դիտակետեր հիմնելու, 2018 թ. սկզբին «Ձիթենու ճյուղ», 2019 թ. հոկ-

Սիրիայի հյուսիսը՝ Թալ Աբյադից մինչև Ռաս ալ-Այն ընկած հատվածը, արդեն վերահսկվում էր թուրքամետ ուժերի ու թուրքական բանակի կողմից (մոտ 100 կմ): Մի քանի օր անց թուրքական բանակն ու թուրքամետ խմբավորումները դուրս եկան նաև M-4 մայրուղի, որով ամբողջացվեց նաև 30 կմ խորությունը: Ճիշտ է, քրդերը հիմնականում դուրս էին եկել այս հատվածից, սակայն հիշյալ տարածքի որոշ հատվածներում դեռ ամրացած էին: Արդյունքում քրդերը, կորուստներ կրելով, նահանջեցին դեպի հարավ:

2019 թ. վերջին և 2020 թ. հունվարին սիրիական կանոնավոր բանակը առաջխաղացում արձանագրեց Իդլիբ նահանգում: Իդլիբում և Հալեպում տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ, սիրիական բանակի և իսլամականների շրջանում գրանցված զոհերից զատ, սպանվեցին նաև թուրք և ռուս զինվորականներ⁴⁸, որոնք ծառայություն էին իրականացնում այս հատվածում: Իդլիբ նահանգը չափազանց կարևոր ռազմավարական դիրք ուներ Սիրիայում: Այն գտնվում էր սիրիական ներկայիս իշխանությունների համար կարևոր նշանակություն ունեցող Լաթակիա և Հալեպ նահանգների միջնամասում: Բացի դրանից՝ այստեղով էին անցնում երկրի առանձին հատվածներն իրար կապող կարևոր ենթակառուցվածքները, ճանապարհները, հաղորդակցական հանգույցները և այլն: 2020 թ. սկզբին Իդլիբում գրանցված ռազմական գործողությունները ցույց տվեցին, որ Դամասկոսը վճռական էր տրամադրված նահանգի նկատմամբ կորցրած վերահսկողությունը վերահաստատելու առումով: Նահանգի ազատագրման հիմնական ռազմական գործողությունների մեկնարկը տրվեց 2019 թ. վերջին, երբ կառավարական ուժերն ազատագրեցին Իդլիբի հարավում կարևոր դիրք զբաղեցնող Խան

տեմբերին «Խաղաղության ակունք» և դարձյալ Իդլիբում 2020 թ. սկզբին «Գարնանային վահան» ռազմական գործողությունները:

Շեյխունը: 2020 թ. հունվարին սիրիական բանակը, ճնշելով ընդ-դիմադիրներին նահանգի հարավ-արևելքից, շարժվեց առաջ՝ ազատագրելով Մարաթ ալ-Նումանը, իսկ փետրվարի 5-ին՝ Սարակիբը: Վերոհիշյալ հատվածում գտնվող թուրքական ռազմական դիտակետերը տարհանվեցին: Զուգահեռաբար Թուրքիան Հաթայ նահանգից ռազմական զինտեխնիկա մտցրեց Իդլիբ և կառուցեց ռազմական ավելի մեծ դիտակետ Սարակիբի հյուսիսում գտնվող Թաֆթանագում: Ավելին, թուրքական իշխանությունները հայտարարեցին Իդլիբում վճռական քայլեր ձեռնարկելու և «Գարնանային վահան» ռազմական գործողության մասին՝ ավելացնելով ռազմական ներուժը նահանգում ու ռազմական ԱԹՄ-ների կիրառմամբ աջակցելով ցամաքում կառավարական ուժերի դեմ կռվող ընդդիմադիրներին⁴⁹:

Սիրիայի այս հատվածում Թուրքիան ուներ անմիջական շահեր (մենագրության նախորդ հատվածներում անդրադարձել ենք թուրքումանների իրողությանը), ինչը չափազանց կարևոր գործոն էր թուրքական իշխանությունների համար: Բացի դրանից՝ Իդլիբը հետաքրքրում էր Թուրքիային նաև այն պատճառով, որ այն մոտ էր Աֆրին քրդաբնակ շրջանին⁵⁰: Այդ համատեքստում սիրիական հակամարտության հանգուցալուծմանն ուղղված Աստանայի գործընթացում Թուրքիան կարողացավ հասնել Իդլիբում «ապառազմականացված գոտու» ստեղծմանը, որը լինելու էր Անկարայի անմիջական ազդեցության տակ: Նույնիսկ 2017 թ. վերջից թուրքերը որոշ առարկայական քայլեր ձեռնարկեցին այն կյանքի կոչելու համար: Այնուամենայնիվ, Թուրքիան չկարողացավ հասնել Իդլիբի վրա ամբողջական վերահսկողության հաստատմանը, և 2020 թ. փետրվարի սկզբում նահանգի զգալի մասը դեռ վերահսկվում էր իսլամականների կողմից: Իդլիբում 2020 թ. հունվար-փետրվար ամիսներին կառավարական ուժերի առաջխաղացումն ու ռազմական գործողությունները հնարավորու-

թյուն տվեցին սիրիական բանակին դուրս գալու M-4 և M-5 շատ կարևոր մայրուղիներ, որոնք կապում էին Հալեպը Լաթակիայի ու Դամասկոսի հետ: Փետրվարի կեսերից սիրիական կառավարական ուժերն առաջխաղացում արձանագրեցին նաև Հալեպ քաղաքին հարակից արևմտյան և հյուսիսարևմտյան ուղղություններով՝ ազատագրելով այդ տարածքները ընդդիմադիր խմբավորումներից: Սիրիայի այս հատվածը, մասնավորապես Հալեպ քաղաքի արվարձաններն ընդդիմադիրներից ազատագրելը չափազանց կարևոր էր իշխանությունների համար, քանզի այս հատվածում ամրացած ընդդիմադիր խմբավորումները անընդհատ ռմբակոծում, հրթիռակոծում և հարձակումներ էին իրականացնում Հալեպի ու հարակից բնակավայրերի նկատմամբ:

Իդլիբում ստեղծված լարված իրավիճակը հանգուցալուծելու նպատակով տարվա սկզբից տարբեր ձևաչափերով մի շարք հանդիպումներ կազմակերպվեցին Ռուսաստանի և Թուրքիայի պատվիրակությունների միջև: 2020 թ. մարտի 5-ին Ռուսաստանի մայրաքաղաքում Պուտինի ու Էրդողանի անմիջական մասնակցությամբ տեղի ունեցան Իդլիբի հարցով բանակցություններ, որոնց արդյունքում ձեռք բերվեցին պայմանավորվածություններ, որոնց համաձայն՝ Իդլիբում մարտի 6-ից բոլոր ռազմական գործողությունները դադարեցվում էին, M-5 մայրուղին մնում էր սիրիական իշխանությունների վերահսկողության տակ, M-4 մայրուղու հյուսիսային և հարավային երկայնքով ստեղծվելու էր 6 կմ լայնությամբ անվտանգության գոտի, որտեղ ռուս և թուրք զինվորականները համատեղ պարեկություն էին իրականացնելու⁵¹: Այսպիսով՝ Սիրիայի հյուսիս-արևմուտքում ստեղծվեց հետևյալ իրավիճակը. մինչ 2020 թ. սկիզբը Թուրքիան Իդլիբի հատվածում ուներ դիտակետեր, ապա հունվար և փետրվար ամիսներին ավելացրեց զինուժը: Մարտի 5-ին Ռուսաստանի հետ ձեռք բերված համաձայնությունների արդյունքում թուրքական զինուժը իրա-

կանացնելու էր պարեկային ծառայություն ռուս գործընկերների հետ: Ռուսաստանը կարողացավ Իդլիբում ապահովել ակտիվ ներկայություն՝ օգնելով ցամաքում իր գործընկերներին: Կառավարական ուժերը կարողացան դուրս գալ M-5 և M-4 կարևոր նշանակության մայրուղիներ, որոնք կարևոր հանգույցներ էին և կապում էին Հալեպը Լաթակիա ու Դամասկոս ուղղություններին: Իդլիբում ծավալված ռազմական գործողություններին զուգահեռ կառավարական ուժերն ազատագրեցին Հալեպի արևմտյան շրջանները զինված խմբավորումներից, ինչի հետևանքով Հալեպը դարձավ էլ ավելի անվտանգ, գործարկվեց օդանավակայանը և այլն: Այնուամենայնիվ, Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների ձեռք բերած համաձայնությունները կարճաժամկետ լուծումներ էին ենթադրում: Երկարաժամկետ լուծումների համար պետք էր որոշել Իդլիբ մարզկենտրոնի և մնացած տարածքների հարցը, որոնք մնացին ընդդիմադիրների վերահսկողության տակ (այստեղ դեռևս ազդեցիկ էին իսլամական ծայրահեղական խմբավորումները, որոնք ժամանակ առ ժամանակ հետագայում փորձելու են լարված պահել իրավիճակն Իդլիբում): Այս փուլում հիշյալ երկարաժամկետ լուծումների համար պահանջվում էին ժամանակ և նպաստավոր պայմաններ ցամաքում, որոնք չկային, իսկ կողմերն էլ (Ռուսաստան, Թուրքիա) դեռ պատրաստ չէին նման լուծումների:

2020 թ. սկզբին Սիրիայի հյուսիս-արևմուտքում ստեղծված բավական բարդ իրավիճակի, այստեղ տեղի ունեցող բավական թեժ ու արյունալի բախումների և այս հատվածում սիրիական բանակի հաջողությունների համատեքստում հակամարտության կարգավորումը կարող էր էլ ավելի արդյունավետ ընթացք ստանալ, քանզի այդ հատվածը ընդդիմադիր ծայրահեղական և անվերահսկելի խմբավորումների վերջին բաստիոնն էր Սիրիայում: Չնայած որոշ տարածաշրջանային երկրների, մասնավորապես

Թուրքիայի բացասական և քննադատական արձագանքին^{*} սիրիական բանակի ռազմական հաջողությունները Բոլիբում և Հալեպում կարող էին ազդել թե՛ Սիրիայի ներսում ընթացող ռազմական գործողությունների, թե՛ երկրից դուրս տեղի ունեցող սիրիական հակամարտության հետագա կարգավորումների վրա:

Պետք է փաստել նաև, որ 2015 թ. վերջից ներսիրիական, մասնավորապես ներիշխանական զարգացումներում ևս նկատվեցին փոփոխություններ, որոնք հիմնականում պայմանավորված էին սիրիական հակամարտության ընթացքով՝ Ռուսաստանի ներքաշմամբ և, ընդհանրապես, արտասիրիական ուժային կենտրոնների ներգրավվածության ակտիվացմամբ: Այս իրողությունը որոշ չափով թեթևացրեց սիրիական իշխանությունների դրությունը, որը, Սիրիայում տեղի ունեցող ռազմական գործողությունների վրա կենտրոնանալուց զատ, հնարավորություն տվեց որոշ չափով ուշադրություն դարձնելու նաև ներսիրիական հասարակական-քաղաքական, տնտեսական, ֆինանսական իրավիճակին ու փոխառնչություններին՝ որոշակի փոփոխություններ մտցնելով և նոր խաղի կանոններ սահմանելով արդեն ձևավորված ու ձևավորվող հարաբերություններում: 2015-

* Հիշյալ զարգացումներն ու սիրիական կանոնավոր բանակի առաջխաղացումը կարող էին ձեռնտու լինել նաև Թուրքիայի համար, որը երկար տարիներ չէր կարողանում Բոլիբում հասնել զգալի հաջողությունների՝ բացառությամբ թուրքական բանակի մի քանի դիտակետերի ստեղծմանը նահանգում: Բոլիբում այդ պահին ոչ միայն իսլամական ծայրահեղական ներուժ էր կուտակված, այլ նաև կար մոտ 4 մլն բնակչություն, և հարավից ու արևելքից կանոնավոր բանակի ճնշումների հետևանքով բնակչության արտահոսք կնկատվեր դեպի հյուսիսում գտնվող Աֆրին նահանգ: Թուրքիան ցանկանում է քրդաբնակ Աֆրինում փոխել ժողովրդագրական պատկերը՝ քրդաբնակ այդ հատվածում հասնելու թուրքամետ տրամադրությունների տարածմանը: Անկարան 2018 թ. սկզբից զբաղված էր այդ տրամադրությունների տարածմամբ, իսկ 2020 թ. սկզբին Բոլիբում և Հալեպում ընթացող ռազմական գործողությունների համատեքստում Թուրքիան դա կարող էր իրականացնել նաև Բոլիբից դեպի այս հատված շարժվող ոչ քուրդ բնակչության միջոցով:

2016 թթ. Միրիայում նկատվող քաղաքական ազդեցության և ռեսուրսների լայնածավալ վերաբաշխումների համատեքստում արձանագրվեց Դամասկոսի վերահսկողությունից դուրս մնացած ուժային և այլ կենտրոնների չեզոքացման գործընթաց, որը միտված էր ամրապնդելու Բաշար ալ-Ասադի իշխանությունը Միրիայի ամբողջ տարածքում: Կառավարությունը որոշեց, որ կենտրոնաձիգ և ամուր իշխանություն ձևավորելու համար պետք է սահմանել կոշտ խաղի կանոններ, որոնք թելադրված կլինեին Դամասկոսից, ինչպես նաև հնարավորություն կտային սիրիական իշխանություններին՝ երկրի առանձին հատվածները վերաինտեգրելու և Դամասկոսի ազդեցությունից դուրս մնացած ներքին և արտաքին զանազան ուժերին վերահսկողության դաշտ բերելու: Այս գործընթացը շարունակվեց նաև 2018-2019 թթ. և 2020 թթ. առաջին ամիսներին*:

* Խոսքը վերաբերում է թե՛ առանձին ուժերի, ուժային կենտրոնների, թե՛ ներքին խանական քաղաքական և ֆինանսական առանձին շրջանակների (մասնավորապես Բաշար ալ-Ասադի մորեղբոր տղայի՝ ազդեցիկ ու մեծահարուստ Ռամի Մախլուֆի դեմ գործողությունները) ազդեցության չեզոքացմանը միտված գործողություններին:

ԳԼՈՒԽ III
ԱՐՏԱՍԻՐԻԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ

3.1. Իսլամական ծայրահեղական կառույցների ակտիվ ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը («Ջաբհաթ ալ-Նուսրա», «Իսլամական պետություն»)

2010 թ. դեկտեմբերի 17-ին Թունիսում Մուհամմադ Բուազիզի կողմից ինքնահրդեհմամբ արաբական երկրներում սկսած զանգվածային շարժումներն ու ցույցերը ցնցեցին ողջ մուսուլմանական աշխարհը: 2010 թ. վերջից սկսված վերափոխումներն իրենց զգալի ազդեցությունն ունեցան մուսուլմանական աշխարհում ու դրա սահմաններից դուրս: Փոփոխությունների ենթարկվող մի շարք մուսուլմանական երկրներում իսլամական արմատական հոսանքները, որոնք մինչ այդ ընդդիմադիր կեցվածք ունեին և հիմնականում գործում էին ընդհատակում, դարձան ազդեցիկ քաղաքական ուժերից մեկը՝ որոշ հատվածներում հայտնվելով իշխանության դեկին (Թունիս, Լիբիա, Եգիպտոս և այլն): Վերոհիշյալ ուժերի հաջողությունը պայմանավորված էր նրանով, որ կարողացան օգտագործել մուսուլմանական հասարակություններում վաղուց նշմարվող հասարակական դժգոհությունը, փողոց դուրս եկած և վարչակարգերի հեռացումը պահանջող երիտասարդության ներուժը՝ դառնալով գալիք փոփոխությունների կարևոր ու ազդեցիկ գործոններից մեկը:

Վերոհիշյալ փոփոխությունների շարքից էր նաև իսլամական արմատականության առավել ծայրահեղական հոսանքների աննախադեպ ակտիվությունը մուսուլմանական աշխարհում «Արաբական գարնանից» հետո ընթացող զարգացումներում: Այս համատեքստում իսլամի առավել ծայրահեղական թևը ներկա-

յացնող հոսանքների կողմից հմտորեն խաղարկվեցին մուսուլմանական աշխարհում առկա հիմնախնդիրները՝ փորձելով հիմնավորել իսլամական աշխարհի շարիաթի սկզբունքների վրա կառուցված մեկ միասնական խալիֆայության կառուցման իրենց տեսլականը՝ որոշ դեպքերում բացահայտ առճակատման գնալով իսլամական առավել չափավոր արմատական ուժերի դեմ: Սակայն ծայրահեղականների հիմնական ակտիվությունը դրսևորվեց վերջիններիս զանգվածային ներհոսքով դեպի հյուսիսաֆրիկյան և մերձավորարևելյան տարածաշրջանային կոնֆլիկտների հորձանուտ, որտեղ ծայրահեղական խմբավորումներն իրականացրին անմիջական ռազմական պայքար, այդ թվում՝ մուսուլմանական վարչախմբերի դեմ: Պետք է փաստել, որ իսլամական ծայրահեղական ուժերին հաջողվեց լարվածության մեջ պահել վերոհիշյալ տարածաշրջանները, և միայն Սիրիայում տեղի ունեցող գործընթացները բավարար են ապացուցելու ասվածի ճշմարտացիությունը: Բացի դրանից՝ իսլամական արմատական միջավայրում մեկ այլ երևույթ տեսանելի դարձավ: Ի հայտ եկան իսլամական ծայրահեղ արմատական նոր առաջնորդներ, որոնք օժտված էին գաղափարական, մարտավարական, ռազմավարական, իսլամական հիմնադրույթների փայլուն իմացության ունակություններով և ունակ էին ճկուն ձևով արձագանքելու մուսուլմանական աշխարհում տեղի ունեցող գործընթացներին:

2012-2013 թթ. Սիրիայում ընդդիմադիր չափավոր խմբավորումներին զուգահեռ սկսեցին ակտիվություն ցուցաբերել իսլամական արմատական, նաև ծայրահեղ արմատական ուժերը: Հակամարտության սկզբից իսլամական ծայրահեղ արմատականները, հատկապես «ալ-Կաիդայի» զինյալները Սիրիա էին ներթափանցում Իրաքի տարածքից: Հիշյալ ուղիները հիմնականում սիրիաիրաքյան սահմանային այն ճանապարհներն էին, որոնք Սադդամ Հուսեյնի իշխանության վերջին տարիներին և հատկա-

պէս սաղդամյան վարչակարգի տապալումից հետո օգտագործվում էին իսլամականների կողմից Սիրիայից դեպի Իրաք անցնելու և Իրաքում արևմտյան (կռալիցիոն) ուժերի դեմ պայքարելու համար: 2012 թ. դեկտեմբերին «ալ-Կաիդայի» առաջնորդ Այման ալ-Ջաուահիրին հանդես եկավ հայտարարությամբ, որում նշեց, որ իր կողմից ղեկավարվող կառույցն աջակցելու և ակտիվորեն մասնակցելու է Սիրիայում հակակառավարական պայքարին՝ կոչ անելով Սիրիայի ժողովրդին ջիհադի՝ ընդդէմ Բաշար ալ-Ասադի վարչակարգի⁵²: Իրաքի արտգործնախարար Հոշիար Զիբարին Բաղդադում կայացած մամլո ասուլիսի ժամանակ հայտնեց, որ «ալ-Կաիդայի» բազմաթիվ մարտիկներ իրաքյան սահմանից անցել են Սիրիա՝ ահաբեկչական գործողություններ ծրագրելու և իրականացնելու համար: Նա նաև հայտնեց, որ միշտ զգուշացրել է սիրիական կողմին սիրիական սահմանը հատելու արմատականների ակտիվության մասին⁵³:

Իրաքի սահմանը դարձավ «ալ-Կաիդայի» զինյալների ներթափանցման ճանապարհներից մեկը: Սակայն իսլամականների հիմնական զանգվածի՝ դեպի Սիրիա ներթափանցման ճանապարհն անցնում էր Թուրքիայի տարածքով: Այստեղ տեղակայված էին ռազմական ճամբարներ, որտեղ ռազմական հմտություններ էին սովորում աշխարհի տարբեր երկրներից հավաքագրվող ջիհադականները: Վերջիններս, արձագանքելով ջիհադական կոչերին, ակտիվ ներգրավվեցին սիրիական հակամարտությանը:

Իսլամականների թվաքանակի ավելացումը սիրիական կառավարական ուժերի դեմ, ինչպես նաև այլախոհների և այլադավանների հանդեպ վայրագությունները իրական սպառնալիք ստեղծեցին երկրի էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների համար⁵⁴: Սիրիական հակամարտության սկզբից նկատվեց երկրում ավանդապես ազդեցիկ դիրքեր ունեցող «Մու-

սուլման եղբայրներ» իսլամական արմատական խմբավորման ակտիվ ներգրավվածությունը: Դրան զուգահեռ Սիրիայում ակտիվություն ցուցաբերեցին նաև իսլամական ծայրահեղ արմատական այլ խմբավորումներ ևս, որոնց շարքում աչքի ընկան ՋՆ, «Ահրար ալ-Շամ», «Լիուա ալ-Թաուհիդ», «Իրաքում և Շամում իսլամական պետություն» և այլ խմբավորումներ: Վերջինների ֆինանսական օժանդակությունը, սպառազինության մատակարարումն ու իսլամականներով համալրումն իրականացվում էին Սիրիային հարակից երկրներից՝ Թուրքիայից, Իրաքից, Հորդանանից, Լիբանանից, ինչպես նաև Պարսից ծոցի հարուստ միապետություններից:

«Ջաբհաթ ալ-Նուսրա». Սիրիայում ընթացող ջիհադական պայքարում ակտիվացավ նաև «ալ-Կաիդան», որի՝ Իրաքի ճյուղավորումը՝ ԻԻՊ-ն, փոքր զորաջոկատ ուղարկեց Սիրիա:

Ութ ջիհադականներ (վեց սիրիացի, մեկ սաուդյի և մեկ հորդանանցի) 2011 թ. օգոստոսին Իրաքից անցան սիրիական ալ-Հասաքա նահանգ, որտեղից էլ սկսվեց ԻԻՊ ճյուղավորման՝ ՋՆ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորման ակտիվ պայքարը Բաշար ալ-Ասադի վարչակարգի դեմ*: Այդ ջիհադականների թվում էր նաև Աբու Մուհամմադ ալ-Ջուլանին, որը դարձավ այդ կառույցի առաջնորդը⁵⁵:

Ալ-Ջուլանիի ղեկավարության տակ ՋՆ-ն դարձավ Սիրիայի իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների շրջանում ամենաազդեցիկ կառույցներից մեկը: Սիրիայի քաղաքային վայրերում ՋՆ-ն սկսեց իրականացնել մահապարտ-ահաբեկիչների ու մեքենաների պայթեցումներ և ճանապարհներին տե-

* Կառույցի առաջին ահաբեկչական գործողությունը 2011 թ. դեկտեմբերի 27-ի հարձակումն էր Դամասկոսի անվտանգության ուժերի տեղակայման վայրերից մեկի վրա: Մոտ մեկ ամիս անց՝ 2012 թ. հունվարի 23-ին, ՋՆ-ն ութրոպեանոց ձայնագրություն տարածեց, որում հայտարարվեց կառույցի ձևավորման մասին:

դադրված պայթուցիկների գործադրումներ՝ ուղղված հիմնականում սիրիական կառավարական հիմնարկների, ռազմական օբյեկտների, զինտեխնիկայի ու պաշտոնատար անձանց դեմ՝ տարածելով այդ գործողությունների տեսանյութերը համացանցում: Բացի ահաբեկչական բռնարարքների նախապատրաստման և իրականացման գործողություններից՝ ՋՆ-ն իրականացրեց նաև սոցիալական բազմաթիվ ծրագրեր՝ անապահով խավերին բաժանելով սննդամթերք և այլ օգնություն: Այդ առումով ՋՆ-ն փորձեց Սիրիայի հասարակական լայն շրջանակներում, այդ թվում՝ էթնիկ-դավանական փոքրամասնությունների շրջանում, վստահություն վաստակել՝ իր գործողությունները ներկայացնելով որպես պայքար զուտ ալաուիական իշխող փոքրամասնության դեմ:

Սկզբնական շրջանում լինելով բավական փակ, գործելով ծածուկ և զբաղվելով հիմնականում ահաբեկչական գործողություններով՝ ՋՆ-ն հետագայում սկսեց ընդլայնել իր ռազմական գործողությունների աշխարհագրությունը Սիրիայի կառավարական ուժերի դեմ մղվող ռազմական գործողություններում: Կառույցը ներառեց մի շարք սիրիական ընդդիմադիր ջիհադական խմբեր, որոնք, օգտվելով նաև օտարերկրացի ջիհադականների ծառայություններից, ներգրավվեցին Դամասկոսի և Դեր Զորի շրջակայքում իրականացվող գործողություններում՝ ակտիվություն ցուցաբերելով նաև Հալեպի, Իդլիբի, Դարաայի, Համայի և այլ շրջաններում, ստանալով ֆինանսական, ռազմական և զադափարական աջակցություն հակամարտության մեջ ներգրավված արտաքին ուժերից և զանազան այլ կազմակերպություններից: Հակակառավարական պայքարն արդյունավետ դարձնելու համար ՋՆ-ի շարքերում, բացի տեղացի երիտասարդ իսլամականներից, ներկայացված էին սիրիացի մի շարք փորձառու ծայրահեղականներ ու օտարերկրացի ջիհադականներ, որոնք մինչ

այդ գործում էին ջիհադի այլ ճակատներում: Նրանք ունեին ռազմական գործողությունների հարուստ փորձ և ամուր կապեր «ալ-Կաիդայի» ղեկավար շրջանակներում:

ԶՆ շարքերը հավաքագրման բավական բարդ և ոչ թափանցիկ համակարգով համալրվում էին նոր մարտիկներով: Միրիական հակամարտության սկզբից այստեղ ներկայացված ընդդիմադիր առավել չափավոր ուժերի, այդ թվում՝ ՍԱԲ-ի հանդեպ, ԶՆ-ն դրսևորեց հանդուրժող վարքագիծ՝ կոչ անելով բոլոր սկզբունքային առաջնահերթությունները, մարտավարական տարածայնություններն ու հակասությունները հետաձգել մինչև բաշարյան իշխանության տապալումը: ԶՆ-ն նպատակ ուներ նաև օգտվելու արտասիրիական որոշ ուժային կենտրոններից սիրիական չափավոր ընդդիմությանը, նաև ՍԱԲ-ին տրամադրվող օժանդակությունից:

2013 թ. դեկտեմբերի 18-ին կատարյան «ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը մոտ մեկժամանոց ռեպորտաժ ներկայացրեց, որտեղ ցուցադրեց ԶՆ առաջնորդ Աբու Մուհամմադ ալ-Ջուլանիի հարցազրույցը: Ալ-Ջուլանին նշեց, որ պատերազմն արդեն ավարտվում է, և Միրիայի տարածքի մոտ 70 տոկոսն արդեն վերահսկվում է իսլամականների կողմից: Հարցազրույցում նշվեց, որ Բաշար ալ-Ասադի տապալումից հետո ԶՆ-ն չի ձգտելու ապագա Միրիայում միանձնյա իշխանության: Միրիայի հետագա ղեկավարման համար, ըստ ալ-Ջուլանիի, պետք է մշակվեր Աստծո օրենքների հիման վրա մի ծրագիր, որում կներգրավվեին մուսուլմանական իրավունքի գիտակներ, Միրիայի տարբեր ցեղերի ներկայացուցիչներ և այլն: Ենթադրվում է, որ դրանով փորձ էր արվում քանդելու Միրիայում հետագա իշխանությունը արմատական իսլամականների կողմից միանձնյա բռնագրավելու կարծրատիպը՝ տալով «կառուցողական» առաջարկներ, թե ինչ շերտեր են ներգրավված լինելու հետագա իշխանության մեջ: Իսկ

ալ-Ջուլանիի արտահայտած միտքն առ այն, որ տարածաշրջանում ԱՄՆ-Իրան հարաբերությունների ջերմացմամբ սպառնալիք էր ստեղծվում Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև սաուդյան էներգետիկ ռեսուրսների համար, ՋՆ առաջնորդի կողմից փորձ էր չնեղացնելու իր ֆինանսավորումն ապահովող և սիրիական հակամարտության մեջ ներգրավված ընդդիմադիր խմբավորումների հիմնական դոնորներ համարվող ուժերին (Ս. Արաբիա, Կատար և այլն): Դրանով նաև ՋՆ առաջնորդը ցուցադրեց տարածաշրջանային զարգացումներին տեղյակ լինելու և վերլուծելու իր ունակությունները⁵⁶:

Աբու Մուհամմադ ալ-Ջուլանիի ռազմավարությունը Սիրիայում տվեց իր արդյունքները. եթե հաշվի առնենք, որ ԻՇԻՊ-ն այդ ժամանակ համալրված էր հիմնականում օտարերկրյա զինյալներով և փորձում էր բռնի ու բիրտ միջոցներով հաստատել շարիաթի օրենքներ, ապա ՋՆ-ն իր շարքերում ընդգրկում էր հիմնականում սիրիացի ջիհադականների, որոնցից շատերը Իրաքում պայքարել էին ամերիկյան ուժերի դեմ (այսինքն՝ ունեին զինված պայքարի փորձ), ծանոթ էին տեղանքին, իսկ կառույցի մոտեցումները ազգային փոքրամասնությունների, իսլամական օրենքների և այլնի վերաբերյալ ըմբռնելի էին մուսուլմանների համար (համենայն դեպս, այդ փուլում):

ՋՆ-ն և Սիրիայի հյուսիս-արևմուտքում ընթացող գործընթացները

ՋՆ-ն սիրիական հակամարտության ընթացքում գրեթե միշտ ակտիվ է եղել և ազդեցիկ դիրքեր ունեցել Սիրիայի հյուսիս-արևմուտքում, մասնավորապես Իդլիբ նահանգում: 2012-2014 թթ. Իդլիբ նահանգի մեծ մասը դուրս մնաց սիրիական իշխանությունների վերահսկողությունից՝ բացի մարզկենտրոն Իդլիբից և մի քանի խոշոր բնակավայրերից: 2014 թ. վերջին Իդլիբ նահանգում հաս-

տատված ընդդիմադիր խմբավորումների շրջանում ազդեցիկ դիրքեր ստանձնեցին «Ահրար ալ-Շամր» (ԱՇ) և սիրիական հակամարտությունում «ալ-Կաիդան» ներկայացնող ՋՆ-ն: Վերջիններս 2015 թ. մարտին հիմնված «Ջայշ ալ-Ֆաթի» կառույցի ամենաառանցքային խմբավորումները դարձան՝ ակտիվորեն ներքաշվելով Իդլիբ նահանգում տեղի ունեցող գործընթացների մեջ: 2015 թ. վերջին «Ջայշ ալ-Ֆաթիին» հաջողվեց վերահսկողություն ունենալ Իդլիբ նահանգի զգալի հատվածի, այդ թվում՝ մարզկենտրոնի ու մի շարք այլ բնակավայրերի վրա: Այդ ընթացքում միավորվելու և մեկ միասնական խմբավորման վերածվելու քննարկումներ էին ընթանում ԱՇ-ի և ՋՆ-ի միջև, սակայն խնդիրը ՋՆ-ի՝ «ալ-Կաիդայի» հետ ունեցած կապն էր, որը խանգարում էր երկու խմբավորումների միաձուլմանը: 2016 թ. հուլիսին ՋՆ-ն վերանվանվեց «Ջաբհաթ Ֆաթի ալ-Շամի» (ՋՖՇ) և հայտարարություն տարածեց, որ որևիցե կապ չունի «ալ-Կաիդայի» հետ (ինչը, իհարկե, չէր համապատասխանում իրականությանը): Ամեն դեպքում 2016 թ. դեկտեմբերին սիրիական բանակի կողմից Հալեպ քաղաքի ազատագրման ռազմական գործողությունները պետք է դրդեին ՋՖՇ-ին և ԱՇ-ին միավորվելու, սակայն վերջիններիս միաձուլումը չստացվեց, որի հիմնական պատճառներն էին.

- ԱՇ-ն և մի շարք այլ ընդդիմադիր խմբավորումներ ենթադրում էին, որ չնայած ՋՖՇ-ի հայտարարություններին՝ վերջինիս ու «ալ-Կաիդայի» միջև կապը չի խզվել:
- Իդլիբում ակտիվ գործող ընդդիմադիր խմբավորումները, այդ թվում՝ ԱՇ-ն, մտավախություն ունեին, որ ՋՖՇ-ն նպատակ էր դրել գերակա դիրքեր ունենալու Սիրիայի հյուսիսում այն խմբավորումների նկատմամբ, որոնք նախընտրում էին կապեր ունենալ Թուրքիայի հետ (ՋՖՇ-ն դեմ էր հանդես գալիս Թուրքիայի հետ սերտ կապերին):

Հիշյալ հակասությունները 2017 թ. հունվարին պատճառ դարձան Իդլիբում ընդդիմադիր ճամբարի, մի կողմից՝ ՋՖՇ-ի (հետագայում կառույցը վերանվանվեց «Հայա Թահրիր ալ-Շամի» (ՀԹՇ)) և դրան հարող խմբավորումների, իսկ մյուս կողմից՝ ԱՇ-ի և դրա հովանու տակ գործող կառույցների մասնատման:

Սիրիայի հյուսիս-արևմուտքում ՀԹՇ-ն նպատակ էր դրել ընդդիմադիր ճամբարը ներկայացնող կառույցների նկատմամբ հասնելու գերակայության, որն իրականացվելու էր ինչպես ռազմադաշտում, այնպես էլ նահանգը կառավարելու քաղաքականության ոլորտում: 2017-2019 թթ. ՀԹՇ-ն ոչ միայն ակտիվորեն մասնակցում էր սիրիական կառավարական ուժերի դեմ մղվող մարտերին, այլ նաև սկսեց պայքարը ընդդիմադիր այլ կառույցների դեմ, ինչը էլ ավելի ամրապնդեց կառույցի դիրքերը հատկապես Իդլիբ նահանգում: Մասնավորապես ՀԹՇ-ն կարողացավ պարտության մատնել սիրիական հակամարտությունում երբեմնի հզոր դիրքեր ունեցող ԱՇ-ին, իսկ 2017 թ. ամռանը կառույցին հաջողվեց ամբողջությամբ գրավել Իդլիբ մարզկենտրոնը և դուրս գալ Թուրքիայի հետ կապող սահմանային Բաբ ալ-Հաուա անցակետ: 2017 թ. վերջին Իդլիբում ՀԹՇ-ն հիմնեց «Սիրիական փրկության կառավարություն» կոչված մարմինը՝ որպես Սիրիայի հյուսիս-արևմուտքում ՀԹՇ հովանու տակ գործող կառավարչական կառույց: 2019 թ. հունվարին ՀԹՇ-ն կարողացավ պարտության մատնել Լաթակիա, Իդլիբ և Հալեպ նահանգներում ազդեցիկ դիրքեր ունեցող մի այլ՝ «Նուր ալ-Դին Ջինքի» խմբավորմանը և ստիպել մյուս բոլոր ընդդիմադիր կառույցներին ընդունել «Սիրիական փրկության կառավարությունը» որպես Սիրիայի հյուսիս-արևմուտքում գործող միակ կառավարչական միավոր: Այսպիսով՝ 2019 թ. սկզբից կառույցին հաջողվեց գերակա դիրքեր ունենալ Իդլիբում՝ վերահսկելով նահանգի մեծ մասը:

ՀԹԾ-ն հիմնականում կազմված էր 4 ստորաբաժանումներից, որոնք կոչվում էին Մուհամմադ մարգարեին հաջորդած 4 ուղղափառ խալիֆների անունով: Բացի դրանից՝ կառույցն ուներ իր հովանու տակ գործող մի շարք այլ խմբավորումներ: Կառույցին հավաքագրվելու համար ակտիվորեն օգտագործվում էին սոցիալական ցանցերը:

Իդլիֆում սիրիական հակամարտության ընթացքում, բացի ՀԹԾ-ից, ակտիվորեն գործել են նաև իսլամական ծայրահեղական այլ խմբավորումներ, մասնավորապես վերոհիշյալ «Ահրար ալ-Շամը», «Նուր ալ-Դին Զինքին», «Հուրաս ալ-Դինը», «Թուրքիստանի իսլամական կուսակցությունը», «Ջամաա Անսար ալ-Իսլամը», «Անսար ալ-Թաուհիդը» և այլ խմբավորումներ, որոնք, սակայն, զիջում էին ՀԹԾ-ին թե՛ ազդեցության, թե՛ Սիրիայի այս հատվածում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու առումով: Ինչ վերաբերում է ԻՊ-ին, ապա վերջինս չունեւ մեծ ներկայություն Իդլիֆում, սակայն ունեցել է բջիջներ, որոնք ակտիվ են եղել սիրիական հակամարտության ընթացքում: Հիշյալ կառույցների և ՀԹԾ-ի միջև տարաձայնություններն ու հակասությունները պահպանվեցին, և դրանք պայմանավորված էին ՀԹԾ-Թուրքիա կապերով: Մասնավորապես այդ կառույցները քննադատում էին ՀԹԾ-ին նրա համար, որ վերջինս թույլատրեց Թուրքիային ռազմական դիտակետեր ստեղծել Իդլիֆում, և կոչ էին անում դիմակայել թուրքական ռազմական ներկայությանն այդտեղ: Տեղի բնակչության կողմից որոշ դժգոհություններ և ընդվզումներ ևս նկատվեցին այդ տարիների ընթացքում, որոնք կառույցը կարողացավ հաղթահարել տեղերում իրականացվող քաղաքականության, բռնաճնշումների, այլ խմբավորումներից տեղերում ստացվող աջակցության, այլախոհների առնանգման և սպանությունների միջոցով:

2020 թ. սկզբին Իդիբում սիրիական կառավարական ուժերի առաջխաղացումը բարդ դրության մեջ դրեց իսլամական ծայրահեղական կառույցներին, այդ թվում՝ ՀԹՇ-ին: Բարդ իրավիճակում հայտնվեց նաև Թուրքիան, որը ստիպված էր տեղափոխել Իդիբում կառուցած իր ռազմական դիտակետերը դեպի նահանգի խորքերը:

«Իսլամական պետություն». Սիրիայում ՋՆ առաջխաղացումը ստիպեց Իրաքում գործող «Իրաքում իսլամական պետություն» կառույցին ակտիվացնել ներկայությունը սիրիական հակամարտության մեջ, որը կառույցն իրականացրեց «Իրաքում և Շամում իսլամական պետություն» (ԻՇԻՊ) խմբավորման միջոցով: Վերջինս ակտիվորեն ներգրավվեց հակամարտությանը և իր վերահսկողության տակ անցած տարածքներում փորձեց ինքնուրույն քաղաքականություն իրականացնել՝ ի ցույց դնելով այդ հաստատված պետական միավոր ստեղծելու ԻԻՊ նկրտումները: Նման վարքագիծն ու սիրիական հակամարտությունում տարվող ինքնուրույն մարտավարությունը հարուցեցին ընդդիմադիր ճամբարի զայրույթն ու թշնամանքը, որոնք հանգեցրին ԻԻՊ-ի հետ բախումների: Ոգեշնչվելով 2012-2013 թթ. ընթացքում Սիրիայում ձեռք բերած որոշ ռազմական հաջողություններից և համալրվելով տարբեր իսլամական խմբավորումներով ու ջիհադականներով՝ ԻՇԻՊ-ն գնաց ռազմական առճակատման ինչպես կառավարական ուժերի, այնպես էլ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների ու այլ ընդդիմադիր ուժերի դեմ⁵⁷:

ԻԻՊ առաջնորդ Աբու Բաքր ալ-Բադդադիի՝ ապրիլի 8-ի ուղերձում նշվեց, որ ՋՆ-ն ԻԻՊ-ի ճյուղավորումն էր Սիրիայում: ԻԻՊ-ն ու դրա ճյուղավորումները պետք է միավորվեն ԻՇԻՊ ընդհանուր կառույցի մեջ⁵⁸: Որոշ մուսուլմանական արմատական խմբավորումներ քննադատեցին ԻՇԻՊ նման վարքագիծը՝ սկսած

կառույցի առաջնորդի՝ Աբու Բաքր ալ-Բադդադիի տիտղոսների շարքում ալ-Կուրայշի «տիտղոսի»^{*} չարաշահումից, մինչև սիրիական իշխանությունների կողմից հովանավորվելու մեղադրանքները: Որոշ ընդդիմադիր ուժեր քննադատեցին նաև ՋՆ-ի հանդես գալը՝ որպես «ալ-Կաիդայի» ճյուղավորում, ինչը մինչ այդ չէր բարձրաձայնվում:

2014 թ. սկզբից Սիրիայում ռազմական լարված բախումներ գրանցվեցին սիրիա-լիբանանյան սահմանամերձ շրջաններում, որտեղ բավական մեծ ուժեր էին կուտակված ինչպես կառավարական ուժերի, այնպես էլ ընդդիմադիր զինյալ խմբավորումների կողմից: Մարտերը շարունակվեցին նաև Սիրիայի հյուսիս-արևմտյան ճակատում, որտեղ, հատկապես Հալեպի կենտրոնական բանտի մատույցներում, նույնպես կատաղի կռիվներ էին ընթանում^{*}: Սակայն, ուշագրավ էին Հալեպի, Ազազի, Իդլիբի և հյուսիսային այլ շրջաններում իսլամական արմատական ուժերի, ավելի կոնկրետ՝ «Իսլամական ճակատի» ու ՋՆ-ի, իսկ մյուս կողմից ԻՇԻՊ-ի միջև տեղի ունեցող բախումները: ԻՇԻՊ-ն շարժվեց արևելք՝ հաստատվելով Եփրատ գետի երկայնքով Ջարաբլուս, ալ-Ռակկա, Դեր Զոր և այլ քաղաքներում, որը բնական սահման էր իսլամականների համար արևելքից քրդերի դեմ պայքարելու, ինչպես նաև, հաստատվելով վերոհիշյալ քաղաքներում, արդյունավետ պարտիզանական մարտեր վարելու համար: Այստեղ ԻՇԻՊ-ը վայելում էր տեղի որոշ արաբ ցեղերի աջակցությունը, իր մասնակցությունն ուներ էներգակիրների վաճառքում՝ ստանալով որոշակի շահույթ⁵⁹: Բացի դրանից՝ այստեղ ԻՇԻՊ-ը մոտ էր

^{*} Աբու Բաքր ալ-Բադդադին մեծարվում էր ալ-Կուրայշի «տիտղոսով», որով ընդգծվում էր Աբու Բաքրի՝ Մուհամմադ մարգարեի ցեղակից լինելու հանգամանքը:

^{*} Այդ հատվածում ծավալված թեժ բախումները ևս մեկ անգամ ապացուցեցին հակամարտող կողմերի Դամասկոս-Համա-Հոմա-Հալեպ ռազմավարական կարևորություն ունեցող գծի երկայնքով վերահսկողություն սահմանելու ցանկությունը:

Իրաքի հետ սահմանին, որտեղից նրան լուրջ աջակցություն էր գալիս նաև մարդկային ու ռազմական հոսքերի առումով, իսկ ցանկության դեպքում կառույցի զինյալներն անարգել հատում էին իրաքյան սահմանը՝ մասնակցելով Իրաքի արևմտյան, հիմնականում սուննիաբնակ տարածքներում իրականացվող ռազմական գործողություններին:

ԻՇԻՊ-ն, աստիճանաբար վերածվելով ազդեցիկ գործոնի, քայլ առ քայլ ընդլայնեց իր կողմից վերահսկվող տարածքները ոչ միայն Սիրիայում, այլև 2014 թ. սկզբից հարևան Իրաքում: Տարվա սկզբից իսլամականների վերահսկողության տակ անցան իրաքյան ալ-Անբար նահանգի որոշ հատվածներ: 2014 թ. հունիսի սկզբից ԻՇԻՊ-ն լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Իրաքի հյուսիսում. հունիսի 10-ին ԻՇԻՊ-ին հաջողվեց ամբողջությամբ իրեն ենթարկել Իրաքի հյուսիսային Մոսուլ քաղաքը, փախուստի մատնել իրաքյան կառավարական ուժերին⁶⁰, շարժվել դեպի հարավ, կարճ ժամանակում նվաճել մի շարք քաղաքներ՝ մոտենալով մայրաքաղաք Բաղդադին:

ԻՇԻՊ գործողություններում նկատվող նպատակայնացումն ու գաղափարական հիմնավորումները նույնպես կարևոր դեր էին խաղում: Մինչ տարածաշրջանային իսլամական շատ ուժեր հայտարարում էին, որ պայքարում են իսլամական պետություն ստեղծելու համար, ԻՇԻՊ-ն իր անվանումով («Իրաքում և Շամում իսլամական պետություն») ենթադրում էր արդեն իսլամական պետության գոյություն, որին կարող էին միանալ մուսուլմանները, իսկ իր առաջնորդի՝ Աբու Բաքր ալ-Բադդադիի տիտղոսներում Մուհամմադ մարգարեի ցեղանվան ու առաջին խալիֆ Աբու Բաքրի անվան վկայակոչումը (Աբու Բաքր ալ-Բադդադի ալ-Կուրայշի ալ-Հաշիմի) նպատակ էր հետապնդում ընդգծելու մարգարեի ցեղին պատկանող ԻՇԻՊ առաջնորդի անձի կարևորությունն ու առանձնահատուկ վերաբերմունքը մուսուլմանների կողմից⁶¹:

«Իսլամական պետության» հռչակումը դարձավ մի նոր առիթ տարբեր ուղղությունների պատկանող սուննի ալիմների ու իսլամականների վիճաբանության և բազմաթիվ այաթների ու հադիսների վկայակոչմամբ՝ իրարամերժ կարծիքներ արտահայտելու համար: Հակասությունը շատ սուր բնույթ էր ստացել, իսկ դրսևորման ձևերն էլ բազմազան էին՝ սկսած հաստատվոր գրքեր լույս ընծայելուց, համացանցով դասախոսություններ տարածելուց մինչև մզկիթներում քարոզի ընթացքում հակառակորդներին պախարակելը: Ոճը նույնպես շատ տարբեր էր. այն տատանվում էր անհավատության մեջ փոխադարձ մեղադրանքներից և հայհոյանքներից մինչև սրբազան տեքստերի վկայակոչում ու վերլուծում⁶²:

ԻՇԻՊ վերահսկողության տակ էին սիրիական և իրաքյան էներգակիրներով հարուստ որոշ տարածքներ, որտեղ կառույցը զբաղվում էր նավթագազային պաշարների վաճառքով, ինչպես նաև կարողանում էր որոշակի օգուտներ քաղել սիրիական հարակից տարածքներով անցնող նավթամուղներով և գազամուղներով փոխադրվող էներգետիկ ռեսուրսների ապահով տեղափոխումից, ինչը ևս լրացուցիչ ֆինանսական հոսքեր էր ապահովում կառույցին: ԻՇԻՊ ֆինանսական ռեսուրսները հնարավորություն էին տալիս իսլամականներին սպառազինվելու, նոր անդամներ հավաքագրելու և ռազմական գործողությունների վրա զգալի միջոցներ ծախսելու համար:

2014 թ. հունիսի 29-ին ԻՇԻՊ-ի կողմից հայտարարություն տարածվեց առ այն, որ կառույցն այսուհետ կոչվելու է «Իսլամական պետություն» (ԻՊ), իր կողմից վերահսկվող տարածքներում հռչակվում էր խալիֆայություն՝ հայտարարելով նոր խալիֆի անունը. դա կառույցի առաջնորդ Աբու Բաքր ալ-Բադդադին էր⁶³: Հուլիսի 5-ին Իրաքի Մոսուլ քաղաքի «ալ-Նուրի» մզկիթում (ճիշտ այն վայրից, որտեղից դարեր առաջ Երկրորդ խաչակրաց արշա-

վանքի դեմ ռազմական գործողություններ սկսելու նախօրեին Սալահ ալ-Ղինը ուղերձով հանդես եկավ մզկիթում հավաքված հավատացյալների առաջ) ուրբաթ օրվա խուտբայի (քարոզ) ժամանակ մուսուլմաններին ներկայացավ ԻՊ նորահռչակ խալիֆը (Աբու Բաքր ալ-Բադդադին կամ խալիֆ Իբրահիմը)՝ կոչ հղելով մուսուլմաններին հավատարմության երդում տալ իրեն⁶⁴:

Մերձավորարևելյան տարածաշրջանում ի հայտ եկավ մի ուժ՝ իսլամական ծայրահեղ արմատական մի կառույց, որը մարտահրավեր նետեց աշխարհին: ԻՊ-ի կողմից խալիֆայության ստեղծման վերաբերյալ հունիսի 29-ի հայտարարությունը, փաստորեն, արձանագրեց իրողությունը՝ արդեն փաստացի իսլամական պետության գոյությունը: Այս համատեքստում կարելի էր առանձնացնել մի քանի գործոններ, որոնք ԻՊ-ն օժտում էին որոշակի առանձնահատկություններով:

1. ԻՊ-ն հանդես էր գալիս որպես նոր պետական միավոր, ասել է թե, այսպես կոչված, «իսլամական խալիֆայություն», որը հիմնվել կամ հիմնվում էր արաբական աշխարհի սրտում: Նոր ժամանակներում մուսուլմանական աշխարհում նման պետություն գոյություն չի ունեցել: Տալիբական Աֆղանստանը, որը նույնպես առաջնորդվում էր շարիաթի օրենքներով և գոյատևեց 1996-2001 թթ., խալիֆայություն կոչվելու հավակնություններ չուներ: Բացի դրանից՝ մուսուլմանական աշխարհի կենտրոնում ստեղծված խալիֆայության առաջնորդի տիտղոսներում Մուհամմադ մարգարեի ցեղակից լինելու հանգամանքի շեշտումը կոչված էր բարձրացնելու նորահռչակ խալիֆի հեղինակությունն իսլամական աշխարհում:

2. ԻՊ-ն ուներ որոշակի ռազմական ներուժ, որը գործնականում ընդլայնում էր ԻՊ տարածքները, և որտեղ ավելանում էր ռազմական փորձ ունեցող զինյալների թվաքանակը: Վերջինները պատրաստ էին գործելու աշխարհի այլ հատվածներում արդեն

գոյություն ունեցող իսլամական ծայրահեղ արմատական ցանցերի միջոցով:

3. ԻՊ-ն ուներ ֆինանսական ռեսուրսներ, և ըստ տարբեր փորձագիտական գնահատականների՝ ԻՊ ինքնաֆինանսավորման գործակիցը բավական բարձր էր, հետևաբար միայն արտաքին դոնորներից կառույցի ֆինանսավորման դադարեցումը չէր կարող կազմալուծել այն ֆինանսապես:

4. ԻՊ-ն մեծ գումարներ էր ներդնում գաղափարական-քարոզչական ոլորտում: Այն իր գաղափարները քարոզելու և գրավիչ դարձնելու համար կիրառում էր ժամանակակից տեխնոլոգիաներ, IT մասնագետներ, համացանց, գովազդային ու տեղեկատվական բարձրորակ տեսահոլովակներ և այլն, որոնք նախկինում բացակայել էին այլ իսլամական ծայրահեղ արմատական կառույցների մոտ:

5. Կառույցի ինքնուրույնությունն ու ֆինանսական ինքնաբավությունը, որոնց մշտապես ձգտել էր ԻՊ-ն, հիմք էին տալիս պնդելու, որ այն անկախ էր: Նույնիսկ եթե ընդունենք, որ ԻՊ-ն՝ 2011-2012 թթ. որպես սիրիական հակամարտության հակաբաշարյան ճամբարի բաղկացուցիչ մաս, ստացել էր որոշ աջակցություն (ռազմամթերք, ֆինանսական օժանդակություն, մարդկային հոսքեր և այլն), դա չէր նշանակում, որ ԻՊ-ն պետք էր դիտել մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային որոշ պետությունների կամ ուժային կենտրոնների կողմից ներդրված նախագիծ: Դա խանգարում էր ճիշտ ընկալելու իսլամական ծայրահեղ արմատական արդի զարգացումներն ու դրանցում ԻՊ դերակատարումը, համապատասխան գնահատականներ տալու ԻՊ գործունեությանը, վերլուծելու իսլամականների ներկայիս տեսական և գործնական հնարավորությունները: Զիհադական պայքարում ԻՊ առաջնորդների առանձնահատուկ մոտեցումներն ու կառույցի վարքագծում նկատվող յուրահատկու-

թյունները ԻՊ-ն դարձրին գործոն, որը, սակայն, հետագայում կարող էր ուղղորդվել և ուղղորդվեց այս կամ այն ուժերի կողմից: Այս ամենի հանրագումարը ԻՊ-ն վերածում էր նոր իրողության ոչ միայն մերձավոր արևելյան, այլև համաշխարհային աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական զարգացումներում⁶⁵:

2015 թ. սկզբից ԻՊ-ն Սիրիայում սկսեց զիջել տարածքներ (բացառություն էին Պալմիրայի նվաճումն ու արևմտյան ուղղությամբ որոշակի առաջխաղացումը): Իսլամականների առաջին խոշոր պարտությունը սկսվեց քրդաբնակ Քոբանիից, որն ազատագրվեց քրդական ուժերի կողմից տարվա սկզբին: Աստիճանաբար զիջելով տարածքներ՝ ԻՊ-ն կորցրեց Սիրիայում իր կողմից վերահսկվող հատվածի զգալի մասը: 2020 թ. մայիսի դրությամբ ԻՊ-ն Սիրիայի հիմնականում արևելյան որոշ հատվածներում ուներ ակտիվ բջիջներ, որոնցով կարողանում էր հարձակումներ իրականացնել և զբաղվել ահաբեկչական գործունեությամբ երկրի տարբեր հատվածներում: 2020 թ. սկզբին ԻՊ-ն այլևս հանդես չէր գալիս որպես տարածքներ վերահսկող կառույց, սակայն այն մնում էր և դեռևս երկար կմնա որպես վտանգ թե՛ Սիրիայում, թե՛ Սիրիայից դուրս: Սկզբնավորումից ի վեր ԻՊ-ն բազմաթիվ ահաբեկչական հարձակումներով է աչքի ընկել նաև Սիրիայի տարածքից դուրս՝ աշխարհի մի շարք երկրներում՝ վերածվելով սպառնալիքի նաև ամբողջ աշխարհի համար:

3.2. Միրիական հակամարտությունն ու օտարերկրացիների ներգրավվածությունը (կովկասցիների օրինակով)

2010 թ. վերջից սկսված «Արաբական գարունը» և դրանով պայմանավորված հեղափոխական գործընթացները նպաստեցին իսլամական ծայրահեղականության ակտիվությանը մուսուլմանական աշխարհում, այդ թվում՝ Կովկասի մուսուլմանների շրջանում: Այդ համատեքստում իսլամական ծայրահեղականության մեջ ի հայտ եկած նոր իրողությունները նպաստեցին կովկասյան տարածաշրջանի իսլամական արմատականության ակտիվացմանը: 2011-2012 թթ. ընթացքում Կովկասյան տարածաշրջանում նկատելի էին իսլամի արմատական գաղափարների խորացման ու սուննի ծայրահեղ արմատականների պայքարի առարկայական դրսևորումների փորձեր: Դրան զուգահեռ կովկասցիները սկսեցին ուղևորվել Միրիա: Նրանք տեղափոխվում էին Մերձավորևեյլան տարածաշրջան՝ մաս կազմելու այնտեղ ընթացող ջիհադական պայքարին ոչ միայն կրոնագաղափարական համոզմունքներով դրդված, այլև գումար վաստակելու համար: Ռուսաստանի հյուսիսկովկասյան շրջաններում անվտանգության լուրջ միջոցառումները իսլամականներին մղում էին դեպի հարավ՝ ավելի «անպաշտպան» ջիհադական ճակատներ, որոնցից էր նաև Միրիան: Թուրքիային սահմանակից լինելը նույնպես նպաստում էր կովկասյան իսլամական ներուժի կողմից թուրքական տարածքներում ստեղծված ռազմական ճամփարներն օգտագործելու և դեպի Միրիա ու աշխարհի այլ հատվածներ տանող տարանցիկ ուղիները սեփական նպատակներին ծառայեցնելու համար:

Միրիայում ընթացող պայքարը կովկասցի իսլամականներին աչքի ընկնելու լավ հնարավորություն տվեց, քանզի նրանցից ոմանք չեչենական պատերազմներից հետո ռազմական լայնածավալ գործողությունների չէին մասնակցել և սահմանափակվել

էին տեղային հարձակումներ ու ահաբեկչական բռնարարքներ իրականացնելով: Այս ամենը հնարավորություն ընձեռեց նոր սերնդի կովկասցի ջիհադակ աններին մարտական առաջին մկրտությունը ստանալու Սիրիայում՝ իրենց փորձառությունը հետագայում պատերազմի այլ ճակատներում, հատկապես Կովկասում գործի դնելու համար:

Մերձավոր Արևելքի հակամարտություններում աչքի ընկած կովկասցի ջիհադականների գործողություններում նկատվեցին նաև ուղղորդումներ, որոնք ծառայեցվում էին ինչ-ինչ խնդիրներ լուծելու համար: Նման մոտեցումներով էր առաջնորդվում Թուրքիան, որն ակնառու դարձավ 2014 թ. գարնանը Սիրիայի Լաթակիա նահանգում ծավալված իրադարձություններում: Քեսաբի և հարակից հայկական գյուղերի վրա 2014 թ. մարտի 21-ին սիրիական ընդդիմադիր խմբավորումների, մասնավորապես իսլամական արմատական խմբավորումների հարձակումն ի հայտ բերեց թուրքական իշխանությունների նպատակները Սիրիայի այս հատվածում: Թուրքական իշխանությունների կողմից կովկասցի ջիհադականներով համալրված իսլամական խմբավորումների ուղղորդման մասին էին խոսում նաև այդ խմբավորումները դեկավարող մի շարք առանցքային կովկասցի իսլամականների՝ Թուրքիայում լինելու և սիրիա-թուրքական սահմանամերձ շրջաններում ռազմական ճամբարներ ունենալու փաստերը⁶⁶: Վերոշարադրյալի համատեքստում Սիրիայում հիմնականում թյուրքերով (թուրքեր, ադրբեջանցիներ, թաթարներ և այլն) և չեչեններով համալրված իսլամական ծայրահեղական խմբավորումների թվաքանակի ավելացում նկատվեց հատկապես Հալեպի ու Իդլիբի սիրիական նահանգներում և հյուսիսային այլ շրջաններում, որոնց ռազմական, ֆինանսական և այլ բնույթի օժանդակությամբ զբաղվող Թուրքիան իրեն հարող սիրիական տարածքների վերաբերյալ ուներ սեփական ծրագրերը:

Կովկասցի իսլամականները աչքի ընկան ոչ միայն որպես շարքային զինյալներ, այլ նաև որպես զանազան խմբավորումներ ղեկավարող հմուտ հրամանատարներ և հեղինակավոր առաջնորդներ, որոնց փորձն օգտագործվեց Սիրիայի և Իրաքի տարբեր հատվածներում իրականացվող ջիհադում: Նրանցից հայտնի են Աբու Ումար ալ-Շիշանին (Թարխան Բաթիրաշվիլի, սպանվել է 2016 թ. հունիսին: Նրա մասին խոսել ենք ենթագլխի վերջում), Սայֆուլլահ ալ-Շիշանին (սպանվել է 2016 թ. փետրվարի 6-ին Հալեպի մոտ), Մուսլիմ ալ-Շիշանին (Ամիր Մուսլիմ), «Կովկասի էմիրությունը» ներկայացնող Սալահ ալ-Դին ալ-Շիշանին և այլք:

Սիրիայում տեղի ունեցող ջիհադական պայքարում ակտիվորեն ներքաշված էին կովկասցիներով համալրված այնպիսի խմբավորումներ, ինչպիսիք էին՝ «Կովկասի էմիրության» ճյուղավորումը, «Ջայշ ալ-Մուհաջիբին ուա ալ-Անսար», «Սիրիայում Կովկասի էմիրություն», «Ջայշ ալ-Ուսրա», «Աջնադ ալ-Կաուկազ» խմբավորումները և առանձին գործող կամ իսլամական ծայրահեղ արմատական այլ խմբավորումների շարքերում ներգրավված կառույցները: Կովկասցի իսլամականներով համալրված կառույցների ջիհադական պայքարի տարածքը հիմնականում ընդգրկում էր Սիրիայի Լաթակիա, Իդլիբ, Հալեպ և ալ-Ռակկա նահանգները: Նկատվել է կովկասցի իսլամականների ակտիվություն «Իսլամական պետության» շարքերում Սիրիայի այլ հատվածներում ևս⁶⁷:

Բազմաթիվ տեղեկություններ կան Մերձավոր Արևելքում ընթացող ջիհադին Կովկասից մասնակցող իսլամականների թվաքանակի վերաբերյալ: Այսպես օրինակ, 2015 թ. տարածված որոշ տեղեկությունների համաձայն՝ Հյուսիսկովկասյան տարածաշրջանը ներկայացնող 1000-ից ավելի զինյալներ արդեն պայքարում էին Սիրիայում և Իրաքում⁶⁸: Ըստ Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության տնօրեն Ալեքսանդր Բորտնի-

կովի՝ 2015 թ. փետրվարին հայտնած տեղեկության՝ Սիրիայում և Իրաքում կովում էին ՌԴ մոտ 1700 քաղաքացիներ, որոնց թիվը վերջին տարվա ընթացքում կրկնապատկվել էր⁶⁹: 2015 թ. հոկտեմբերին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հայտնեց «Իսլամական պետության» կազմում Սիրիայում և Իրաքում կովող ԱՊՀ երկրները ներկայացնող 5000-7000 իսլամականների մասին⁷⁰: Պուտինի հիշյալ հայտարարությունից մեկ օր առաջ, «Իսլամական պետության» կազմում ՌԴ քաղաքացիների թվի հետ կապված, արտահայտվել էր ՌԴ ՆԳ փոխնախարար Ալեքսանդր Գոբովոյը, որը նշել էր մոտ 2500 Ռուսաստանի քաղաքացիների մասին⁷¹:

Պարզ է, որ հիշյալ թվերը այնքան էլ ճշգրիտ լինել չէին կարող. հասկանալի էր, որ ռուսաստանցի իսլամականներից ոչ բոլորն էին ներկայացնում Ռուսաստանի կովկասյան շրջանները: Բացի դրանից՝ Մերձավոր Արևելքում կովող, այսպես կոչված, «ռուսախոս» իսլամականներից ոչ բոլորն էին տեղափոխվել հիշյալ տարածաշրջան հենց Կովկասից: Հայտնի էին դեպքեր, երբ Սիրիայում և Իրաքում ընթացող ջիհադին մասնակցել էին չեչեն փախստականներ Ավստրիայից, Թուրքիայից, ուսանողներ Եգիպտոսից և այլն⁷²:

Աղբբեջանցիներ. աղբբեջանցի իսլամականներն իրենց ակտիվությամբ աչքի են ընկել ոչ միայն Կովկասում, այլ նաև ակտիվորեն մասնակցել են Աֆղանստանում, Պակիստանում և Մերձավոր Արևելքում տեղի ունեցած ռազմական գործողություններին: Աղբբեջանում իսլամականների հավաքագրման ցանցային կայացած համակարգ էր գործում, որի միջոցով աղբբեջանցի իսլամականները ֆինանսավորվում և տեղափոխվում էին Մերձավոր Արևելք՝ ջիհադին մասնակցելու համար: Ֆինանսավորումն իրականացվում էր ինչպես առանձին անհատների, այնպես էլ առան-

ձին կառույցների ու հիմնադրամների միջոցով⁷³: Նրանց տարան-
ցիկ ճանապարհը հիմնականում անցնում էր Թուրքիայի տարած-
քով⁷⁴:

Մինչև 2013 թվականը Մերձավոր և Միջին Արևելքում գոր-
ծում էին ադրբեջանական կամ վերջինիս բաղադրիչի գերակա-
յությամբ առանձին կառույցներ: Այդ ժամանակահատվածում սի-
րիական հակամարտությունում ներգրավված ադրբեջանցիները
ընդգրկված էին հիմնականում «*Ջայշ ալ-Մուհաջիդին ուս ալ-
Անսար*» խմբավորման կազմում, մասնավորապես այդ կառույցի
մաս կազմող «*Ադրբեջանական ջամաայի*» մեջ:

Ադրբեջանցի իսլամականներով համալրված հաջորդ կա-
ռույցը «*Ջունդուլլահ*» խմբավորումն էր, որում ներգրավված էին
նաև թուրքեր: Այն գործել է սիրիական ալ-Ռազկա նահանգում և
ակտիվորեն մասնակցել է երկրի հյուսիսում քրդաբնակ Քոբանիի
վրա հարձակումներին:

Մյուս խմբավորումը, որը համալրված էր ադրբեջանցի և
թուրք ջիհադականներով, Իրաքում ջիհադական պայքար մղող
«*Խատտար*» կառույցն էր, որն այդպես էր կոչվում այդ խմբավոր-
ման առաջնորդի՝ Խատտար ալ-Ազերիի պատվին: Որոշ ադրբե-
ջանցիներ գործել են նաև «*Աբու Քալիլ*» խմբավորման կազմում,
որը հիմնականում չեչեններով էր համալրված:

Սիրիայում ադրբեջանցի իսլամական առաջնորդներից աչքի
ընկավ Աբու Յահյա ալ-Ազերին (Նիքաթ Աշուրով, սպանվեց 2013
թ. սեպտեմբերին): Նա խարիզմատիկ և հեղինակավոր առաջնորդ-
ներից էր, որը հեղինակություն էր վայելում ոչ միայն ադրբեջանցի
ջիհադականների, այլև այլ իսլամական ծայրահեղ արմատական
շրջանակներում: Ալ-Ազերին մի շարք ուղերձներով է հանդես եկել,
որտեղ կոչ էր անում Ադրբեջանում գտնվող իր հայրենակիցներին
տեղափոխվել Սիրիա և ջիհադական այլ ճակատներ:

Աբու Յահյա ալ-Ազերիի սպանությունից հետո աղբբեջանական ջիհադականների ղեկավարությունը ստանձնեց Մուսաբ ալ-Ազերին (Մուսաբ Աբդ ալ-Ռահիմ Աբդ ալ-Մաջիդ), որը 12 այլ աղբբեջանցիների հետ միասին սպանվեց 2014 թ. մարտին քրդական զինված ստորաբաժանումների կողմից: Մուսաբ ալ-Ազերիի մահից հետո աղբբեջանցի ջիհադականների ղեկավարությունն անցավ Մուհամմադ ալ-Ազերիին:

«Ղարաբաղի պարտիզաններ» կոչված աղբբեջանցի իսլամականները նույնպես հեղինակություն էին վայելում Սիրիայի ջիհադականների շրջանում, որոնց մեջ էին նաև սիրիական հակամարտությունում աչքի ընկած Ռուստամ Ասքերովը (սպանվեց Սիրիայում 2013 թ. դեկտեմբերին) և Ռովշան Բադալովը (սպանվեց Սիրիայի քրդաբնակ Քոբանիում 2014 թ. հոկտեմբերին):

Մի այլ աղբբեջանցի՝ Ջոհրաբ Մամեդովը, թուրք-աղբբեջանական խմբավորման («Ջունդուլլահ») առաջնորդներից էր:

Մյուս աղբբեջանցի ազդեցիկ իսլամականը Խատտաբ ալ-Ազերին էր, որը, չնայած իր երիտասարդ տարիքին (մոտ 30 տարեկան), ունեցել է մեծ հեղինակություն ջիհադականների շրջանում: Նա աղբբեջանցի իսլամական ամենահայտնի առաջնորդներից մեկն էր Սիրիայում և Իրաքում⁷⁵:

2013 թ. կեսերից իսլամականների վերահսկողության տակ անցան Սիրիայի՝ էներգակիրներով հարուստ ալ-Ռակկա և Դեր Ջոր նահանգները: Այստեղից նավթի ու գազի վաճառքն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ ապահովեց իսլամականների համար, որը հնարավորություն տվեց ֆինանսավորելու աշխարհի տարբեր հատվածներից Սիրիայում, իսկ 2014 թ. կեսերից՝ արդեն Իրաքում հավաքվող ջիհադական ներուժը, այդ թվում՝ նաև աղբբեջանցի ջիհադականներին⁷⁶: Իսլամականների ֆինանսավորման աղբբյուրներն էին նաև մուսուլմանական տարբեր երկրներից փոխանցվող ֆինանսական միջոցները՝ մուսուլմա-

նական իշխանական որոշ շրջանակներից, տարբեր երկրների մուսուլմանական համայնքներից և անհատական նվիրատվություններից, ինչպես նաև այլ ճանապարհներով հավաքվող դրամական միջոցները: Աղբրեջանցի իսլամականները նույնպես ֆինանսավորվում էին այդ աղբյուրներից և հենց Աղբրեջանից ստացվող նվիրատվություններից⁷⁷:

2013 թ. կեսերից սկսած՝ Սիրիայում և Իրաքում ներգրավված աղբրեջանցի իսլամականների շրջանում նկատվեցին փոփոխություններ. աղբրեջանցիները հիմնականում համալրեցին ամենաազդեցիկ ԻՊ և ԶՆ խմբավորումները^{*}, որոնց կազմում շարունակեցին մասնակցել Սիրիայում ու Իրաքում տեղի ունեցող ռազմական գործողություններին:

Սիրիական և իրաքյան կառավարական ուժերի դեմ պայքարելուց զատ՝ աղբրեջանցի իսլամականներն ակտիվորեն մասնակցել են տարբեր էթնիկ խմբերի դեմ իրականացված ռազմական գործողություններին^{*}, որոնք ևս կարելի է դիտարկել ոչ միայն Սիրիայում և Իրաքում գործող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների, այլև տարածաշրջանային ու արտատարածաշրջանային ուժերի կողմից ուղղորդումների համատեքստում:

«Իսլամական պետության» վերագգային բնույթն ու Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս եկող նկրտումներն ընդգրկեցին նաև Աղբրեջանը, որտեղ ազդեցության տարածման

^{*} Իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների հեղինակավոր, ազդեցիկ և համընդհանուր բնույթը դրդել է աղբրեջանցիներին հրաժարվել առանձին էթնիկ խմբավորումներից՝ գործելով վերոհիշյալ կառույցների դրոշի ներքո:

^{*} Բազմաթիվ աղբրեջանցիներ սպանվել են Սիրիայի քրդաբնակ Քոբանիի համար տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ: Բացի դրանից՝ ասվածի հավաստումը կարող ենք գտնել նաև իսլամականների տարածած որոշ փաստաթղթերում, որոնք փաստում են Սիրիայի և Իրաքի քրդաբնակ և եզդիաբնակ հատվածներում սպանված աղբրեջանցի իսլամականների մասին (տե՛ս աշխատության №10 հավելվածը):

փորձ արվեց այդ կառույցի կողմից⁷⁸: Բացի այն հանգամանքից, որ Ադրբեջանում արմատներ էին գցել իսլամական ծայրահեղական զանազան կառույցներ⁷⁹, վերջիններս Ադրբեջանը դիտում էին նաև որպես տարանցիկ ուղի՝ իսլամականների ջիհադական պայքարն աշխարհի այլ հատվածներում շարունակելու համար⁸⁰:

ԻՊ և ՋՆ իսլամական ծայրահեղ արմատական կառույցներին անդամակցելուն զուգահեռ որոշ ադրբեջանցի իսլամականներ շարունակեցին ներգրավված մնալ ընդդիմադիր այլ կառույցներում («Ջունուդ ալ-Շամ», «Նուր ալ-Դին Ջինքի» և այլն), որոնց գործողությունների տարածքը հիմնականում ընդգրկում էր Թուրքիային սահմանամերձ Սիրիայի հյուսիսարևմտյան տարածքները: Այս հատվածում ծագումով թյուրք բնակչության առկայությունը հնարավոր էր դարձրել թուրքախոս իսլամականներին, այդ թվում՝ ադրբեջանցիներին, ինտեգրվել Սիրիայի Լաթակիա, Իդլիբ, Հալեպ և ալ-Ռակկա նահանգներում ակտիվորեն գործող թյուրքական ծագմամբ ընդդիմադիր կառույցներին («Սուլթան Մուրադ», «Սուլթան Սուլեյման Շահ» և այլն) և իրականացնել ջիհադական պայքար:

2016-2017 թթ. ՋԼՄ-ներում դարձյալ հրապարակումներ եղան այլ էթնիկ խմբավորումների շարքերում (հիմնականում ծագումով նախկին ԽՍՀՄ-ը ներկայացնող իսլամականներից բաղկացած խմբավորումներում) ադրբեջանցի ջիհադականների հարմարվելու, արդյունավետ ինտեգրվելու և ջիհադական ակտիվ պայքար մղելու մասին: Բացի այս տեղեկություններից՝ ՋԼՄ-ներում հայտնվեցին տեսագրություններ, որտեղ ադրբեջանցի իսլամականները կոչ էին անում իրենց հայրենակիցներին միանալու ջիհադին: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Մերձավորարևելյան տարածաշրջանում իրականացվող ջիհադին միանալու կոչերը պայմանավորված էին նաև նրանով, որ ադրբեջանցիների հոսքը դեպի Սիրիա նվազել էր, և ադրբեջանցի իսլա-

մականները կարիք ունենին համալրման, ինչի պատճառները հետևյալն էին.

- Թուրքիան ստիպված էր հնարավորինս վերահսկելի դարձնել Սիրիայի հետ սահմանային հոսքերը: Թուրքիայում հայտնված շատ ադրբեջանցիներ, որոնք ցանկություն ունեին անցնելու Սիրիա, թուրքական իրավապահ մարմինների կողմից ձերբակալությունների էին ենթարկվում⁸¹:
- Սիրիայում և Իրաքում կովող իսլամական ծայրահեղ արմատական զանազան կառույցների կայանատեղիներին ուղղված կռաւիցիոն օդուծի ավիահարվածներն ու ցամաքային արդյունավետ գործողությունները զսպում էին նաև ադրբեջանցի իսլամականների՝ Մերձավոր Արևելք տեղափոխվելու ցանկությունը:

Սիրիայում և Իրաքում կովող ադրբեջանցի իսլամականների շրջանում հանդիպել են նաև մահապարտ ահաբեկիչներ, որոնք, պայթուցիկով բեռնված մեքենաների դեկին նստած, պայթել են հակառակորդի դիրքերին ուղղված ահաբեկչական հարձակումների ժամանակ: Դա խոսում էր այն մասին, որ Մերձավոր Արևելքում Ադրբեջանը ներկայացնող իսլամականները, գումար վաստակելու գայթակղությունից ու հեղինակություն ձեռք բերելու ցանկությունից զատ, ջիհադական պայքարում առաջնորդվել են նաև իսլամական ծայրահեղական դավանական-գաղափարական մոտեցումներով*:

Եթե Սիրիայում և Իրաքում կովող ադրբեջանցի իսլամականների էթնիկ կազմի մասին հստակ տվյալներ չկան (կարելի է ենթադրել, որ Մերձավոր Արևելքում ակտիվ գործող ադրբեջանցի

* Մասնավորապես 2016-2017 թթ. հիշյալ մարտավարության կիրառման մասին համացանցային ռեսուրսներում հայտնված տեսանյութերում հանդիպել են նաև ադրբեջանցի մահապարտ ահաբեկիչներ:

իսլամականները հիմնականում ներկայացրել են Ադրբեջանի հյուսիսային սուննիաբնակ հատվածը), ապա ադրբեջանցիների թվաքանակի մասին որոշ տվյալներ կան: Մասնավորապես, ըստ 2017 թ. Ադրբեջանի Անվտանգության պետական ծառայության ղեկավար Մադաթ Գուլիևի հայտնած տվյալների՝ Ադրբեջանի շուրջ 900 քաղաքացի արդեն անդամակցել էր Սիրիայում ու Իրաքում գտնվող իսլամական ծայրահեղական կառույցներին⁸²: Հատկանշական է նաև 2017 թ. հոկտեմբերին տարածված այն տեղեկությունը, որ Թուրքիայում զգալի թվով իսլամականներ (300-1600) կանգնեցվել, հաշվառվել և ետ են ուղարկվել Ադրբեջան⁸³:

Մեր կարծիքով ադրբեջանցի իսլամականների թիվը 1000-ից ավելի էր, քանի որ.

1. բազմաթիվ ադրբեջանցի իսլամականներ գտնվել են Թուրքիայում և ցանկություն են ունեցել մտնելու Սիրիա, բայց չի ստացվել (այս ադրբեջանցիները, իհարկե, ներառված չէին 900-ի մեջ, քանի որ հնարավոր է՝ Թուրքիա էին գնացել աշխատանքի կամ զբոսաշրջության պատրվակով):

2. Սիրիայում և Իրաքում եղել են բազմաթիվ ադրբեջանցիներ, որոնք ներգրավված էին թյուրքական ծագմամբ ընդդիմադիր խմբավորումների շարքերում, և այդ կառույցները դժվար թե Ադրբեջանի իշխանությունների կողմից ծայրահեղական համարվեին:

3. Սիրիայում և Իրաքում եղել են ադրբեջանցիներ, որոնց ինքնությունը, գտնվելու վայրը բացահայտված չեն եղել, հետևաբար նրանց գործունեության մասին Ադրբեջանի անվտանգության ծառայության ղեկավարը չէր կարող որևէ տեղեկություն ունենալ:

Ադրբեջանում իսլամական ծայրահեղականության ակտիվության ցուցիչ է 2019 թ. ամռանը համացանցում տարածված տեսանյութը, ըստ որի՝ «Իսլամական պետության» վարչատարած-

քային նոր միավորից՝ «Ադրբեջանի վիլայեթից», խալիֆ Աբու Բաքր ալ-Բադդադիին հավատարմության երդում էին տալիս երեք ադրբեջանցիներ*։ 2019 թ. հոկտեմբերին՝ Աբու Բաքր ալ-Բադդադիի սպանությունից անմիջապես հետո, տարածվեց նման մի տեսանյութ, որում ադրբեջանցի իսլամականները վերահաստատեցին իրենց հավատարմության երդումը՝ ուղղված «Իսլամական պետության» նոր առաջնորդին։ Այս տեսանյութերը ևս մեկ անգամ փաստեցին, որ Ադրբեջանը մնում է իսլամական ծայրահեղական կառույցների ուշադրության կենտրոնում⁸⁴։

Վրաստանցիներ. Վրաստանում ևս նկատելի էին իսլամական ծայրահեղ արմատականության ավելացման միտումներ, չնայած մուսուլմանների թվաքանակը մեր հարևան երկրում կազմում է ընդհանուր բնակչության շուրջ 10 տոկոսը (մոտ 430.000)։

Ըստ հետազոտական որոշ գնահատականների՝ 2011 թ. հունիսի դրությամբ Պանկիսի կիրճում գտնվող գյուղերի մուսուլման երիտասարդների 60-80 տոկոսը հարել է իսլամական ծայրահեղականությանը։ Կան ուսումնասիրություններ, որոնք վկայում են նաև, որ Վրաստանի Պանկիսի կիրճում իսլամական ծայրահեղ արմատականությունը ֆինանսավորվում էր Պարսից ծոցի միապետություններից։ Վրաստանում, մասնավորապես Պանկիսի կիրճում, իսլամական ծայրահեղ արմատական գաղափարների տարածման վրա ազդել էին Մերձավոր Արևելքում ընթացող զարգացումները՝ ջիհադական պայքարն ու իսլամական արմատական տիրություն ի հայտ եկած նոր իրողությունները (մասնավորապես «Իսլամական պետության» ի հայտ գալն ու Կովկասի իսլամական արմատական տիրություն նկատվող տարածայնու-

* Դա Ադրբեջանից ստացված առաջին տեսանյութն էր, որում շեշտվում էր «Իսլամական պետության» կողմից Ադրբեջանի տարածքում ստեղծված վիլայեթի և Ադրբեջանում գործող ԻՊ բջիջի մասին։

թյունները): Պանկիսի կիրճում դա դրսևորվեց այստեղ ակտիվ գործող իսլամական ծայրահեղական ցանցերի գործունեությամբ ու Մերձավորարևելյան տարածաշրջանում աչքի ընկնող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների համար զինյալներ հավաքագրելու գործընթացով:

Մերձավոր Արևելքում տեղի ունեցող ջիհադական պայքարում Վրաստանը նույնպես ունեցել էր ներկայացուցիչներ: Ըստ որոշ տեղեկությունների՝ Սիրիայում և Իրաքում ծայրահեղ արմատական խմբավորումների շարքերում կովող իսլամականներից 200-ը հենց Վրաստանից էին⁸⁵: Բացի դրանից՝ «Իսլամական պետության» առանցքային առաջնորդներից Աբու Ումար ալ-Շիշանին (Թարիսան Բաթիրաշվիլի) ծնունդով Վրաստանի Պանկիսի կիրճից էր: Նա կարճ ժամանակում դարձավ «Իսլամական պետության»՝ Կովկասը ներկայացնող առանցքային առաջնորդներից մեկը:

Աբու Ումար ալ-Շիշանին ծնվել էր 1986 թ. Վրաստանի Պանկիսի կիրճի Բիրկիանի գյուղում: Նա, «Ջայշ ալ-Մուհաջիրին ուա ալ-Անսար» խմբավորման կազմում դեռևս 2013 թ. կեսերին հավատարմության երդում տալով Աբու Բաքր ալ-Բադդադիին, ԻՇԻՊ (հետագայում՝ ԻՊ) կազմում ակտիվորեն մասնակցեց տարբեր ճակատամարտերի՝ դառնալով ջիհադական պայքարի առանցքային դերակատարներից մեկը Սիրիայում: Ալ-Շիշանիի հայտնվելը զանազան ռազմաճակատներում մեծ ցնծություն ու խանդավառություն էր առաջացնում իսլամականների շրջանում⁸⁶: Թերևս սա բացատրվում էր նրանով, որ մինչև սիրիական հակամարտությունն Աբու Ումար ալ-Շիշանին անցել էր ռազմական պատրաստություն՝ 2006-2007 թթ. հատուկ հետախուզական ջոկատի կազմում ծառայելով Վրաստանի կանոնավոր բանակում: Հաշվի առնելով ՆԱՏՕ-Վրաստան այդ ժամանակվա ռազմական համագործակցությունը՝ հավանաբար ալ-Շիշանին անցել

էր ռազմական լուրջ պատրաստություն արևմտյան փորձագետների ղեկավարությամբ: 2008 թ. մասնակցել էր ռուս-վրացական պատերազմին, որի ընթացքում ալ-Շիշանիի խումբը հետախուզական գործունեություն էր իրականացրել, ռուսական տեխնիկայի տեղաշարժերի և տեղակայման մասին տվյալներ հաղորդել վրացական հրետանային գնդերին:

Ալ-Շիշանիի ռազմական փորձը, անշուշտ, իր դերը խաղացել է Սիրիայում տեղի ունեցող պատերազմում՝ ռազմական գործչի համբավ ապահովելով մարտական գործողությունների փորձառություն չունեցող իսլամականների շրջանում: Ալ-Շիշանիի ռազմական գործի գիտակ լինելու փաստին զուգահեռ իսլամական ծայրահեղ արմատականների մեջ շրջանառվեցին նաև հակառակ տեսակետներ: Մասնավորապես Աբու Ումարի զինակիցներից Խալիդ ալ-Շիշանին համացանցում տարածած իր ուղերձում Աբու Ումարին ներկայացրեց որպես ռազմական գործից անտեղյակ, մարտավարական ունակություններից զուրկ մի մարդու, որի համար ջիհադական պայքարում մուջահիդների կյանքը ոչ մի արժեք չուներ, իսկ ռազմական գործողություններում նրա համար կարևոր էին դափնիները⁸⁷:

Ալ-Շիշանին բազմիցս հանդես է եկել ուղերձներով ու հայտարարություններով՝ քարոզչության ոլորտում կարևորելով ակտիվ գործունեությունը: Այս ամենի համատեքստում ուշագրավ էր ջիհադականներին հասցեագրված նրա ուղերձներում ԻՇԻՊ առաջնորդին՝ Աբու Բաքր ալ-Բադդադիին տրված հավատարմության երդումը, ինչը պատճառ էր դարձել կովկասցի իսլամականների միջև հակասությունների սրման, քանի որ ալ-Շիշանին իր ուղերձներում ընդգծում էր, որ միայն ԻՇԻՊ-ն է ժամանակին պատրաստակամություն հայտնել աջակցելու իր ղեկավարության տակ գործող չեչեն իսլամականներին՝ օժանդակելով վեր-

ջիններին ցիհադական պայքարին Կովկասում: 2016 թ. հուլիսի 13-ին ՋԼՄ-ներում տարածված տեղեկության համաձայն՝ Աբու Ռամար ալ-Շիշանին սպանվել է Իրաքի Մոսուլ քաղաքի շրջակայքում իրաքյան կառավարական ուժերի և իսլամականների միջև տեղի ունեցած բախումների ժամանակ⁸⁸:

3.3. Մերձավորարևելյան տարածաշրջանային երկրների՝ Սաուդյան Արաբիայի, Կատարի, ԱՄԷ-ի, Հորդանանի, Իսրայելի ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը*

Սիրիայում տեղի ունեցող գործընթացների սկզբնական փուլում Պարսից ծոցի արաբական միապետությունները (Սաուդյան Արաբիա, Կատար, ԱՄԷ, Քուվեյթ, Բահրեյն) ձեռնպահ էին մնում Բաշար ալ-Ասադի իշխանության հանդեպ կտրուկ հայտարարություններից: Նման մոտեցումը պայմանավորված էր նրանով, որ այդ երկրները սիրիական հակամարտությունը դիտում էին որպես հնարավորություն՝ նվազեցնելու Իրանի, հետագայում Թուրքիայի ազդեցությունը Սիրիայում, նաև փորձելով չվնասել Դամասկոսի հետ ունեցած հարաբերությունները և ավելացնել սեփական ազդեցությունը երկրում: Հակամարտության ավելացող սուր բնույթն ու շահերի բխումը, էթնիկ-դավանական խտրացող հակասությունները, արտասիրիական ուժային որոշ կենտրոնների ակտիվ ներքաշումը Սիրիայում ստիպեցին Պարսից ծոցի միապետություններին փոխել մոտեցումը սիրիական խնդրում: Հիշյալ մոտեցումներում, մասնավորապես Սաուդյան Արաբիայի, Կատարի և Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) սիրիական հակամարտությանն առնչվող քաղաքականությունում նկատվեցին առանձնահատկություններ:

* Արտասիրիական այլ ուժերի, մասնավորապես ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի և արտասիրիական այլ դերակատարների միջնորդավորված ու անմիջական ներկայության, սիրիական հակամարտության մեջ ակտիվ ներգրավվածության ու շահերի մասին խոսել ենք մենագրության գրեթե բոլոր հատվածներում: Այդ է պատճառը, որ այս գլխում սահմանափակվել ենք սիրիական հակամարտության մեջ այլ դերակատարների՝ Պարսից ծոցի որոշ միապետությունների, Հորդանանի և Իսրայելի ակտիվության հետազոտությամբ:

Մատույան Արաբիա. Միրիական հակամարտության ողջ ընթացքում ընդդիմադիր ուժերին աջակցող ամենաակտիվ երկրներից էր Մատույան Արաբիան: Հակամարտության սկզբնավորումից ի վեր Մատույան Արաբիան քայլեր էր ձեռնարկում Միրիայում գործող վարչախումբը տապալելու ուղղությամբ, որի համար սառույնների կողմից ֆինանսական և ռազմական զգալի աջակցություն էին ստանում զանազան ընդդիմադիր ուժեր:

Շիա-ալաուիական վարչախմբի կողմից ղեկավարվող և տարածաշրջանում Իրանի դաշնակից համարվող Միրիան անցանկալի պետություն էր Մատույան Արաբիայի համար, քանզի թագավորության հիմնական հակառակորդը տարածաշրջանում՝ շիայական Իրանը, Միրիայի միջոցով աստիճանաբար ամուր դիրքեր էր գրավում թե՛ Միրիայում, թե՛ տարածաշրջանում:

Միրիական խնդրում Մատույան Արաբիայի քաղաքականության մեջ փոփոխություններ նկատվեցին նոր թագավորի՝ Սալման իբն Աբդ ալ-Ազիզի իշխանության տարիներին: Դա արտահայտվեց նրանով, որ ներքաղաքական և արտաքաղաքական զարգացումներում սառույան թագավորական ընտանիքի առաջ ծառացած հիմնախնդիրների լուծման գործում էր-Ռիադը փորձեց հանդես գալ հավակնոտ նախաձեռնություններով, առավել համարձակ և ինքնուրույն քայլերով: Սալման իբն Աբդ ալ-Ազիզի իշխանության գալուց անմիջապես հետո (2015 թ. հունվարի 23) լրջագույն փոփոխություններ կատարվեցին սառույական վերնախավում. թագաժառանգ և ներքին գործերի նախարար նշանակվեց Մուհամմադ իբն Նաիֆը, թագավորի որդին՝ Մուհամմադ իբն Սալմանը, նշանակվեց պաշտպանության նախարար և թագաժառանգի տեղակալ (հետագայում Մուհամմադ իբն Սալմանը դարձավ առաջին թագաժառանգ), արտգործնախարար նշանակվեց սառույան արքայատոհմին չպատկանող Ադլ իբն Ահմադ Ալ-Ջուբայրը: Այդ փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան

նան սիրիական հակամարտությանն առնչվող սառույցան քաղաքականության վրա: Սառույցան իշխանությունների կողմից սիրիական ընդդիմադիրներին ցուցաբերվող օժանդակությունում գերակշռող էին գաղափարական, ֆինանսական և ռազմական բաղադրիչները: Գաղափարականը հիմնականում արտահայտվում էր Սառույցան Արաբիայի հովանավորությամբ գործող շրջանակների կողմից ամբողջ աշխարհով անցկացվող հակաբաշարյան քարոզչությամբ, որոնք ամրապնդվում էին իսլամական ճանաչված կրոնագետ-աստվածաբանների ֆեթվաներով (հիմնական փաստարկը «անհավատ» սիրիական շիա-ալաուիական վարչակարգի դեմ պայքարելն էր և Բաշար ալ-Ասադի իշխանության տապալումը): Սիրիական ընդդիմադիր զանգվածին ֆինանսական օժանդակության բնագավառում Սառույցան Արաբիան առաջատար դիրքերում էր: Ինչ վերաբերում էր զինյալ ընդդիմադիրներին տրվող աջակցության ռազմական բաղադրիչին, ապա Սառույցան Արաբիան հետևողականորեն մատակարարում էր զինամթերք, ստեղծում էր ռազմական պատրաստության ճամբարներ (Սառույցան Արաբիայում, Հորդանանում, Պակիստանում և այլն), որտեղ նաև արևմտյան փորձագետների օգնությամբ ռազմական պատրաստություն էին անցնում դեպի Սիրիա գնացող ընդդիմադիրները (այս առումով բավական էր ուշադրություն դարձնել Սիրիայում կռվող սառույցամետ իսլամական խմբավորումների սպառազինությանը, զինհանդերձանքին և նրանց կողմից վերահսկվող տարածքներում ծախսվող միջոցների)⁸⁹:

Կատար. Ազդեցիկ արաբական երկիր և տարածաշրջանային խնդիրների լուծման կարևոր գործոն դառնալու Կատարի նկրտումներն ակտիվացան 1995 թ., երբ հեղաշրջման հետևանքով իշխանության եկավ Համադ իբն Խալիֆ ալ-Թանին: Կատարը սիրիական հակամարտության ընթացքում Բաշար ալ-Ասադի

դեմ հանդես եկող այն արաբական երկրներից էր, որը մեծ ջանքեր էր գործադրում Սիրիայի գործընթացներին միջամտելու և դրանք ուղղորդելու համար՝ փորձելով հակասիրիական տրամադրություններ ստեղծել տարածաշրջանային և միջազգային կառույցների ու պետությունների շրջանում, ակնհայտ քարոզչական, ռազմական, ֆինանսական աջակցություն տրամադրելով սիրիական ընդդիմադիր ուժերին:

Սիրիայում Կատարի կողմից ընդդիմադիր որոշ ուժերին տրվող աջակցությունը չէր գոհացնում արաբական մի շարք երկրներին: Այդ առումով նույնիսկ որոշ երկրներից մեղադրանքներ հնչեցին Դոհայի հասցեին՝ «Մուսուլման եղբայրներ» արմատական կառույցին աջակցելու և Սիրիայում ընդդիմադիր այլ խմբավորումներին օժանդակություն տրամադրելու համար: Նման վարքագիծն իր բացասական ազդեցությունն ունեցավ Պարսից ծոցի արաբական այլ երկրների հետ Կատարի ունեցած հարաբերությունների վրա: Լինելով արաբական բնական պաշարներով հարուստ երկրներից մեկը՝ Կատարը կարողանում էր լուրջ դերակատարում ունենալ տարածաշրջանային գործընթացներում, մասնավորապես Սիրիայում՝ այդ նպատակների համար օգնելով ընդդիմադիրներին, օգտագործելով ինչպես ֆինանսական, այնպես էլ սեփական քարոզչական ռեսուրսները (օրինակ՝ «ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը)⁹⁰:

ԱՄԷ. Սիրիական հակամարտությանն առնչվող ԱՄԷ քաղաքականությունն ակնհայտ դարձավ, երբ «Պարսից ծոցի համագործակցության խորհրդի» շրջանակներում անդամ երկրները, այդ թվում՝ ԱՄԷ-ն, քննադատեցին ցուցարարների նկատմամբ սիրիական իշխանությունների բռնի ուժի գործադրումը 2011 թ. ամռանը: ԱՄԷ-ն, ինչպես նաև Պարսից ծոցի արաբական մյուս միապետությունները, 2012 թ. մարտին փակեցին Դամասկոսում

գտնվող դեսպանատները՝ հայտարարելով սիրիական ժողովրդի՝ Բաշար ալ-Ասադին հեռացնելու արդարացի պահանջներին իրենց աջակցության մասին⁹¹:

ԱՄԷ-ն դարձավ Դամասկոսի իշխանությունների դեմ հանդես եկող պետությունների՝ «Սիրիայի ընկերներ» անվանմամբ միջազգային կոալիցիայի անդամ, որն իր առաջին հանդիպումը գումարեց 2012 թ. փետրվարին Թունիսում: ԱՄԷ-ն սկսեց աջակցություն տրամադրել սիրիական ընդդիմության այն հատվածին, որը չէր գտնվել «Մուսուլման եղբայրներ» իսլամական կառույցի կամ որոշ իսլամական ծայրահեղական խմբավորումների ազդեցության տակ: Սիրիական ընդդիմությանը տրվող ԱՄԷ աջակցությունը հիմնականում իրականացվում էր ամերիկյան հատուկ ծառայությունների օժանդակությամբ Հորդանանի տարածքում ձևավորված ռազմական գործողությունների կենտրոնի միջոցով⁹²: Այուամենայնիվ, սիրիական հակամարտությանն առնչվող ԱՄԷ պահվածքը տարբերվում էր Սաուդյան Արաբիայի և Կատարի քաղաքականությունից: ԱՄԷ-ն շարունակում էր դիվանագիտական հարաբերությունները Սիրիայի հետ (ԱՄԷ-ում Սիրիայի դիվանագիտական ներկայացուցչությունը շարունակում էր գործել Աբու Դաբիում), Էմիրությունները հնարավորություն էին տվել Բաշար ալ-Ասադի ազգականներին բնակություն հաստատելու ԱՄԷ-ում (օրինակ՝ Ասադի մայրը, քույրը, վերջինիս երեխաները գտնվել են ԱՄԷ-ում), որոշ սիրիացի գործարարներ շարունակում էին գործունեություն ծավալել երկրում, նկատվեց նաև ԱՄԷ որոշ գործարարների ակտիվություն Սիրիայում⁹³, ՄԱԿ խորովակներով ԱՄԷ-ն շարունակում էր հումանիտար օգնություն տրամադրել Սիրիային⁹⁴ և այլն: 2018 թ. վերջին ԱՄԷ-ն վերաբացեց իր դիվանագիտական ներկայացուցչությունը Դամասկոսում: 2015 թվականից սկսած՝ արտասիրիական ուժերի առարկայական ներկայացվածության ավելացման պայմաններում ԱՄԷ-ն

նպատակ դրեց ավելացնելու «արաբական» ազդեցությունը Սիրիայում՝ փորձելով զսպել թուրքական և իրանական ավելացող նկրտումները Սիրիայի Արաբական Հանրապետությունում⁹⁵:

Հորդանան. Մերձավորարևելյան տարածաշրջանում ստեղծված անկայուն իրավիճակը ստիպեց Հորդանանի Հաշիմյան Թագավորությանը նոր մոտեցումներով հանդես գալ տարածաշրջանային և միջազգային քաղաքականությունում: Հորդանանն ակտիվորեն ներքաշված էր մերձավորարևելյան տարածաշրջանային քաղաքական ու տնտեսական հարաբերություններում՝ գործելով իր ունեցած հնարավորությունների սահմաններում, փորձելով հաղթահարել տարածաշրջանային փոքր երկրի կարգավիճակն ու բարձրացնել իր տարածաշրջանային դերակատարումն ու հեղինակությունը: Մերձավորարևելյան տարածաշրջանային անկայունությունը, հակամարտությունները, խնդրահարույց հարաբերությունները և թագավորության սահմանին մոտ լարվածությունները անհանգստացնում էին Հորդանանին: Նշվածի առումով թագավորության համար առաջնահերթ տեղում էին նաև հարևան Սիրիայում տեղի ունեցող զարգացումները:

Սկզբնական փուլում Հորդանանը պաշտոնապես հանդես էր գալիս սիրիական հակամարտությանը չմիջամտելու դիրքերից՝ հայտարարելով, որ իր տարածքը ոչ մի դեպքում չի կարող հարթակ ծառայել հարևան արաբական երկրի դեմ ռազմական ներխուժման համար: Այնուամենայնիվ, Սիրիայում, մասնավորապես երկրի հարավային հատվածներում տեղի ունեցող ռազմական գործողությունները սպառնալիք էին ներկայացնում Հորդանանի համար⁹⁶: Դա արտահայտվում էր սահմանակից շրջաններում թեժ մարտերի, այստեղ պայքարող իսլամական ծայրահեղական ուժերի ակտիվության, դեպի Հորդանանի տարածք շարժվող սիրիացի փախստականների և այլնի տեսքով: Հորդանանի

զինուժը նույնիսկ ռազմական գործողություններ իրականացրեց Սիրիայում՝ ավիահարվածներ հասցնելով ընդդիմադիր ծայրահեղ արմատական կառույցների դիրքերին⁹⁷:

Չնայած Հորդանանի կողմից սիրիական հակամարտությանը չմիջամտելու հայտարարություններին՝ բազմաթիվ էին փաստերը, որոնք վկայում էին այն մասին, որ Հորդանանում սիրիական ընդդիմադիր զինյալների համար ստեղծվել էին ռազմական ճամբարներ, որտեղ սիրիացի ընդդիմադիրները հորդանանյան, ամերիկյան և այլ երկրների հատուկ ծառայությունների անմիջական մասնակցությամբ ռազմական պատրաստություն էին անցնում: Ընդդիմադիրները յուրացնում էին քաղաքային պայմաններում տարվող մարտական գործողությունների վարման, հակատանկային և հակաօդային ռազմական տեխնիկայի օգտագործման հմտությունները՝ նախապատրաստելով մարտերի բուն Սիրիայի տարածքում: Մարտական պատրաստություն անցած զինյալները անմիջապես տեղափոխվում էին Սիրիա, որի հարավային շրջաններում ներգրավվում էին ռազմական գործողությունների մեջ՝ ստանալով հորդանանյան և մի շարք տարածաշրջանային ու արևմտյան երկրների հատուկ ծառայությունների կողմից ռազմական, ֆինանսական, լոգիստիկ-տեղեկատվական, խորհրդատվական և այլ աջակցություն: Դրանով Հորդանանն ու արտասիրիական այլ ուժային կենտրոններ փորձում էին մասնակից լինել և ազդել ներսիրիական զարգացումների վրա:

Իսրայել. Սիրիական հակամարտության սկզբնական փուլում իսրայելական իշխանությունների վերաբերմունքը Սիրիայում տեղի ունեցող գործընթացներին միանշանակ չէր, որն արտահայտվեց իսրայելական իշխանությունների՝ Սիրիայի խնդրի հետ կապված չափավոր գնահատականներով և հստակ դիրքորոշման բացակայությամբ: Մակայն 2012-2013 թթ. ընթացքում Իս-

րայելի դիքորոշման մեջ տեղի ունեցան փոփոխություններ, և աստիճանաբար նկատվեցին Իսրայելի նպատակաուղված քայլերն ընդդեմ ներկայիս սիրիական իշխանությունների: 2013 թ. Իսրայելը հայտարարեց սիրիական հակամարտությունում առկա այն կարմիր գծերի մասին, որոնց խախտվելու դեպքում հրեական պետությունը Սիրիայում կգնար ռազմական լուծման: Այդ կարմիր գծերն էին «Հիզբալլահին» հասցեագրված սպառազինության մատակարարումն ու դեպի Իսրայելի տարածք սիրիական հակամարտության տարածվելը: Աստիճանաբար խորացող սիրիական ճգնաժամը, այստեղ իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումների ակտիվությունն ու Իսրայելի համար սպառնալիք հանդիսացող շիայական խմբավորումների (մասնավորապես լիբանանյան «Հիզբալլահի») և Իրանի ազդեցության տարածումը ստիպեցին Իսրայելին ակտիվացնել գործողությունները Սիրիայում⁹⁸:

2013 թվականից սկսած՝ Իսրայելի ներգրավվածությունը սիրիական հակամարտությունում հիմնականում իրականացվում էր իսրայելական օդուժի ավիահարվածների տեսքով, որոնց թիրախում էին հայտնվում ինչպես սիրիական բանակի, այնպես էլ շիայական խմբավորումների կայանատեղիները Սիրիայի տարբեր հատվածներում: Կան տեղեկություններ, որ Սիրիայում իսրայելական օդուժի հրթիռակոծություններ են իրականացվել նաև իրանական Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ստորաբաժանումների կայանատեղիներին:

Սիրիայի վերաբերյալ Իսրայելի ակտիվությունը պայմանավորված էր առաջին հերթին հրեաների գլխավոր հակառակորդ Իրանի դիրքերի և ազդեցության ամրապնդմամբ, ինչպես նաև Իսրայելի հետ սահմանային սիրիական հարավային հատվածներում շիայական խմբավորումների ակտիվությամբ: Հավանաբար այս մոտեցումն էր դրդում Իսրայելին համագործակցության եզ-

րեր գտնել տարածաշրջանում Իրանի մեկ այլ հակառակորդ համարվող Սաուդյան Արաբիայի հետ՝ նպատակ ունենալով հակաիրանական պայքարի համատեղ հարթակ կառուցել նաև Սիրիայի հարավում՝ սիրիա-հորդանանյան սահմանագծում: Այդ առումով հատկանշական էր հեղինակավոր «The Sunday Times» պարբերականում 2013 թ. նոյեմբերի 17-ին հրապարակված «Երկու վաղեմի հակառակորդները միավորվում են ընդդեմ Թեհրանի» վերտառությամբ հոդվածը, որում ներկայացվում էին Իսրայելի և Սաուդյան Արաբիայի՝ Իրանի դեմ համատեղ գործելու նախապատրաստական ծրագրերը: Ուշագրավ էին նաև ԶԼՄ-ներում լայն արձագանք գտած այն տեղեկությունները, որոնց համաձայն՝ Սիրիայում ընթացող ռազմական գործողություններում նկատելի էր իսրայելա-սաուդական համագործակցություն: Սիրիական հակամարտության վերաբերյալ Իսրայելի ու Սաուդյան Արաբիայի դիրքորոշումները համընկնում էին նաև Սիրիայի ներկայիս վարչախմբին իշխանությունից հեռացնելու հարցում: Երկարատև հեռանկարում Իսրայելը ցանկանում է Սիրիայում տեսնել իր հետ խաղաղ գոյակցող նոր աշխարհիկ կառավարություն, որը կվերահսկի երկրի տարածքը, կդիմակայի Իրանի ազդեցության տարածմանը, և այնքան թույլ լինի, որ լուրջ սպառնալիք չներկայացնի Իսրայելի համար⁹⁹:

Հրեական պետությունն ունի մերձավորարևելյան տարածաշրջանում տեղ գտած վերափոխումների իր տեսլականը՝ խնդիր դնելով թուլացնել հարևան այն արաբական երկրները, որոնք թշնամաբար են տրամադրված Իսրայելի հանդեպ: Շիա-ալաուիական իշխանությունների կողմից ղեկավարվող Սիրիան այդ երկրներից էր¹⁰⁰:

ԳԼՈՒԽ IV
ԷԹՆԻԿ-ԴԱՎԱՆԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄԻՐԻԱՅՈՒՄ 2011-2020 ԹԹ.
(ՀԱՅԵՐԻ ԵՎ ՔՐԴԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

**4.1. Միրիահայ համայնքը սիրիական հակամարտությունում
2011-2020 թթ.**

2011 թ. մարտից Միրիայում ընթացող գործընթացներն իրենց ազդեցությունն ունեցան երկրի էթնիկ-դավանական փոքրամասնությունների, այդ թվում՝ սիրիահայերի վրա, որոնք, հիմնականում բնակվելով երկրի հյուսիսային շրջաններում, հակամարտության սկզբից հայտնվեցին ռազմական ակտիվ բախումների թատերաբեմում:

Միրիայի հայ համայնքը Մերձավոր Արևելքի ամենահին ու ավանդական համայնքներից մեկն է: Հայերը Միրիայում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից¹⁰¹: 12-13-րդ դարերում հայերը կազմում էին Միրիայի բնակչության հիմնական տարրերից մեկը, որոնք սփռված էին ամբողջ երկրով մեկ¹⁰²: Հայերի թիվն այստեղ ավելացավ ուշ միջնադարում, երբ հայերը սկսեցին բնակություն հաստատել Դամասկոսում, Փայասում, Ալեքսանդրետում, Հալեպում և այլուր¹⁰³: Միրիահայ համայնքը մեծապես համալրվեց 1915 թ. ցեղասպանությունից հետո մազապուրծ եղած շատ հայերով: Հայերը ժամանակի ընթացքում սկսեցին ինքնակազմակերպվել որպես համայնք՝ ցուցաբերելով քաղաքական կազմակերպվածություն, ինտեգրվելով նաև Միրիայի հասարակական կյանքում¹⁰⁴: Այս առումով հայերի սոցիալ-քաղաքական կյանքում դրական փոփոխությունն այն էր, որ 1924 թ. հունիսի 12-ին Ազգերի լիգայի կողմից սիրիահայերին ինքնության վկայագրեր տրամադրվեցին¹⁰⁵, իսկ նույն թվականի ամռա-

նը սիրիահայերը ստացան քաղաքացիություն: Հայերի շրջանում սկսեցին ակտիվ գործունեություն ծավալել հայկական հայրենակցական, մշակութային ու բարեգործական միություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև ազգային քաղաքական կուսակցությունները («Սոցիալ-դեմոկրատ հնչակյան» (ՄԴՀԿ), «Ռամկավար ազատական» (ՌԱԿ) և «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ)), որոնք համայնքային խնդիրների լուծման նպատակով համագործակցում էին եկեղեցու հետ¹⁰⁶: Սիրիայում հայերի նման կարգավիճակը միանշանակ չընդունվեց արաբ բնակչության կողմից. վերջիններս մտավախություն ունեին, որ ֆրանսիական մանդատային իշխանությունների կողմից դա կարող էր Սիրիայում քաղաքական շահարկումների առարկա դառնալ:

Մեր կարծիքով մանդատային իշխանությունների ներքին քաղաքականության հիմքում էթնիկ և կրոնադավանական հակասությունների առաջացման շնորհիվ երկիրը մասնատված պահելն էր, ինչը հնարավորություն էր տալիս վերահսկելի դարձնելու ներսիրիական զարգացումներն ու հնազանդ պահելու անընդհատ ապստամբող երկիրը:

Անկախության շրջանում՝ 1940-ական թթ. վերջին և 1950-ական թթ., Սիրիայում տեղի ունեցած բազմաթիվ հեղաշրջումները, այնուհետև 1958-1961 թթ. Սիրիայի և Եգիպտոսի միավորումն իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև հայերի համար: Սակայն 1967 թ. համայնքի ձեռքբերումը եղավ այն, որ հայերին Սիրիայում թույլատրվեց հայկական (սակայն պետական համարվող) դպրոցներում 4 ժամ ազգային լեզու՝ հայերեն, և 2 ժամ հայերենով կրոն դասավանդել: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Սիրիայում հաստատված հայ համայնքն ինչպես քաղաքական, այնպես էլ ներհամայնքային խնդիրներին առնչվող հարցերում այնքան էլ միատարր չէր, սրան ավելանում էր նաև

Սիրիայում Հայաստանյայց առաքելական եկեղեցու մասնատվածությունը (Բերիո թեմ, որը ենթակա է Անթիոխասին, և Դամասկոսի թեմ, որը ենթակա է Էջմիածնին)*, ինչպես նաև կաթոլիկ և բողոքական հայկական համայնքների առկայությունը, ինչը, անկասկած, իր ազդեցությունն էր ունենում սիրիահայ համայնքի միասնականության ու ներսիրիական հիմնախնդիրների լուծման ոլորտում համատեղ դիրքերից հանդես գալու վրա¹⁰⁷: Սակայն չնայած սիրիահայերի շրջանում առկա տարաձայնություններին՝ հայ համայնքն իր օրակարգում միշտ ունեցել է խնդիրներ, որոնց շուրջ դրսևորվել է միասնականություն¹⁰⁸:

Հաֆեզ ալ-Ասադի նախագահության վերջին տասնամյակում, ինչպես նաև նրա որդու՝ Բաշար ալ-Ասադի նախագահության շրջանում իշխանությունները երաշխավորում էին երկրի ավանդական կրոնական համայնքների ճանաչումը, սակայն, դրա հետ մեկտեղ, պարբերաբար կանխում էին համայնքային կամ էթնիկ-մշակութային ինքնության շուրջ որևէ շեշտադրում, ինչն ունակ էր, ըստ իշխանությունների, վնասել հասարակական անդորրը¹⁰⁹:

Մինչ սիրիական հակամարտության սկիզբը (2011 թ. մարտ) սիրիահայ համայնքը պաշտոնապես հաշվվում էր 100.000¹¹⁰: Համայնքի թվաքանակի վերաբերյալ շրջանառվող ոչ պաշտոնական տվյալներով սիրիահայերի թվաքանակը տատանվում էր 60.000-80.000-ի շրջանակներում: Սիրիահայերի մեծ մասը կենտրոնացած էր Հալեպում (շուրջ 40.000-50.000), մնացյալը՝ Դամասկոսում (շուրջ 6.000-7.000), Լաթակիայի, Հոմսի, ալ-Բակկայի, ալ-Հասակայի, Դեր Զորի նահանգներում (ավելի քան 30.000)¹¹¹:

Սիրիահայ համայնքը չէր կարող անմասն մնալ 2011 թ. մարտից երկրում ծավալվող ներքաղաքական գործընթացներից՝ հա-

* Սիրիահայ համայնքի հիմնական մասը Հայ առաքելական եկեղեցու հետևորդներն են, կան նաև հայ կաթոլիկներ և հայ ավետարանականներ:

կամարտության սկզբից իր աջակցությունը հայտնելով Բաշար ալ-Ասադի վարչակարգին և այդ վարչակարգի պահպանման մեջ տեսնելով հայ համայնքի ապահովությունն ու հետագա գոյատևումը¹¹²:

Մեր կարծիքով սիրիահայերի նման վարքագիծը հիմնականում պայմանավորված էր հետևյալ գործոններով.

1. հակամարտության սկզբնական փուլով, երբ դեռևս իրավիճակը Սիրիայում լարված չէր, և ռազմական բախումների աշխարհագրությունը սահմանափակվում էր մեկ-երկու թեժ կետերով՝ անմիջական սպառնալիք չստեղծելով հայաբնակ շրջանների համար,

2. պատմական այն որոշ հուշերով, որոնք կապված էին Սիրիայի նորագույն պատմության ընթացքում տեղի ունեցած ներսիրիական հակամարտություններում սիրիական իշխանությունների հաջողությունների և սիրիական բանակի հաղթանակների հետ (հատկապես 1979-1982 թթ. երկրում ծայր առած հակասություններում Հաֆեզ ալ-Ասադի իշխող վարչակարգի արձանագրած հաջողությունները Սիրիայի «Մուսուլման եղբայրներ» իսլամական կառույցի նկատմամբ, որն ավարտվեց Համայի ջարդերով և մոտ 10000 ընդդիմադիրների ոչնչացմամբ),

3. Բաշար ալ-Ասադի իշխող ալաուիական վարչակարգի նկատմամբ սիրիահայերի մեծամասնության ավանդական համակրանքով,

4. սիրիական հակամարտության մեջ ներգրավված ընդդիմադիր ճամբարի նկատմամբ (հատկապես «Սիրիական ազգային կոալիցիայի» (ՍԱԿ), նրա ռազմական թևը համարվող Սիրիայում ակտիվ ռազմական գործունեություն ծավալած «Սիրիայի ազատ բանակի» (ՍԱԲ)) սիրիահայերի անվստահությամբ¹¹³ և հակամարտության սկզբից ընդդիմադիրների շարքերում ավելացող իսլամական ծայրահեղ արմատական դրսևորումներով:

Սիրիահայերի նման վարքագիծն ու Բաշար ալ-Ասադի վարչակարգի աջակցությանն ուղղված հրապարակային երթերը չվրիպեցին սիրիական ընդդիմադիր ուժերի ուշադրությունից, որոնց կողմից եղան ինչպես հակահայկական հայտարարություններ, այնպես էլ սիրիահայ համայնքի դեմ ուղղված գործողություններ (առևանգումներ, ռազմական հարձակումներ և այլն)¹¹⁴։ Սիրիական ընդդիմադիրների վերոհիշյալ հակահայկական գործողությունները նաև պատճառ դարձան սիրիահայերի վարքագծի փոփոխության համար, ինչը, մեր կարծիքով, արդարացված էր՝ հաշվի առնելով սիրիահայերի, հատկապես հալեպահայերի համար ստեղծված ծանր իրավիճակը։

Աստիճանաբար գիտակցելով չեզոքություն պահպանելու նպատակահարմարությունը՝ սիրիահայ համայնքը սկսեց հանդես գալ հակամարտության շուտափույթ դադարեցման ու Սիրիայում ծայր առած ճգնաժամի խաղաղ կարգավորման մասին հայտարարություններով։ Պաշտոնապես այս մոտեցումն արտահայտվեց Սիրիայի երեք հայկական կրոնական համայնքների դեկլարաների՝ Հայ առաքելական եկեղեցու Բերիո թեմի առաջնորդ Շահան եպիսկոպոս Սարգսյանի, Բերիո թեմի Հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Մարիաթյանի և Սիրիայի հայ ավետարանական համայնքի համայնքապետ, վերապատվելի Հարություն Սելիմյանի դրական չեզոքության վերաբերյալ համատեղ հայտարարությամբ¹¹⁵։ Նման հայտարարության առկայությունը ոչ միայն ի ցույց դրեց հայ համայնքի կշռադատված պահվածքը սիրիական հակամարտությունում, այլև ստիպեց մտածել սեփական համայնքի ամբողջականությանը և միասնականությանը միտված անհրաժեշտ քայլերի ու միջոցառումների իրականացման ուղղությամբ։ Պետք է փաստել, որ հակամարտության սկզբից սիրիահայերը մշտապես գտնվել են Հայաստանի իշխանությունների, Հայ առաքելական եկեղեցու (ինչ-

պէս Անթիլիասի, այնպէս էլ Էջմիածնի), հայկական զանազան կազմակերպությունների ու Մփյուռքի հայկական այլ գաղթօջախների և ընդհանրապէս սովորական հայ մարդկանց ուշադրության կենտրոնում, որոնց կողմից Սիրիայի հայ համայնքին հասցեագրված ֆինանսական ու բարոյական օժանդակությունը, սննդամթերք ու առաջին անհրաժեշտության ապրանքներ տրամադրելը շարունակական բնույթ են ունեցել:

Ինչևէ, 2012 թ. կեսերից ռազմական գործողություններն ակտիվացան Սիրիայի երկրորդ խոշոր քաղաքում՝ Հալեպում և նրա արվարձաններում, որտեղ կենտրոնացած էր սիրիահայերի մեծ մասը: Սիրիական հակամարտության աստիճանաբար թեժացումը, Հալեպում ռազմական գործողությունների ակտիվացումն ու սիրիահայերի շրջանում գրանցված զոհերը, անխոս, պետք է նպաստեին հայերի արտահոսքին ոչ միայն Հալեպից, այլև Սիրիայի այլ վայրերից (սիրիահայերը սկսեցին տեղափոխվել ոչ միայն Հայաստան¹¹⁶, այլև այլ երկրներ): Այնուամենայնիվ, սիրիահայերի շրջանում բավական ամուր ու ազդեցիկ դիրքեր ունեցող Հայ առաքելական եկեղեցու՝ ի դեմս Անթիլիասի, «Հայ բարեգործական ընդհանուր միության» ու ավանդական հայկական կուսակցությունների համար հայերի արտահոսքը Սիրիայից ոչ ցանկալի էր դիտվում՝ շեշտը դնելով համայնքի ամբողջականության պահպանման ու ստեղծված ծանր պայմաններում սեփական ուժերով համայնքի պաշտպանությունն իրականացնելու ներհամայնքային խնդիրների լուծման վրա¹¹⁷: Սիրիահայ համայնքային ղեկավար շրջանակների ու սիրիահայ կրոնական շրջանակների (առաքելական, կաթոլիկ, բողոքական) նման մոտեցումը, անկասկած, հասկանալի էր. սիրիահայերի շրջանում արտահոսքի ավելացումը կազմալուծում էր հայկական սփյուռքի ավանդական համայնքներից մեկը՝ վտանգի տակ դնելով ինչպէս մնացյալ սիրիահայերին, այնպէս էլ հայկական կրոնամշակու-

թային արժեքները, ուստի անհրաժեշտություն էր առաջացել հակամարտության մեջ հայտնված Սիրիայում հնարավորինս պահպանելու Սիրիայի հայկական համայնքը:

Սիրիան չլքելու հայերի դիրքորոշման վրա իր ազդեցությունն ունեցավ նաև Մեծի Տան Կիլիկիո Ն.Ս.Օ.Օ.Տ. Արամ Ա կաթողիկոսի ուղերձը, որում շեշտվում էր. «Սիրիահայերը Սիրիայի քաղաքացիներ են և կշարունակեն կապված մնալ Սիրիային՝ տեր կանգնելով իրենց պարտավորություններին ու իրավունքներին նույնիսկ ներկայիս դժվար պայմաններում, և Սիրիայի հայությունը դեմ է արտագաղթին»¹¹⁸: Սիրիահայերի հուշերում դեռևս արթուն էին նաև հարևան Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում (1975-1990 թթ.) չեզոք դիրքորոշում որդեգրած լիբանանահայերի ինքնապաշտպանությանն ուղղված հաջող գործողությունները:

2012 թ. սեպտեմբերից սիրիահայ համայնքում ստեղծվեցին ինքնապաշտպանական խմբեր, որոնք, սպառազինվելով նաև սեփական միջոցներով, ձեռնամուխ եղան պաշտպանելու հայկական թաղամասերը, հոգևոր-մշակութային օբյեկտներն ու սեփական ունեցվածքը¹¹⁹: Սա առաջին հերթին վերաբերում էր հայաբնակ այն տարածքներին, որոնց բնակավայրերը անմիջապես սահմանակից էին ընթացող ռազմական գործողություններին և կարող էին հարձակման թիրախ դառնալ (2012 թ. վերջից նման կարգավիճակում էր հայտնվել հայաշատ Հալեպը):

Արդեն 2012 թ. վերջից սիրիական ընդդիմության ճամբարում չափավոր ուժերին զուգահեռ¹²⁰ սկսեցին ակտիվություն ցուցաբերել իսլամական արմատական խմբավորումները*, որոնց բազմա-

* Սիրիական ընդդիմադիր հակաբաշարյան ճամբարում առավելապես չափավոր կառույց ներկայացնող ՄԱԲ-ը, սկսած 2013 թվականից, դիրքերը զիջեց իսլամական արմատական ուժերին: Դրա հիմնական պատճառներից էին ռազմական որոշ անհաջողություններ, ռազմական փորձի պակասը, վատ սպառազին-

գանությունն ու վարվող պայքարի վերաբերյալ ուրույն մոտեցումները կասկածի տակ էին դնում Սիրիայի էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների, այդ թվում՝ նաև հայերի ապագան: Իսլամական ծայրահեղական ուժերի կողմից 2012-2013 թթ. հաճախակի դարձան հարձակումները սիրիահայերի վրա ոչ միայն Հալեպում, այլև Սիրիայի տարբեր հատվածներում՝ իրականացնելով նաև հայերի առևանգումներ, դրանց դիմաց պահանջելով փրկագին և այլն:

2013 թ. կեսերից բարդ իրավիճակ էր ստեղծվել սիրիահայերի համար նաև Սիրիայի այն հատվածներում, որոնք անցել էին ընդդիմադիր զինյալ խմբավորումների վերահսկողության տակ: Տեղի ընդդիմադիր խմբավորումների (հիմնականում ՍԱԲ) կազմում ներգրավված հայերը փորձում էին ընդգրկվել տեղային ընդդիմադիր խորհուրդներում՝ հայկական ինքնությունն ու տեղի հայկական հոգևոր-մշակութային արժեքները պահպանելու համար: Այնուամենայնիվ, ծայրահեղ իսլամական խմբավորումների թվաքանակի ավելացումն ու վայրագությունները, հատկապես ալ-Ռակկայում և դրա շրջակայքում գտնվող բնակավայրերում, ստիպեցին տեղացի հայերի զգալի հատվածին լքել իրենց բնակատեղիները հատկապես 2013 թ. կեսերից: Այդ համատեքստում ընդդիմադիր զինյալների վերահսկողության տակ գտնվող ալ-Ռակկայում և հարակից որոշ բնակավայրերում, անկասկած, տեղի ազգային և կրոնական փոքրամասնությունների, նաև հայերի անվտանգությունը վտանգված էր, առավել ևս, որ ընդդիմադիրներն այստեղ փորձում էին կառուցել խալիֆայություն՝ հիմնված շարիաթի օրենքների վրա¹²¹: Իր դաժան վարքագծով Սիրիայում

վածությունն ու ֆինանսավորումը: Զուգահեռաբար մեծ թվով իսլամական ծայրահեղականներ տեղափոխվեցին մերձավորարևելյան տարածաշրջան, և ուղմական ու ֆինանսական օժանդակություն ստանալով տարածաշրջանային որոշ ուժերից՝ անմիջապես տեղափոխվում էին Սիրիա (դրա համար օգտագործվում էր հիմնականում Թուրքիայի տարածքը):

աչքի ընկած ԻՇԻՊ-ը նույնիսկ ալ-Ռակկայի հայ կաթոլիկ եկեղեցին կրակի մատնեց՝ եկեղեցու գմբեթի խաչի փոխարեն ամրացնելով սեփական դրոշը¹²², իսկ արդեն 2014 թ. մարտին գլխահարկ («ջիզիա»¹²³) սահմանեց տեղի քրիստոնյա բնակչության համար¹²⁴: Բացի դրանից՝ սեպտեմբերի 21-ին Սիրիայի Դեր Զոր քաղաքում պայթեցվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին կառուցված Սրբոց նահատակաց հայկական եկեղեցին¹²⁵: Այդ ժամանակ քաղաքը վերահսկվում էր ԻՊ-ի կողմից: Իսլամականների նման գործողություններն ուղղված էին Սիրիայի էթնիկ-դավանական փոքրամասնությունների, մասնավորապես հայերի դեմ*:

Սիրիական հակամարտությունում իսլամական արմատական, հատկապես ծայրահեղ արմատական որոշ խմբավորումների թվաքանակի ավելացումը, սիրիական կառավարական ուժերի և այլադավանների հանդեպ վերջիններիս բռնի գործողություններն ու դաժանությունները իրական սպառնալիք էին երկրի էթնիկ ու կրոնադավանական փոքրամասնությունների համար: Սրան պետք է ավելացնել նաև ընդդիմադիր իսլամականների շրջանում թյուրքական ծագում ունեցող այլ ծայրահեղականների (թուրքեր, ադրբեջանցիներ և այլ) թվաքանակի աստիճանական ավելացումը հատկապես Հալեպի ու Իդլիբի սիրիական նահանգներում և հյուսիսային այլ շրջաններում, որոնց ռազմական, ֆինանսական և այլ բնույթի օժանդակությամբ զբաղվում էր Թուրքիան:

Բացի վերոհիշյալ ԻՇԻՊ-ից՝ իսլամական ծայրահեղական այլ ուժեր նույնպես աչքի ընկան իրենց ակտիվությամբ: Խոսքն

* Սրբոց նահատակաց հայկական եկեղեցու պայթեցումը սեպտեմբերի 21-ին հուշեց նաև, որ իսլամականների վարքագծում նկատվեցին ուղղորդումներ, և կարելի է ենթադրել, որ այդ ուղղորդումներում իրենց մասնաբաժինն են ունեցել թուրքական հատուկ ծառայությունները կամ ԻՊ-ի շարքերում բավական ակտիվ գործող թյուրքական խմբավորումները:

առաջին հերթին «ալ-Կաիդային» հարող ՋՆ իսլամական ծայրահեղական կառույցի մասին է, որը դարձավ Սիրիայի ընդդիմադիր խմբավորումների շրջանում ամենաազդեցիկ կառույցներից մեկը, և ի տարբերություն ԻՇԻՊ-ի՝ այն ուներ սիրիական էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ հստակ մշակված քաղաքականություն ու «հանդուրժողական» վարքագիծ: Վերոշարադրյալը վկայեց իսլամական ծայրահեղ արմատական գաղափարախոսությամբ առաջնորդվող և ԱԿ ճյուղավորումը հանդիսացող ՋՆ-ի հեռու գնացող ծրագրերի մասին՝ նաև ազգային փոքրամասնությունների հետ կապված, ինչը տեղավորվում էր մուսուլմանական երկրներում նաև էթնիկ ու կրոնադավանական փոքրամասնություններին առնչվող ԱԿ ժամանակակից ջիհադական գաղափարախոսության շրջանակներում:

2014 թ. սկզբից Սիրիայի հայկական մեծ համայնք ունեցող Հալեպ քաղաքի շուրջ ռազմական թեժ ու լարված գործողությունները նվազեցին: Պատճառը հյուսիսային տարածքներում տարվա սկզբից գրանցված ԻՇԻՊ-այլ ընդդիմադիր խմբավորումներ կատաղի մարտերն էին և այստեղից առավել հարավ՝ սիրիա-լիբանանյան սահմանային գծում ակտիվացող ռազմական բախումները, ինչը, սակայն, սիրիահայերի և հատկապես հալեպահայերի համար անվտանգության ապահովման երաշխիք չէր:

Սիրիահայ համայնքի համար վտանգավոր միտումներ նկատվեցին 2014 թ. գարնանը, երբ մարտի 21-ի վաղ առավոտյան սիրիական հակակառավարական խմբավորումները հատեցին թուրք-սիրիական սահմանը Լաթակիայի նահանգի հյուսիսում՝ մի քանի ուղղություններով հարձակվելով հայաբնակ Քեսաբի ու շրջակա գյուղերի վրա*: Սիրիական հակամարտության ընթացքում Քեսաբը անվտանգ ապաստան էր Սիրիայի մյուս շրջաններ

* Քեսաբի և շրջական բնակավայրերի նկատմամբ ընդդիմադիրների հարձակման քարտեզը տե՛ս №11 հավելվածում:

րում բնակվող հայերի համար (տարբեր տվյալներով մոտ 2000 հայ էր բնակվում ամառանոցային այդ բնակավայրում): Մարտի 21-ի հարձակման հետևանքով Քեսաբի ու շրջակա գյուղերի շուրջ 670 հայ ընտանիքներ տարհանվեցին Լաթակիա և հարակից այլ բնակավայրեր: Քեսաբահայության տարհանումն ու Լաթակիայում նրանց ընդունման ու տեղավորման գործընթացն իրականացվեց բավականաչափ կազմակերպված կերպով, ինչը վկայեց այն մասին, որ քեսաբահայությունը, այնուամենայնիվ, պատրաստ էր նման հարվածի. այստեղ գործում էին համայնքի պաշտպանության հայկական զինված խմբեր, որոնք սկզբնական շրջանում մարտի էին բռնվել թվաքանակով մի քանի անգամ գերազանցող ընդդիմադիրների դեմ՝ ապահովելով Քեսաբից և հարակից բնակավայրերից հայերի անվտանգ տարհանումը¹²⁶: Քեսաբի վրա հարձակումն ուսումնասիրելիս կարելի է հանգել հետևյալ եզրահանգումներին:

1. Քեսաբի վրա հարձակումները հաջորդել էին սիրիական կառավարական ուժերի կողմից երկրի հարավ-արևմուտքում՝ ալ-Կալամուն լեռան շրջանում գտնվող ռազմավարական կարևորություն ունեցող մի շարք բնակավայրերում արձանագրած հաջողություններին, մասնավորապես մարտի 16-ին Դամասկոսից մոտ 60 կմ հյուսիս-արևմուտք ընկած Յաբրուդ քաղաքի ազատագրմանը: Ըստ էության, ընդդիմադիր զինյալները, որոնք ներգրավված էին Դամասկոս-Հոմս գծի երկայնքով ընթացող մարտերում, մասնավորապես լիբանանա-սիրիական սահմանագծի մոտ տեղի ունեցող բախումների հետևանքով զիջելով ռազմավարական դիրքերը՝ փորձեցին «կոմպենսացնել» պարտությունը Սիրիայի հյուսիս-արևմուտքում գտնվող Լաթակիա նահանգում՝ մարտի 21-ի առավոտյան հարձակումներ գործելով Լաթակիայի հյուսիսային բնակավայրերի վրա: Քեսաբի վրա հարձակում գործած ընդդիմադիր զինյալներից են եղել ՋՆ, «Հարաքաթ» Անսար

ալ-Շամ», «Քաթաիբ ալ-Իսլամ» և «Ջաբհաթ Թուար ալ-Սուրիա» իսլամական արմատական խմբավորումները¹²⁷: Քեսաբը նվաճելուց հետո՝ մարտի 24-ին, համացանցային ռեսուրսներում հիշյալ կառույցները տեսանյութեր տարածեցին, որոնցում ցուցադրվում էր, թե ինչպես են իսլամականները մուտք գործում Քեսաբի եկեղեցիներից մեկը՝ ցույց տալով, որ եկեղեցին մնացել է անվնաս, իսկ իսլամականները եկել էին Քեսաբ՝ ազատագրելու բնակիչներին Ասադի ուժերից¹²⁸: Ակնհայտ էր, որ նման տեսանյութերը քարոզչական ուղղվածություն ունեին՝ ցույց տալով, որ իսլամականները հոգ են տանում եկեղեցիների նկատմամբ՝ հակառակ իսլամականների կողմից բռնաբարքների, ինչպես նաև տեղի եկեղեցիներն ու մշակութային կենտրոնները թալանելու շրջանառվող լուրերին¹²⁹:

2. Հարձակվողները հատել էին թուրք-սիրիական սահմանը թուրքական անցակետերից, իսկ որոշ թուրքական ՋԼՄ-ներ հաղորդում էին, որ ընդդիմադիր զինյալներից ոմանք բախումների ընթացքում վիրավորվելուց հետո բուժման նպատակով փոխադրվել էին Թուրքիայի Յայլադաղի քաղաք¹³⁰: Քեսաբի կամ առաջնագծում հայտնված Սև աղբյուր և այլ բնակավայրերի աշխարհագրական դիրքն այնպիսին էր, որ ընդդիմադիր զինյալ խմբավորումների լայնածավալ ռազմական գործողությունների համար հարակից թուրքական տարածքներն էին օգտագործվել: Հարձակման անցած զինյալները «թիկունքային» աջակցություն էին ստացել թուրքական կողմից՝ ստանալով նաև թուրքական ռազմուժի հրետանային և ռազմաօդային ուժերի աջակցությունը¹³¹: Սա ևս մեկ անգամ վկայեց, որ թուրքական իշխանությունները ոչնչի առաջ չէին կանգնում և պատրաստ էին սադրանքներ ու զինյալների հարձակումներ հրահրելու օգնությամբ Սիրիայի հետ սահմանամերձ հատվածներում կյանքի կոչել իրենց նպատակները¹³²:

3. Քեսաբը գտնվում էր Սիրիայի միջերկրածովյան Լաթակիա քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա, որի ռազմավարական դիրքը կարևոր էր նաև սիրիական իշխանությունների համար: Այս համատեքստում, հաշվի առնելով նաև այդ նահանգի աշխարհագրական դիրքն ու նշանակությունը Բաշար ալ-Ասադի վարչակարգի համար, վերջինս վճռական էր տրամադրված Լաթակիայի հյուսիսում ընթացող մարտերին՝ փորձելով ետ բերել կորցրածը: Դրա մասին էին վկայում նաև Լաթակիայում և Քեսաբում ծավալված ռազմական գործողություններում Բաշար ալ-Ասադի անմիջական ազգականների զոհվելու մասին տեղեկությունները¹³³: Քեսաբի և հարակից բնակավայրերի վրա հարձակվողների նպատակներից մեկը նաև 2012 թ. վերջից Սիրիայի՝ ընդդիմադիրների վերահսկողության տակ անցած Իդլիբի նահանգի մի շարք շրջանները երկրի միջերկրածովյան ափամերձ որոշ շրջանների հետ կապելն էր, ինչը փորձում էին իրականացնել զինյալները:

4. Լաթակիայի հյուսիսում վերահսկողության հաստատումը, առավել ևս դեպի Միջերկրական ծով ելքը կարևոր էին հակամարտության մեջ ներգրավված հակամարտող կողմերի համար: Միջերկրական ծովի Սիրիայի ափամերձ հատվածում գտնվել էին գազի հսկայական ծավալներ (մոտ 285 մլրդ խ/մ), և վերահսկել այդ տարածքները նշանակում էր հետագայում գերշահույթներ հետապնդել: Լաթակիայով և նրան հարակից շրջաններով էին անցնելու որոշ գազամուղներ, որոնք նախատեսված էին Պարսից ծոցում գտնվող Իրանի և Կատարի գազային պաշարները համապատասխանաբար Լաթակիայով Սիրիայի միջերկրածովյան ավազան և դեպի Թուրքիա հասցնելու համար: Հետևաբար տնտեսական առումով այս տարածքները նույնպես գրավիչ էին ներկայիս իշխանությունների, հակամարտության մեջ ներ-

գրավված ինչպես ներսիրիական ուժերի, այնպես էլ արտասիրիական որոշ ուժային կենտրոնների համար:

Քեսաբը նվաճելուց մոտ երեք ամիս անց սիրիական կառավարական ուժերը հակազդոհի արդյունքում ազատագրեցին բնակավայրը իսլամականներից, որից անմիջապես հետո տեղի հայ բնակիչների որոշ հատվածը վերադարձավ քաղաք: Քեսաբի և հարակից բնակավայրերի ուղղությամբ ընդդիմադիր խմբավորումների հարձակումները շարունակվեցին նաև 2014 թ. դեկտեմբերի վերջին և 2015 թ. առաջին ամիսների ընթացքում: 2015 թ. սկզբից ընդդիմադիր խմբավորումները շարունակեցին ակտիվ ռազմական գործողությունները Իդլիբ շրջկենտրոնի ուղղությամբ, որն անցավ ընդդիմադիրների վերահսկողության տակ մարտի վերջին: Իսլամականները շարունակեցին առաջխաղացումը նաև Իդլիբից արևմուտք՝ նվաճելով ռազմավարական կարևոր մի շարք բնակավայրեր, այդ թվում՝ Ջիսր ալ-Շուլուր բնակավայրը: 2015 թ. մարտ-ապրիլ ամիսներին ընդդիմադիր խմբավորումների կողմից էլ ավելի թեժ և լարված բնույթ ստացան Հալեպ քաղաքի այն թաղամասերի ռմբակոծությունները, որոնք գտնվում էին սիրիական կառավարական ուժերի վերահսկողության տակ: Ռմբակոծությունների ենթարկվեցին նաև Հալեպի հայաբնակ Սուլեյմանիա, Նոր Գյուլ, Ազիզիա և այլ թաղամասերը: Այս ամենի արդյունքում եղան զոհեր և ավերածություններ: 2015 թ. հունիսին ևս մերթընդմերթ ռմբակոծության էին ենթարկվում Հալեպի հայաշատ թաղամասերը:

Սիրիական իշխանությունները 2015 թ. սեպտեմբերի 30-ին պաշտոնապես դիմեցին Ռուսաստանի Դաշնությանը ռազմական աջակցության խնդրանքով¹³⁴: Նույն օրը ռուսական ռազմաօդային ուժերը սկսեցին օդային հարվածներ հասցնել սիրիական ընդդիմադիր, առավելապես իսլամական արմատական ուժերի կայանատեղիներին երկրի տարբեր հատվածներում, այդ թվում՝

հյուսիսային հայաշատ նահանգներում, որով սկսվեց ռուսական զինուժի ակտիվ ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը: Վերոհիշյալ ռուսական օդային հարվածներին զուգահեռ սկսվեցին սիրիական կառավարական ուժերի ու դրանց աջակցող այլ խմբավորումների ցամաքային ակտիվ գործողություններ սիրիական վերոհիշյալ տարածքներում: 2015 թ. վերջին և հատկապես 2016 թ. ընթացքում ռուսական օդուժի հարվածների, ռուսական զորամիավորումների, ռազմական խորհրդատուների, ինչպես նաև շիայական որոշ խմբավորումների օգնությամբ սիրիական կառավարական ուժերը Սիրիայի առանձին հատվածներում, հատկապես հյուսիսային Հալեպ նահանգում առաջխաղացում արձանագրեցին, չնայած որոշ այլ հատվածներում իսլամական խմբավորումների առաջխաղացում նույնպես նկատվեց: Հիշյալի հանգուցալուծումը եղավ 2016 թ. դեկտեմբերին հայաշատ Հալեպ քաղաքի ազատագրումը սիրիական կառավարական ուժերի և շիայական այլ խմբավորումների կողմից, որով նվազեցվեց իսլամական զանազան խմբավորումներից Հալեպում բնակվող հայ համայնքին սպառնացող վտանգը*:

2017-2020 թթ. ընթացքում հայաբնակ շրջաններում իրավիճակը մնում էր կառավարելի սիրիական իշխանությունների կողմից: Չնայած դրան՝ նշված ժամանակահատվածում հայերի և հայկական կրոնամշակութային հուշարձանների նկատմամբ Սիրիայի որոշ բնակավայրերում նկատվեցին հակահայկական գործողություններ: Այդ ժամանակահատվածում չդադարեցին ընդդիմադիր ուժերի կողմից հայաբնակ Հալեպի և Քեսաբի ուրբակոծությունները:

Սիրիայում հայ համայնքի համար կարևոր նշանակություն ունեցավ 2019 թ. փետրվարին Հայաստանի կողմից ուղարկված

* 2016 թ. վերջում Հալեպում ստեղծված իրավիճակի վերաբերյալ տե՛ս №8 հավելվածում:

մարդասիրական առաքելությունը: Սիրիայի ժողովրդին մարդասիրական մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու նպատակով Հայաստանի իշխանությունների որոշմամբ հումանիտար ականազերծողներից, բժիշկներից և նրանց անմիջական անվտանգությունն ապահովող հայ մասնագետներից բաղկացած 83-հոգանոց խումբ ուղարկվեց Սիրիայի Հալեպ քաղաք¹³⁵: Մեր կարծիքով այդ իրողությունը դրական նշանակություն ունեցավ սիրիական իշխանությունների, սիրիացիների և սիրիահայերի համար: Հայկական հումանիտար առաքելության գործառույթները չսահմանափակվեցին միայն ականազերծման և բնակչությանը բժշկական օգնություն տրամադրելու աշխատանքներով, այլ իրականացվեցին հումանիտար բնույթի այլ աշխատանքներ, մասնավորապես դեղորայքի տրամադրում, մանկապարտեզներին և ծերանոցներին տրվող օգնություն, համայնքային կառույցների, հայկական հիմնադրամների աջակցության բաշխում, միջազգային տարբեր կազմակերպությունների հետ սերտ համագործակցություն և այլ բնույթի աշխատանքներ¹³⁶: Սիրիական հակամարտության այդ փուլում հայկական ցանկացած առարկայական ներկայություն (այդ թվում՝ հումանիտար առաքելության տեսքով) ոչ միայն բարձրացնում էր Հայաստանի հեղինակությունը տարածաշրջանում, այլ նաև հակամարտության ավարտից հետո զանազան այլ բնագավառներում (առողջապահություն, շինարարություն և այլն) Սիրիայի հետագա վերակառուցման ընթացքում առաջնային դիրքերում լինելու հնարավորություն էր ընձեռում:

2019 թ. ընթացքում գրանցվեցին նաև հակահայկական գործողություններ Սիրիայում: Հոկտեմբերին վնասվեց հայկական Սուրբ Խաչ եկեղեցին Թալ Աբյադում, որը թուրք-քրդական բախումների ժամանակ հայտնվեց Թուրքիայի և դրա հովանավորությամբ գործող ընդդիմադիր ուժերի վերահսկողության տակ: 2019 թ. նոյեմբերին Դեր Զոր-ալ-Հասաքա ճանապարհին ԻՊ ա-

հաբեկչական հարձակման հետևանքով սպանվեցին երկու հայեր՝ հոգևորական Հովսեփ Բեդոյանն ու նրա հայրը¹³⁷:

2020 թ. սկզբին Հալեպ և Իդլիբ նահանգներում սիրիական կառավարական ուժերի ու ընդդիմադիր խմբավորումների միջև ռազմական ակտիվ գործողություններն ու այս հաստվածում իսլամական ծայրահեղ արմատական կառույցների առկայությունը դեռևս վտանգ էին ներկայացնում սիրիահայերի համար: Սակայն դրական տեղաշարժ էր փետրվարի կեսերից սիրիական բանակի առաջխաղացումը Հալեպ քաղաքի արևմտյան արվարձանների ուղղությամբ, որը հեռացրեց ընդդիմադիրներին Հալեպից արևմուտք ընկած տարածքներից և նվազեցրեց հալեպահայերի նկատմամբ ընդդիմադիր խմբավորումներից եկող վտանգը:

Հատկանշական է նաև, որ սիրիական հակամարտության ընթացքում անընդհատ սրվող սիրիա-թուրքական հարաբերությունների և հակասությունների դրսևորումներից մեկը եղավ 2020 թ. փետրվարի 13-ին Սիրիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը, որը, անկասկած, ողջունելի էր: Սակայն այն առաջին հերթին պետք է դիտարկել սիրիա-թուրքական լարված հարաբերությունների համատեքստում¹³⁸:

4.2. Քրդերը սիրիական հակամարտությունում 2011-2020 թթ.

«Քուրդ» էթնիկ եզրույթն առաջին անգամ հանդիպում է արաբական աղբյուրներում դեռևս վաղիսլամական շրջանում¹³⁹: Մերձավոր Արևելքում քրդերի կողմից բնակեցված տարածքները երկար ժամանակ միջանկյալ գոտի են ծառայել մերձավորարևելյան տարածաշրջանում: 1500 թվականից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն (1914 թ.) ընկած ժամանակահատվածում քրդերով բնակեցված տարածքները նման կարգավիճակով էին առանձնանում Արևմուտքում Օսմանյան կայսրության և Արևելքում Սեֆյան Իրանի միջև: Առաջին համաշխարհային պատերազմից հետո քրդաբնակ տարածքները բաժանվեցին 4 պետությունների՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի միջև, որոնցից յուրաքանչյուրում քրդերի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը տարբերվեց միմյանցից՝ զգալի ազդեցություն ունենալով այդ երկրներում քրդական հասարակական-քաղաքական շերտերի և կազմակերպությունների ձևավորման ու զարգացման վրա¹⁴⁰:

Քրդերը Սիրիայում հաստատվել են հնագույն ժամանակներից և հավատարիմ մնալով իրենց ավանդույթներին ու կենսակերպին՝ բնակություն են հաստատել երկրի հյուսիսում կոնկրետ սահմանագծված տարածքներում: Ներկայում քրդերը Սիրիայում կենտրոնացած են գերազանցապես երեք հիմնական շրջաններում՝ Աֆրին, Քոբանի և ալ-Ջազիրա¹⁴¹: Չկան պաշտոնական տվյալներ, սակայն կան տարբեր գնահատականներ՝ Սիրիայում քրդերի թվաքանակի ու նրանց բնակության վայրերի հետ կապված¹⁴²: Ըստ այդմ՝ մինչև հակամարտության սկիզբը քրդերը Սիրիայում կազմում էին բնակչության շուրջ 10%-ը (մոտ 1-1.5 մլն¹⁴³):

Սիրիայի անկախանալուց հետո (1946 թ.) իշխանության եկած «Ազգային ճակատի» կողմից վարվող համաարաբական գաղափարախոսության վրա հիմնված քաղաքականության շրջանակներում մերժվեց քրդերի՝ որպես ազգային փոքրամասնության իրավունքների ճանաչումը: 1950-ական թթ. սիրիական իշխանությունների կողմից վարվող «Արաբական գոտու» քաղաքականության շրջանակներում քրդաբնակ տարածքներում արաբների թվաքանակի ավելացմանն ուղղված քայլեր ձեռնարկվեցին, սակայն ծրագիրը, որպես այդպիսին, կիսատ մնաց: 1961 թ. օգոստոսին 23-ին սիրիական կառավարությունը ընդունեց №93 որոշումը, որով հաստատվեց Սիրիայի Ջազիրայի նահանգի հատուկ բնակչության կարգավիճակը: Այն սահմանում էր, որ քրդերը թուրքական Քուրդիստանից «անօրինականորեն ներթափանցել են» Ջազիրա, որպեսզի խաթարեն արաբական ինքնությունը: Արդյունքում Ջազիրայի մոտ 120000 քրդեր բնորոշվեցին որպես օտարերկրացիներ:

Քրդական փոքրամասնության հանդեպ ճնշումների քաղաքականությունը շարունակվեց նաև 1963 թվականից հետո, երբ իշխանության եկավ «ԲԱԱՍ» կուսակցությունը: Վերջինս շարունակեց «Արաբական գոտու» քաղաքականությունը՝ նպատակ ունենալով վերոհիշյալ քրդաբնակ տարածքներում ունենալ արաբական զգալի ներկայացվածություն¹⁴⁴: 20-րդ դարի վերջում և 21-րդ դարի առաջին տասնամյակում սիրիական իշխանությունների կողմից Սիրիայի հյուսիսում ապրող քրդերի նկատմամբ ճնշումները շարունակվեցին: Չնայած դրանց և քրդերի շրջանում աճող արտահոսքին՝ Սիրիայի քրդերին հաջողվեց պահպանել իրենց յուրահատուկ կենսակերպն ու ազգային դիմագիծը Սիրիայի քրդաբնակ հատվածներում:

2011 թվականից սկսված սիրիական հակամարտությունն իր ազդեցությունն ունեցավ նաև քրդերի վրա, որոնք, ստանալով

որոշ արտոնություններ սիրիական իշխանություններից, փորձեցին ակտիվություն դրսևորել Սիրիայում: Երկրի հյուսիսային Աֆրին, Քոբանի և ալ-Ջազիրա շրջաններում ազդեցիկ քրդական կառույցներից «Քրդական դեմոկրատական միությունը» (ԴՄԿ, քրդերեն՝ *Partiya Yekîtiya Demokrat-PYD*) հանդես եկավ ինքնավարություն հիմնելու հայտարարություններով, ինչը միանշանակ չընդունվեց ինչպես տարածաշրջանում (Սիրիա, Թուրքիա և այլն), այնպես էլ՝ քրդերի շրջանում: Հիշյալ հակասություններն ու միասնականության բացակայությունը պայմանավորված էին նաև այն հանգամանքով, որ սիրիական քրդաբնակ տարածքներում մեծ ազդեցություն ունեցող «Քուրդիստանի աշխատավորական կուսակցությունը» (ՔԱԿ, քրդերեն՝ *Partiya Karkerên Kurdistanê-PKK*) ձգտում էր ամրապնդել սեփական դիրքերը Սիրիայում, մինչդեռ Սիրիայի քրդերի շրջանում իրաքյան «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ՔԴԿ, քրդերեն՝ *Partîya Demokrata Kurdistanê-PDK*) դիրքերն ամրապնդելու նպատակով Իրաքյան Քուրդիստան տարածքի ինքնավարության նախագահ Մասուդ Բարզանին քրդերի հաշտեցման ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկեց՝ կազմակերպելով համատեղ հանդիպումներ ինքնավարության մայրաքաղաք Էրբիլում¹⁴⁵: ՔԱԿ և ՔԴԿ ազդեցության տակ գործող Սիրիայի քրդական կառույցների, համապատասխանաբար ԴՄԿ-ի և «Սիրիայի քրդական ազգային խորհուրդի» (ՔԱԽ, քրդերեն՝ *Encûmena Nîştimanî ya Kurdî li Sûriyê-ENKS*) միջև էլ ավելի սրվեցին հակասությունները՝ հաճախ հանգեցնելով արյունալի բախումների¹⁴⁶ Սիրիայի հյուսիսային քրդաբնակ շրջաններում:

Սիրիական հակամարտության մեջ ներքաշված ընդդիմադիր ուժերի, այդ թվում իսլամական ծայրահեղական կառույցների վտանգը ստիպեց քրդերին համախմբվել և սեփական ուժերով կազմակերպել հիշյալ խմբավորումների դեմ պայքարը: 2012 թ.

վերջից և հատկապես 2013 թ. սկզբից կատաղի մարտեր գրանցվեցին քրդական ԺՊՄ-ի և ընդդիմադիր ուժերի միջև: Հատկապես 2014 թ. ընթացքում չղաղարեցին բախումները ԻՇԻՊ-ի դեմ Սիրիայի քրդաբնակ Քոբանիի տարածքում, որտեղ քրդերը փորձում էին կանխել իսլամականների առաջխաղացումը դեպի իրենց բնակավայրեր, իսկ իսլամականները ձգտում էին ընդլայնել Թուրքիայի հետ իրենց սահմանային շփման գիծը՝ պայքարելով նրանց առջև կանգնած քրդերի դեմ: Հատկանշական է, որ թերևս այդ փուլում էր, երբ ԱՄՆ սիրիական հակամարտությունում իր համար կանխատեսելի գործընկեր ընտրեց քրդական ԴՄԿ-ն՝ օժանդակելով և աջակցություն տրամադրելով վերջինին ու դրա ռազմական թևին՝ ԺՊՄ-ին: 2014 թ. դեկտեմբերից ԺՊՄ-ն, Իրաքյան Քուրդիստանի փեշմերգայի¹⁴⁷, այլ երկրներից հավաքված քրդերի, օտարերկրացիների և սիրիական ընդդիմադիր այլ զինված խմբերի օժանդակությամբ հաղթանակներ արձանագրեց իսլամականների նկատմամբ Քոբանիում, որը դարձավ հսկայածավալ տարածքներ վերահսկող «Իսլամական պետության» անկման սկիզբը:

Քոբանիի ազատագրումից հետո՝ 2015 թ. սկզբին, քրդական ռազմական ստորաբաժանումներն անցան հակահարվածի և մի քանի ուղղություններով հաղթանակներ ունեցան ԻՊՊ զինյալների նկատմամբ՝ ազատագրելով Քոբանիին հարակից մի շարք բնակավայրեր: Հունիսի 15-ին քրդական և սիրիական ընդդիմադիր այլ խմբավորումները ԻՊ-ից գրավեցին Թալ Աբյադ բնակավայրը՝ փաստացիորեն միավորելով սիրիական միմյանց հետ սահման չունեցող երեք քրդաբնակ հատվածներից երկուսը՝ Քոբանին և ալ-Հասաքան: 2015 թ. հոկտեմբերի 21-ին քրդերը Թալ Աբյադը հռչակեցին «Սիրիական Քուրդիստանի» բաղկացուցիչ մաս, ինչը տարածաշրջանային մի շարք երկրների կողմից Սի-

րիայի քրդերին ուղղված քննադատությունների պատճառ դարձավ¹⁴⁸:

2015 թ. վերջին բավական բարդ իրավիճակում էր հայտնվել քրդաբնակ Աֆրիկնը, որը ուժեղացել էր մի քանի ուղղություններից: Դեկտեմբերի 7-ին Իրաքյան Քուրդիստանի առաջնորդ Մասուդ Բարզանիի կողմից հայտարարություն տարածվեց այն մասին, որ Սիրիայի քրդաբնակ Աֆրիկնը վտանգված է, քանզի շրջապատված է զանազան ահաբեկչական խմբավորումներով: Բարզանիի նման հայտարարությունները պատահական չէին: Աֆրիկնն այն երեք հիմնական քրդաբնակ տարածքներից էր, որը գտնվում էր Սիրիայի հյուսիս-արևմուտքում՝ Թուրքիայի սահմանին: Այս հատվածում ռուսական օդուժը հրթիռակոծություններ էր իրականացնում ընդդիմադիր ուժերի կայանատեղիներին: Ռուսական օդային հարվածներին զուգահեռ քրդական ուժերը շարժվում էին առաջ՝ նվաճելով տարածքներ ընդդիմադիր խմբավորումներից: Բարզանիի կողմից բարձրաձայնվող մարդասիրական միջանցք բացելը (այդ միջանցքը դուրս էր գալու Թուրքիա) նշանակում էր կասեցնել ռուսական օդուժի հարվածները և հնարավորություն տալ Թուրքիային ազատ գործելու այս հատվածում*: Բացի դրանից՝ Սիրիայի քրդերի հեռահար նպատակն էր միացնել Աֆրիկնը մյուս երկու արդեն միավորված քրդական տարածքներին՝ Քոբանիին և ալ-Հասաքային: Պարզ էր, որ թուրքական իշխանությունների համար անցանկալի էր միավորված «Սիրիական Քուրդիստանի» (Ռոժավա)¹⁴⁹ գոյությունն իրենց սահմանակից սիրիական տարածքներում, և, ինչպես բազմիցս հայտարարվել էր պաշտոնական Անկարայի կողմից, Թուրքիան չէր հանդուրժելու Սիրիայի այս հատվածում քրդական ինքնապաշտպանական ուժերի ռազմական ակտիվությունը: Չմոռա-

* Այդ ժամանակ թուրքական իշխանությունները բարձրաձայնում էին Սիրիայի

նանք նաև, որ Իրաքյան Քուրդիստանի և Թուրքիայի միջև բավական սերտ քաղաքական ու տնտեսական հարաբերություններ էին հաստատվել, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ Մերձավորարևելյան տարածաշրջանում ընթացող գործընթացների վրա: Հիշյալ հայտարարությունները նաև պետք էր դիտարկել Ռուսաստան-Թուրքիա հարաբերություններում այդ ժամանակ նկատվող հակասությունների համատեքստում: Այդ ժամանակաշրջանում Աֆրիկի քրդերի ռազմական հաջող գործողություններն Իրաքյան Քուրդիստանի առաջնորդը ներկայացնում էր որպես ահաբեկչական խմբավորումների կողմից պաշարման մեջ հայտնված քրդերի պայքար՝ Աֆրիկի պաշտպանության համար: Իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանիի՝ Աֆրիկին առնչվող նման հայտարարությունը կարող էր նաև հետևյալ նպատակները հետապնդել:

1. Յույց տալ, որ Մասուդ Բարզանին և նրա կողմից ղեկավարվող «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունը» հետաքրքրված են Սիրիայի քուրդ եղբայրների ճակատագրով՝ քարձրացնելով սեփական հեղինակությունը քրդերի շրջանում:

2. Աֆրիկի շուրջ ստեղծված «իբր տագնապալի» իրավիճակում Մասուդ Բարզանին առաջարկում էր ստեղծել մարդասիրական միջանցք, որը տեղավորվում էր Սիրիայի հենց Աֆրիկին սահմանակից հատվածում Թուրքիայի կողմից անվտանգության գոտի ստեղծելու նպատակների շրջանակում:

Պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ այդ ժամանակ քրդական ինքնապաշտպանական ուժերի և ընդդիմադիր զանազան խմբավորումների միջև բախումները մոտ չէին Աֆրիկին: Բախումներ էին ընթանում Աֆրիկի և «Իսլամական պետության» միջև ընկած այն հատվածում, որը Սիրիայի ընդդիմադիր ճամբար-

հյուսիսային հատվածում անվտանգության գոտի ստեղծելու գաղափարը:

րը ներկայացնող զանազան չափավոր և իսլամական ծայրահեղ արմատական ուժերի վերահսկողության տակ էր: Այդ հատվածը (Թուրքիայի հետ սահմանին) գնալով նեղանում էր արևմուտքից՝ Աֆրիկից, քրդերի և արևելքից «Իսլամական պետության» առաջխաղացման հետևանքով: Այդպես շարունակվելու դեպքում թուրքական իշխանություններն այս հատվածներում չէին ունենալու ընդդիմադիր ուժեր, որոնց վրա կարող էին հենվել Սիրիայի հետ կապված հետագա ծրագրերի իրականացման ժամանակ, առավել ևս կյանքի չէր կոչվի Անկարայի՝ Սիրիայի հյուսիսարևմտյան այս հատվածում 100 կմ երկարությամբ և 50-60 կմ խորությամբ անվտանգության գոտի ստեղծելու ծրագիրը:

Սիրիայի քրդաբնակ շրջաններում և դրանցից դուրս նկատվող ԴՄԿ ու դրա ռազմական թև համարվող ԺՊՄ ակտիվությունն* ու իսլամական ծայրահեղական կառույցների դեմ քրդերի արդյունավետ պայքարը դրդեցին որոշ միջազգային խաղացողներին (ԱՄՆ, ՌԴ և այլն) առանձին հանդիպումներ նախաձեռնել ԴՄԿ ներկայացուցիչների հետ: Ավելին, ԴՄԿ-ին հնարավորություն տրվեց բացելու գրասենյակներ տարբեր երկրներում¹⁵⁰: Այս իրողությունը ևս բացատրվում էր սիրիական հակամարտության մեջ ԴՄԿ ակտիվությամբ և արտասիրիական ուժային կենտրոնների հետ կապեր ստեղծելու և փոխառնչվելու գիտակցմամբ:

ԴՄԿ-ի և «Քուրդիստանի աշխատավորական կուսակցությանը» գաղափարական ընդհանրություններն ակնհայտ են: Հետևաբար Մասուդ Բարզանին և նրա կողմից ղեկավարվող ՔԴԿ-ն Սիրիայի քրդերի վրա ազդելու սահմանափակ հնարավորություններ և լծակներ ունեին: Հիշյալի համատեքստում Սիրիայի քրդերը դժվար թե համաձայնեին Աֆրիկում մարդասիրական միջանցք բացելու Մասուդ Բարզանիի գաղափարին, որի հե-

* Այդ ակտիվությունը նկատվեց ինչպես Սիրիայի ոչ քրդաբնակ տարածքներում,

տնում կանգնած էր նաև Թուրքիան, իսկ հասցեատերը առավելապես արտաքին լսարանն էր: Սիրիայի այս հատվածում նկատվող բուռն զարգացումների և թեժացող մարտերի համապատկերում, որոնց ընթացքում Աֆրիկի քրդերը սկսեցին առաջխաղացում արձանագրել, հետագայում հնարավոր դարձավ թուրքական ռազմական ներխուժումը, որն իրականացավ 2018 թ. սկզբին:

ԱՄՆ աջակցությամբ քրդական ուժերը շարունակեցին առաջ շարժվել ԻՊԿ կենտրոն ալ-Ռակկա քաղաքի ուղղությամբ, որը հնարավոր եղավ վերցնել 2017 թ. հոկտեմբերին և շարժվել էլ ավելի հարավ ու հարավ-արևելք՝ Եփրատ գետի ափով դեպի Իրաքի սահման:

2018 թ. հունվարի 20-ին թուրքական զինուժը Սիրիայի քրդաբնակ Աֆրիկ բնակավայրի ուղղությամբ սկսեց «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը, որի նպատակ հայտարարվեց ահաբեկչական կառույցների՝ քրդական ԺՊՄ և ԻՊԿ զինյալների ոչնչացումը¹⁵¹: Չնայած քրդական կողմի հայտարարություններին, որ իրենք վճռական են տրամադրված Աֆրիկում թուրքական առաջխաղացումը կասեցնելու հարցում, այնուամենայնիվ քրդերը չկարողացան դիմակայել թուրքական բանակի և վերջինիս հովանավորությամբ գործող ընդդիմադիր կառույցների գրոհներին, և ռազմական գործողությունների մեկնարկից գրեթե երկու ամիս անց Աֆրիկն ամբողջությամբ հանձնվեց Թուրքիային*:

այնպես էլ հարևան Իրաքում:

* Այսպիսով՝ կարելի է փաստել, որ Սիրիայի քրդաբնակ տարածքներից մեկը՝ Աֆրիկը, 2018 թ. սկզբին անցավ թուրքական զինուժի և դրա հովանավորչությամբ գործող ընդդիմադիր ուժերի վերահսկողության տակ: 2018 թ. նախաձեռնելով «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը՝ Թուրքիան իրեն ենթարկեց Սիրիայի ամենախիտ բնակեցված քրդաբնակ տարածքը, որի նպատակը ոչ միայն այս հատվածից ԺՊՄ-ին դուրս հանելն էր, այլև այստեղ թուրքամետ տրա-

2019 թ. հոկտեմբերի 9-ին թուրքական զինուժը սկսեց իր հերթական ռազմական գործողությունը («Խաղաղության ակունք») Սիրիայի հյուսիսում՝ Եփրատ գետից արևելք ընկած քրդաբնակ հատվածներում: Թուրքական զինուժն ու թուրքամետ խմբավորումները Թուրքիայի տարածքից հարձակվեցին Թալ Աբյադ և Ռաս ալ-Այն սիրիական քաղաքների ուղղությամբ՝ ընդլայնելով թուրքական վերահսկողության հատվածները Սիրիայում: 2020 թ. հունվարի դրությամբ Սիրիայի այս հատվածում թուրքական ուժերի և քրդական ԺՊՄ-ի միջև որոշ բախումներ դեռ արձանագրվում էին: Այնուամենայնիվ, Թուրքիային հաջողվեց ետ մղել քրդական ԺՊՄ-ին Թալ Աբյադ-Ռաս ալ-Այն գծից դեպի հարավ: Արդյունքում 2020 թ. հունվարին թուրքական զինուժի և թուրքամետ խմբավորումների վերահսկողության տակ անցավ 100 կմ երկարությամբ և մոտ 30 կմ խորությամբ հատված, որտեղից քրդական ԺՊՄ-ն հեռացվեց*:

Չնայած այդ պարտությանը՝ 2020 թ. մայիսի դրությամբ քրդերը դեռևս վերահսկում էին Սիրիայի տարածքի մոտ մեկ երրորդը՝ Եփրատից արևելք ընկած սիրիական տարածքները (բացառությամբ թուրքական վերահսկողության տակ անցած Թալ Աբյադից Ռաս ալ-Այն հատվածի):

մադրությունների ավելացումն ու իր սահմանին կանխատեսելի բնակչություն ունենալն էր: Այս քաղաքականությունը թուրքական իշխանությունները սկսեցին կյանքի կոչել «Զիթենու ճյուղ» ռազմական գործողությունների ավարտից անմիջապես հետո: 2018 թ. ընթացքում խոշոր սահմանային փոփոխություններ տեղի չունեցան, և քրդերի հետ շփման գիծը հիմնականում մնաց անփոփոխ:

* «Խաղաղության ակունք» ռազմական գործողությունների արդյունքում Թուրքիան կարողացավ Սիրիայի հյուսիսային մեկ այլ հատվածում 2019 թ. վերջին ստեղծել գոտի, որտեղ Անկարան մտադիր է բնակեցնել սիրիացի փախստականներով (ոչ քուրդ)՝ պատենշ ստեղծելով Թուրքիայի և Սիրիայի քրդաբնակ հատվածների միջև, կանխելով ՔԱԿ և ԺՊՄ ազդեցությունը:

ԺՊՄ ստեղծումը, ղեկավար շրջանակը, կառուցվածքը, թվաքանակը, սպառազինությունը

Սիրիական հակամարտության ընթացքում քրդական ռազմական կառույցներից իր ակտիվությամբ աչքի ընկավ «Ժողովրդական պաշտպանության միավորներ» (ԺՊՄ-YPG) կառույցը: ԺՊՄ-ն իր որդեգրած ռազմավարական-մարտավարական և հակամարտության ընկալման առանձնահատուկ մոտեցումներով ազդեցություն է ունեցել ոչ միայն ներքրդական իրողությունների, այլ նաև սիրիական հակամարտության ու տարածաշրջանային զարգացումների վրա: ԺՊՄ-ի հետ են կապվում քրդերի ռազմական հաջողությունները Սիրիայում, որոնք գրանցվեցին հատկապես 2015 թ. սկզբից Քոբանիի ռազմական գործողություններից հետո: ԺՊՄ ակտիվությունը պատճառ դարձավ, որ Թուրքիան գնա ռազմական լուծման և մի քանի ռազմական գործողություններ նախաձեռնի Սիրիայի հյուսիսային քրդաբնակ հատվածներում՝ հիմնական թիրախ ունենալով քրդական այդ կառույցը:

2003 թ. Իրաքի Քանդիլի լեռներում «Քուրդիստանի աշխատավորական կուսակցության» (ՔԱԿ) ղեկավար շրջանակը որոշում կայացրեց Սիրիայում հիմնել «Դեմոկրատական միություն կուսակցությունը» (ԴՄԿ): Կուսակցության անվանման մեջ «Քուրդիստան» կամ «Քրդական» եզրույթների բացակայությունը պայմանավորված էր սիրիական իշխանությունների կողմից լրացուցիչ չթիրախավորվելու հանգամանքով: 2004 թ. խնդիր դրվեց Սիրիայում ԴՄԿ հովանու տակ ավելացնելու նաև ռազմական բաղկացուցիչը: Նույն թվականի մարտին Կամիշլիում տեղի ունեցած քրդական ըմբոստությունից հետո ՔԱԿ-ը վերակազմավորեց իր ռազմական ներկայությունը Սիրիայում՝ դրանք անվանելով «Ժողովրդական պաշտպանության միավորներ» (ԺՊՄ) և նպատակ ունենալով ընդգծել, որ այս կառույցի ներսում

քրդական կամ որևիցե այլ էթնիկ պատկանելության գերակայություն չկա: Վերոհիշյալ ժամանակահատվածից սկսած՝ ԺՊՄ-ն հիմնականում մնաց ընդհատակում մինչև 2012 թվականը, և կարելի է եզրակացնել, որ Սիրիայում ԺՊՄ հիմնումը ՔԱԿ-ի կողմից միտված էր երկարաժամկետ նպատակների իրագործմանը¹⁵²:

Սիրիայի քրդերի շրջանում բավական հեղինակություն ունեցող Սալիհ Մուսլիմը, որն անդամակցում էր ՔԱԿ-ին և գտնվում էր Իրաքի Քանդիլի լեռներում տեղակայված ռազմական ճամբարներում, 2010 թ. Ֆուադ Օմարին նշանակեց ԴՄԿ առաջնորդ՝ նպատակ ունենալով Իրաքից դեկավարել ԴՄԿ գործունեությունը: Սակայն հետագայում սիրիական իշխանությունները թույլ տվեցին, որ Սալիհ Մուսլիմը 2011 թ. ապրիլին վերադառնա Սիրիա, ինչի նպատակն էր թուլացնել ձևավորվող հակաասադդական ընդդիմադիր ճամբարը քրդերի շրջանում: Բացի դրանից՝ ԴՄԿ դիրքերի ուժեղացումը հնարավորություն չէր տա ոչ քրդական ընդդիմադիր շրջանակներին ավելացնելու ազդեցությունը քրդաբնակ հատվածներում: Դամասկոսի այդ մարտավարությունը խնդիրների առաջ կանգնեցրեց Թուրքիային, որը ստիպված էր կենտրոնանալ ոչ միայն Սիրիայի քրդաբնակ հատվածներից սեփական սահմանների պաշտպանության, այլ նաև հենց Սիրիայի տարածքում ակտիվ գործող քրդական խմբավորումների դեմ պայքարի կազմակերպման վրա: Պետք է փաստել, որ ԴՄԿ և դրա ռազմական թև համարվող ԺՊՄ ակտիվությունը Սիրիայում խնդիրների առաջ կանգնեցրեց և՛ Թուրքիային, և՛ սիրիական ընդդիմության այն հատվածին, որն անմիջապես բախվում էր քրդական ուժերի հետ: Պատճառն այն էր, որ ԺՊՄ-ն ուներ ռազմական գործողությունների փորձ, քանզի մոտ 3 տասնամյակ այդ կառույցի զինյալները Թուրքիայում և Իրաքում ներգրավված էին թուրքական զինուժի դեմ կռիվներին: Բացի

դրանից՝ այդ կառույցի քուրդ անդամները հիմնականում կովում էին Սիրիայի այն հատվածներում, որոնք շատ լավ ծանոթ էին իրենց, ինչը լրացուցիչ առավելություն էր տալիս ԺՊՄ-ին մարտի դաշտում:

Սիրիական հակամարտության ընթացքում նաև ԱՄՆ-ի կողմից տրված ռազմական, ֆինանսական, լոգիստիկ-հետախուզական աջակցության շնորհիվ քրդերը կարողացան ավելացնել իրենց կողմից վերահսկվող տարածքները¹⁵³: 2013 թ. ՔԱԿ-ում տեղի ունեցած վերափոխումների արդյունքում Ջեմիլ Բայըքը նշանակվեց ՔԱԿ առաջնորդ, որը փոխարինեց Քարայիլանին: Բայըքը ԺՊՄ հրամանատար նշանակեց Սիրիայի Քամիշլիի քուրդ Նուրաթին Հալաֆ ալ-Մուհամմադին (Նուրաթին Սոֆի): Նուրաթինի տեղակալ նշանակվեց Ֆերիաթ Աբդի Սահինը (Սահին Սիլո), որը Քոբանիից էր: ԺՊՄ-ն վարում էր ղեկավար շրջանակի վերանշանակումների քաղաքականություն՝ գերծ մնալով իշխանությունը մեկ անձի ձեռքում կենտրոնացնելուց և միանձնյա ղեկավարումից: 2015 թ. մայիսին ԺՊՄ հրամանատարությունում Ալ-Մուհամմադին փոխարինեց Սաբրի Օքը, որը Թուրքիայի քուրդ էր և ներկայացնում էր Բայըքի մերձավոր շրջանակը: Այնուհետև Սաբրի Օքին փոխարինեց Սիփան Հեմոն, որը 2020 թ. մայիսի դրությամբ ԺՊՄ գլխավոր հրամանատարն էր, իսկ կառույցի խոսնակն էր Ռեդուր Խելիլը: Կանանց պաշտպանության միավորումների (ԿՊՄ, YPJ) հրամանատարն էր Նեսրին Աբդուլլահը: Սիրիայի քրդաբնակ հատվածներում ևս եղել են տեղացի ռազմական հրամանատարներ (Այն ալ-Արաբում, մինչև 2018 թ. սկիզբը Աֆրինում, մինչև 2019 թ. հոկտեմբերի կեսերը՝ Թալ Աբյադում, Հալեպում):

ԺՊՄ բարձրաստիճան ղեկավարների զգալի հատվածն ու զինվորական հակահետախուզության, «Ասայիշների» և անվտանգության այլ մարմինների ղեկավար շրջանակի մոտ կեսը

ռազմական պատրաստություն են անցել Քանդիլի լեռներում: Ղեկավար ստորին օդակը հիմնականում բաղկացած էր ՔԱԿ-ի կողմից վարժեցված կադրերից: ԺՊՄ շարքային անդամների և ԴՄԿ-ի կողմից ղեկավարվող ինքնակառավարման մարմիններում ներգրավված անձանց մեծամասնությունը տեղացի քրդեր էին: Կարելի է փաստել, որ Քանդիլը ներկայացնող քրդերը զբաղեցնում էին առանցքային ղեկավար պաշտոններ՝ պահպանելով Սիրիայի քրդաբնակ տարածքների վերահսկողությունը՝ ֆինանսական հոսքերը, ղեկավար օդակների ու հրամանատարական կազմի նշանակումները, մատակարարումների բաշխումը և այլն:

ԺՊՄ կառուցվածքի մեջ էին մտնում.

1. բարձրագույն ղեկավարությունն ու ենթակա ստորաբաժանումները, որոնք էլ իրենց հերթին բաժանվում էին 3 հիմնական կազմակերպչական կենտրոնների՝ ալ-Ջազիրա, Քոբանի և Աֆրին,

2. հիմնադիր խորհուրդը, որը հավաքվում էր տարին մեկ անգամ (հավաքը հրատապ դեպքերում կարող էր լինել նաև արտահերթ): Այս մարմինը պատասխանատու էր կառույցի գործունեության համար՝ կազմելով կառույցի գործողությունների ծրագիր մեկ տարվա կտրվածքով,

3. գլխավոր ռազմական խորհուրդը, որը բաղկացած էր 55 անդամներից, որոնք հավաքվում էին 6 ամիսը մեկ՝ քննարկելու ընթացիկ խնդիրներ,

4. տեղական ռազմական խորհուրդները, որոնց ներկայացուցիչների թվաքանակը տարբեր էր՝ պայմանավորված տարածքի բնակչության թվաքանակով: Այդ ռազմական խորհուրդները հավաքվում էին 3 ամիսը մեկ:

ԺՊՄ-ի մեջ էին մտնում 3 հիմնական ռազմական ստորաբաժանումները՝

- հատուկ նշանակության ուժեր,
- դիմակայության խմբավորումներ,
- տեղական ուժեր:

Երեք ստորաբաժանումներն էլ գործում էին կենտրոնական հրամանատարության հրահանգներով, ցուցումներով ու հրամաններով: Կառույցի կազմում գործում էին կենտրոնական հրամանատարությանը ենթարկվող այլ խմբավորումներ ևս, ինչպես, օրինակ՝

- սահմանապահ միավորը, որը իրականացնում էր սահմանների պաշտպանությունը,
- լոգիստիկայի միավորը, որը հոգ էր տանում լոգիստիկ ենթակառուցվածքների ու սարքավորումների մասին, կազմում էր սարքավորումների և զինամթերքի հաշվարկ ու պլանավորում, ինչպես նաև ապահովում էր ռազմական հրամանատարների ու ստորաբաժանումների կարիքները,
- գրառումների և արխիվի միավորը, որը հավաքագրում և պահպանում էր յուրաքանչյուր անդամի ինքնության, կազմակերպչական բոլոր կառույցների, դրանց գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը,
- հանդերձանքի և սպառազինության կենտրոնները, որոնք ստեղծվել և գործում էին ինչպես գլխավոր հրամանատարությանը, այնպես էլ ենթահրամանատարական շտաբներին կից: Նրանք պատասխանատու էին բոլոր սարքավորումների ու զինամթերքի պահեստավորման, գրանցման և պաշտպանության համար,
- ֆինանսական բաժինը, որը պատասխանատու էր ֆինանսական քաղաքականության և աուդիտի համար*:

* ԺՊՄ կառուցվածքային առանձնահատկությունների և ստորաբաժանումների մասին տե՛ս №13 հավելվածում:

Ըստ որոշ գնահատականների՝ ԺՊՄ զինյալների թիվը Սի-րիայում կազմում էր մոտ 30000, որից մոտ 10000-ը ԿՊՄ կին զինյալներն էին: Ուշադրության էր արժանի օտարերկրացիների առկայությունը ԺՊՄ կազմում¹⁵⁴, որը կարելի էր բացատրել տարվող քարոզչական քաղաքականությամբ. ԺՊՄ քաղաքական կառույցը՝ ԴՄԿ-ն, քայլեր էր ձեռնարկել սեփական գրասենյակները աշխարհի տարբեր երկրներում բացելու համար (եվրոպական երկրներ, ՌԴ և այլն)՝ ակտիվորեն օգտագործելով ԶԼՄ-ներն ու սոցիալական ցանցերն իրենց գաղափարները քարոզելու նպատակով: Հիշյալ քարոզչությունն իրականացվել էր հետևյալ իրողությունների թիրախային շեշտադրմամբ, որոնք բավական զգայուն էին միջազգային հանրության ընկալումներում.

- անզիջում պայքար «Իսլամական պետության» և ծայրահեղական այլ կառույցների դեմ,
- ազատական գաղափարների խթանում՝ կանանց իրավունքներ, ժողովրդավարական արժեքներ, տնտեսական և սոցիալական արդարություն, էկոլոգիական ու շրջակա միջավայրի պահպանում,
- Սիրիայում էթնիկ-դավանական փոքրամասնությունների պաշտպանություն և այլն:

Վերոհիշյալ գործոններն էին եղել նաև այն պատճառը, որ աշխարհի տարբեր երկրներից եկած ոչ քուրդ զինյալները զգալի թիվ էին կազմում ԺՊՄ շարքերում: ԺՊՄ շարքերում օտարերկրացի զինյալների թվաքանակի վերաբերյալ հստակ պատկեր չունենք: Ըստ որոշ գնահատականների՝ օտարերկրացիները ներկայացնում էին հիմնականում 12 երկիր¹⁵⁵:

ԺՊՄ սպառազինության մեջ էին մտնում հակատանկային հրթիռներ, ձեռքի նոնակներ, M-16 և AK-47 ինքնաձիգներ, գնդացիներ, հրացաններ, հակաօդային միջոցներ, դիպուկահար հրացանները, ռադիո և կապի սարքավորումներ, մինի անօդաչու սարքեր, ինքնաշեն պայթուցիկներ և այլ սպառազինություն:

Ըստ որոշ տեղեկությունների՝ Սիրիայում ԺՊՄ-ի մոտ գտնվող սպառազինության որոշ տեսակներ հայտնվել էին նաև Թուրքիայում գործող ՔԱԿ զինյալների ձեռքին: Թուրք-սիրիական սահմանային հատվածում վերոհիշյալ սպառազինության տարածման արեալներն էին՝ Սրնակ-ալ-Ջազիրա, Ամուդա-Կամիշլի, Մարդին-Նուսայբին, Այն ալ-Արաբ-Սուրուչ և Աֆրին-Ամանոս հատվածները: ՔԱԿ-ն ու ԺՊՄ-ն շատ ընդհանրություններ ունեին ոչ միայն կառուցվածքի, այլև իրենց մարտավարության, ռազմական գործողությունների պլանավորման առումով¹⁵⁶:

Սիրիայի որոշ հատվածներում ԺՊՄ-ի մոտ նկատվել էին նաև ծանր զինտեխնիկա ու տանկեր, որոնք հափշտակվել էին սիրիական զինուժից և ընդդիմադիր ուժերից: Ըստ որոշ տեղեկությունների՝ ԱՄՆ-ն, 2015 թվականից սկսած, մոտ 120 տոննա սպառազինություն էր մատակարարել ԺՊՄ-ին, այդ թվում՝ ամերիկյան «TOW79» հակատանկային հրթիռներ¹⁵⁷: ԱՄՆ-ն կառուցել էր երկու ռազմակայան քրդերի կողմից վերահսկվող տարածքներում. առաջինը՝ 2016 թ. հուլիսին Այն ալ-Արաբում, իսկ մյուսը՝ ալ-Հասաքայում, որոնք էլ ավելի վստահություն էին հաղորդել ԺՊՄ գործողություններին սիրիական հակամարտությունում:

ԺՊՄ գաղափարախոսությունը խարսխվում էր ձախ սոցիալիստական գաղափարների վրա: Այդ գաղափարների իրականացման հիմքում բոլոր ազգությունների անկախության և ինքնավարության համար պայքարն էր Սիրիայի հյուսիսում՝ դիմակայելու արտաքին ու ներքին անցանկալի միջամտություններին: Կառույցը առաջնորդվում էր բոլոր ազգությունների ազատության սկզբունքով՝ բացառելով կրոնական, ռասայական, լեզվական և այլ խտրականությունները և, ըստ իրենց, որևիցե կապ չունենալով ուժերի հետ:

Տեղեկություններ են եղել նաև, որ քրդերի կողմից վերահսկվող տարածքներում ԺՊՄ-ն իրականացրել էր էթնիկ զտումներ՝ փորձելով այս հատվածներում ավելացնել քրդական ներկայությունն ու ազդեցությունը: Մասնավորապես ԺՊՄ-ն իրականացրել էր ճնշումներ ու տեղահանումներ ալ-Հասաքայում, ալ-Ռակկայում և Թալ Աբյադում արաբների ու թուրքմանների նկատմամբ: Տեղահանումներն ուղեկցվել էին ցանքատարածքների ու տների հրկիզմամբ, ունեցվածքի բռնակցմամբ ու այլ իրողություններով¹⁵⁸:

ԺՊՄ-ն մեծ ազդեցություն է ունեցել «Սիրիայի դեմոկրատական ուժերի» (ՍԴՈւ) շրջանում, որը ստեղծվել էր 2015 թ. հոկտեմբերի 11-ին ալ-Հասաքայում ԱՄՆ աջակցությամբ: ՍԴՈւ-ի մեջ, ԺՊՄ/ԿՊՄ-ից բացի, մտնում էին «Ասորիների ռազմական խորհուրդ», «Ջայշ ալ-Թուար», «Լիուա Թուար ալ-Ռակկա», «Լիուա ալ-Թահրիր», «Ալ-Սանադիդ», «Ջաբհաթ ալ-Աքրադ», «99-րդ բրիգադ», «Լիուա ալ-Սալաջիքա», «Քաթաիբ Շամս ալ-Շամալ», «Լիաու Շուհադա ալ-Աթարիբ», «Լիուա Սուլթան Սելիմ» և այլ խմբավորումներ: 2015 թ. ՍԴՈւ-ն հանդես է եկել որպես էթնիկ-դավանական բազմազանությամբ ստեղծված կառույց՝ դառնալով ԱՄՆ հիմնական դաշնակիցը Սիրիայում¹⁵⁹:

ԺՊՄ-ն սիրիական հակամարտության ընթացքում ապացուցեց, որ ամենամարտունակ ու մարտադաշտում գործող ամենաարդյունավետ ուժերից մեկն է: Դա առաջին հերթին պայմանավորված էր այն հանգամանքով, որ կառույցի կազմում մեծ էր ռազմական փորձ ունեցող ու ՔԱԿ ռազմական ճամբարներն անցած քրդերի թվաքանակը: Բացի դրանից՝ սիրիական հակամարտության ընթացքում ԺՊՄ-ն ստացավ ամերիկյան ռազմական ու լոգիստիկ-հետախուզական աջակցություն, ինչը էլ ավելի բարձրացրեց այս կառույցի մարտունակությունը ռազմի դաշտում:

ԺՊՄ-ն աչքի էր ընկնում ասիմետրիկ պատերազմ վարելու և պարտիզանական մարտավարությամբ: Ռազմական գործողությունների ժամանակ քրդական ԺՊՄ զինյալները հաճախակի էին իրականացնում հանկարծակի հարձակումներ՝ տարբերվելով մյուս խմբավորումներից նրանով, որ մարտեր էին վարում հիմնականում քրդաբնակ հատվածներում, ծանոթ էին տեղանքին, հմտորեն ադապտացվում էին ռազմաճակատի պայմաններին՝ արագորեն մոբիլիզացնելով իրենց ուժերը:

Սիրիական պատերազմի ընթացքում նկատվել են ՔԱԿ ու ԺՊՄ ռազմավարական-մարտավարական ընդհանրություններ, հատկապես պարտիզանական կռիվների ու հակառակորդի դեմ իրականացվող գործողությունների ու հարձակումների ասիմետրիկ մարտավարության ընդհանուր գծեր: Սակայն պետք է նաև փաստել, որ հիշյալ հաղթանակը քրդերին տրվել է ԱՄՆ օդային աջակցության, ամերիկյան սպառազինության ու ցամաքում քրդերին օգնող ամերիկացի զինծառայողների, ռազմական փորձագետների ու հրահանգիչների շնորհիվ: Սիրիական հակամարտությունը ցույց տվեց, որ Սիրիայում գտնվող կանոնավոր բանակների դեմ քրդական ԺՊՄ գործողությունները տարբերվում էին այլ խմբավորումների դեմ վարվող պայքարից: Մասնավորապես ԺՊՄ-ն իրեն լավագույն կողմերով չցուցաբերեց թուրքական զինուժի դեմ կռիվներում, հատկապես «Ձիթենու ճյուղ» և «Խաղաղության ակունք» ռազմական գործողություններում, ինչը չի կարելի ասել ԻՊ-ի դեմ տեղի ունեցած կռիվների մասին: Հիշյալը թույլ է տալիս ենթադրել, որ չնայած մեծ մասամբ քրդաբնակ շրջաններում ծավալվող գործողություններին, տեղանքին ծանոթ լինելուն, ռազմական փորձի ու սպառազինության առկայությանը՝ քրդական ԺՊՄ-ն ի գործու չի եղել արդյունավետ կռիվ կանոնավոր բանակների դեմ: Այնուամենայնիվ, ԺՊՄ-ն կարողացավ սիրիական հակամարտության ընթացքում

իր պատրաստվածության, ղեկավար շրջանակի փորձառության, կառուցվածքային արդյունավետ կառավարման շնորհիվ վերածվել Սիրիայում կռիվող քրդական ամենաազդեցիկ ռազմական կառույցի, որի օգնությամբ քրդերը 2020 թ. սկզբին կարողանում էին վերահսկել Սիրիայի զգալի հատվածը:

Ամփոփելով էթնիկ-դավանական փոքրամասնություններից հայերի և քրդերի ներգրավվածությունը սիրիական հակամարտությանը՝ կարող ենք փաստել, որ.

- հայերն ու քրդերը Սիրիայում հիմնականում բնակվել են այն տարածքներում (Սիրիայի հյուսիսային շրջաններում), որոնք հակամարտության սկզբից դարձան ռազմական ակտիվ բախումների թատերաբեմ: Հայերը, Սիրիայում հիմնականում լինելով քաղաքացիներ, չեն ունեցել տարածքներ, հետևաբար նաև տարածքային ինքնակառավարման մարմիններ և այլն, մինչդեռ սիրիական հակամարտության սկզբից քրդերը անմիջապես իրենց բնակության վայրերում հայտարարեցին ինքնավարություններ՝ ձեռնամուխ լինելով այդ տարածքների ինքնապաշտպանության կազմակերպմանը: Հայերի և քրդերի տեղականը Սիրիայի ապագայի հարցում տարբերվում էր նրանով, որ հայերը ցանկանում էին տեսնել միասնական Սիրիա, մինչդեռ քրդերի զգալի հատվածի նպատակը իրենց զբաղեցրած տարածքներում սիրիական կենտրոնական իշխանություններից անջատ ինքնավարության հասնելն էր: Հարկ է նշել նաև թվաքանակի տարբերությունը Սիրիայում բնակվող հայերի և քրդերի միջև:
- Սիրիայում հայերին և քրդերին սպառնացող հիմնական վտանգը իսլամական արմատական խմբավորումներն են եղել, մասնավորապես ծայրահեղ իսլամական արմատական կառույցները, որոնց վերաբերմունքը Սիրիայի էթնիկ

և կրոնադավանական փոքրամասնությունների հանդեպ անհանդուրժողական էր: Սիրիական հակամարտության ընթացքում էթնիկ-դավանական փոքրամասնությունները վտանգված են եղել նաև տարածաշրջանային որոշ ուժային կենտրոնների, մասնավորապես Թուրքիայի վարած քաղաքականության հետևանքով Սիրիայի տարբեր հատվածներում: Այդ քաղաքականության պտուղները զգացել են նաև Սիրիայի հայերն ու քրդերը:

Սիրիական հակամարտության ընթացքում քրդերն արձանագրեցին որոշակի հաջողություններ՝ ստանալով կարգավիճակ, ստեղծելով ինքնավար մարմիններ, ընդլայնելով իրենց վերահսկողության տարածքները, համագործակցելով արտասիրիական ուժային որոշ կենտրոնների հետ և այլն: Սիրիայի քրդերի հիշյալ հաջողություններն անտեսել հնարավոր չէ: Չնայած այդ հաջողություններին՝ քրդերի շրջանում նկատվեցին հակասություններ և խնդիրներ, որոնք բացասաբար անդրադարձան քրդերի միասնականության վրա: Բացի դրանից՝ քրդական ռազմական ստորաբաժանումները պարտություններ կրեցին թուրքական բանակից և զիջեցին զգալի տարածքներ, այդ թվում՝ քրդաբնակ:

Ասվածի համատեքստում շարունակվող սիրիական հակամարտությունը լի է անկանխատեսելի զարգացումներով և հետևանքներով, որոնց Սիրիայի քրդերը պետք է պատրաստ լինեն:

ԳԼՈՒԽ V
ՄԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

**5.1. Ժնևի և Աստանայի՝ սիրիական հակամարտության
կարգավորման գործընթացները**

Սիրիական հակամարտության խնդիրն ունեցել է ոչ միայն տարածաշրջանային չափումներ, այլև ստացել է գլոբալ դրսևորումներ, որտեղ իրենց շահերն ու հետաքրքրություններն են հետապնդել թե՛ տարածաշրջանային, թե՛ արտատարածաշրջանային ուժերը: Դրանց դրսևորման կարևոր օղակներից էին սիրիական հակամարտության հանգուցալուծմանն ուղղված տարբեր ձևաչափերով հանդիպումները, որոնցից էին Ժնևի և Աստանայի գործընթացները:

Ժնևի գործընթաց

2011 թվականից սկսած՝ սիրիական ճգնաժամի հանգուցալուծման բազմաթիվ ծրագրեր և համաձայնություններ են մշակվել: Սիրիայի հակամարտության հանգուցալուծմանն ուղղված հիշյալ նախաձեռնություններից էր Ժնևի գործընթացը, որն առաջինն էր իր ձևաչափով ու ընդգրկվածությամբ: Նրա նպատակն էր հասնել սիրիական խնդրի կարգավորմանը՝ հակամարտող կողմերին նստեցնելով բանակցային սեղանի շուրջ և որոշակի քայլերի հերթականությամբ (կրակի դադարեցում, անցումային կառավարություն, ընտրություններ և այլն) լուծումներ գտնել սիրիական խնդրի շուրջ:

2012 թ. հունիսի 30-ին ՄԱԿ ԱԽ նախաձեռնությամբ տրվեց սիրիական խաղաղության գործընթացի Ժնևյան ձևաչափի մեկնարկը, որին ներգրավված էին ՄԱԿ ԱԽ մշտական անդամները,

Եվրամիության պատվիրակությունը, Թուրքիան, Իրաքը, Քուվեյթը և Կատարը: Այս ձևաչափը չընդունվեց մերձավորարևելյան տարածաշրջանային մի շարք պետությունների և կազմակերպությունների կողմից, մասնավորապես ձևաչափն ընդունելի չէր Իրանի Իսլամական Հանրապետության, Սաուդյան Արաբիայի Թագավորության, Լիբանանի, Հորդանանի Հաշիմյան Թագավորության և «Իսլամական համագործակցության կազմակերպության» համար: Այնուամենայնիվ, Ժնևյան այս գործընթացը, որն անվանվեց «Ժնև 1», ավարտվեց հակամարտության հանգուցալուծմանն ուղղված տարրերի սահմանումը ներառող փաստաթղթի ընդունմամբ¹⁶⁰: Սակայն փաստաթուղթը ամբողջապես չսահմանեց հակամարտության մեջ ներքաշված այն կողմերին, որոնք պետք է ստեղծեին անցումային կառավարություն և զբաղվեին սիրիական ճգնաժամի կարգավորմամբ:

2013 թ. մայիսին ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի և ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի միջև համաձայնություն ձեռք բերվեց նախաձեռնել Ժնևյան բանակցությունների հաջորդ փուլը՝ «Ժնև 2»-ը, որը սկսվեց 2014 թ. հունվարի 22-ին: Այս փուլում բանակցություններին հրավիրվեցին նաև սիրիական իշխանությունների և ընդդիմության պատվիրակությունները: «Ժնև 2»-ը նույնպես հաջողություն չունեցավ ոչ միայն այն պատճառով, որ կային լուրջ հակասություններ բանակցություններին ներգրավված կողմերի միջև, այլ նաև այն պատճառով, որ որպես բանակցային կողմ ներգրավված չէին Սիրիայի քրդերին ներկայացնող ազդեցիկ ուժերը: Վերջիններիս շրջանում ևս տեսանելի էին հակասություններ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե Ժնևի բանակցային գործընթացում Սիրիայի քրդերին որ ուժը պետք է ներկայացնե:

«Ժնև 3»-ի նախապատրաստական փուլում՝ 2015 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Ավստրիայի մայրաքաղաքում ևս անց-

կացվեցին Սիրիայի հարցով խաղաղության բանակցություններ, որոնք կոչված էին յուրատեսակ կամուրջ դառնալ «Ժնև 2»-ի և «Ժնև 3»-ի միջև: Վիեննայի խաղաղության այդ բանակցությունների մասնակից երկրներն էին ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Սաուդյան Արաբիան, Իրանը, Թուրքիան, Չինաստանը, Եգիպտոսը, Ֆրանսիան, Գերմանիան, Իրաքը, Իտալիան, Հորդանանը, Լիբանանը, Օմանը, Կատարը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Միացյալ Թագավորությունը, Արաբական պետությունների լիգան, Եվրամիությունը: Այնուամենայնիվ, հիշյալ երկրների մոտեցումներում կային լուրջ հակասություններ թե՛ Բաշար ալ-Ասադի ճակատագրի, թե՛ Սիրիայի ճգնաժամի հանգուցալուծման, թե՛ առանձին ընդդիմադիր ուժերի կարգավիճակի ու դերակատարության հարցում¹⁶¹: Բանակցությունների ավարտին ընդունվեց Սիրիայի միջազգային աջակցության խմբի հայտարարությունը, որն էական նշանակություն չունեցավ հակամարտության կարգավորման վրա:

Ժնևյան բանակցությունների հաջորդ՝ «Ժնև 3»-ի մեկնարկը տրվեց 2016 թ. փետրվարին, որն անցկացվեց մի քանի փուլերով: Բանակցությունների սկզբնական նպատակ հայտարարվեց կրակի դադարեցումը, իսկ հաջորդ նպատակը՝ ընտրությունների միջոցով ձևավորվելիք անցումային կառավարության ստեղծումն ու «Իսլամական պետության» դեմ պայքարը: Այս փուլում բանակցություններում ներգրավված էին նաև սիրիական իշխանությունների և ընդդիմությունը ներկայացնող «Բանակցությունների բարձրագույն կոմիտեի» պատվիրակությունները (կոմիտեն ներառում էր 34 ընդդիմադիր խմբավորումներ):

Վիեննայում և Ժնևում տեղի ունեցած բանակցություններն աչքի չընկան արդյունավետությամբ, սակայն մի քանի նոր իրողություններ արձանագրվեցին, որոնք էին.

- բանակցություններին հրավիրվեցին սիրիական կառավարության և ընդդիմադիր ճամբարը ներկայացնող պատվիրակությունները, որոնք նստեցին բանակցային սեղանի շուրջ՝ քննարկելու սիրիական հակամարտության հանգուցալուծման հարցեր,
- Իրանը ևս ներգրավվեց բանակցային գործընթացին, որով կարևորվեց նաև Իսլամական Հանրապետության ազդեցությունն ու դերակատարումը սիրիական հակամարտությունում,
- ուկրաինական ճգնաժամից որոշ ժամանակ անց միջազգային հարթակում նկատվեցին ԱՄՆ-ՌԴ համատեղ աշխատանք ու ակտիվ փոխառնչություններ, ինչը դրականորեն ազդեց աշխարհաքաղաքական գլոբալ իրողությունների վրա:

Այդ փուլում սիրիական հակամարտության հանգուցալուծմանն ուղղված միջազգային տարբեր ձևաչափերով հանդիպումների հաճախակիությունը բացատրվում էր նրանով, որ 2014-2015 թթ. Սիրիայում նոր իրողություններ էին ի հայտ եկել՝ կապված իսլամական ծայրահեղ արմատականության ակտիվության, ռուսական ռազմական միջամտության, արդեն այդ ժամանակ նկատվող Սիրիայի տարածքների հատվածայնության և այլնի հետ: Միջազգային հարթակներում, այդ թվում՝ ժնևյան գործընթացում, Սիրիայի ինդրի հանգուցալուծման արդյունավետության բացակայությունն ազդում էր երկրի ներսում տիրող իրավիճակի վրա:

Սիրիայում լայն թափ ստացած պատերազմը, քաոսային վիճակն ու վտանգավոր նոր իրողությունները, որոնք իրենց ազդեցությունն էին ունենում թե՛ երկրի ներսում, թե՛ դրանից դուրս, ստիպեցին սիրիական հակամարտության կարգավորման մեջ ներգրավված հիմնական ուժային բնեռներին՝ ԱՄՆ-ին և ՌԴ-ին,

Միրիայում տիրող իրավիճակի կարգավորմանը մոտենալ հատվածային եղանակով, այլ կերպ ասած՝ Միրիայի առանձին հատվածներում հասնել որոշ լուծումների, որը հետագայում կրեբեր առավել ընդգրկուն կարգավորումների: Այդ առումով 2015 թ. վերջից Միրիայի տարածքը բաժանվեց ազդեցության գոտիների՝ Եփրատ գետից արևելք՝ ԱՄՆ, իսկ արևմուտք՝ ՌԴ ազդեցության գոտու: Միրիայի նշված տարածքներում հիշյալ ուժային կենտրոնները, բացի առարկայական ներկայությունից և ռազմական օժանդակությունից, սկսեցին այդ հատվածներում գտնվող իրենց դաշնակիցներին տրամադրել նաև ֆինանսական, լոգիստիկ, քաղաքական և գաղափարական օգնություն:

Միրիայի տարածքի հատվածայնությունն ու ազդեցության գոտիների բաժանման իրողությունը հնարավորություն տվեց Վաշինգտոնին և Մոսկվային առավել արդյունավետ վերահսկելու Միրիայում տեղի ունեցող գործընթացները: 2016 թ. սկզբին երկու երկրների կողմից ստեղծվեց հրադադարի հարցերով աշխատանքային խումբ: 2016 թ. ապրիլին Միրիայի որոշ տարածքներում հրադադարի պահպանման պայմաններում անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ, որոնք սիրիական ընդդիմությունն անմիջապես բնորոշեց որպես ապօրինի ու իրավագուրկ¹⁶²: Նույն ամսում կայացավ «Ժնև 3»-ի երրորդ փուլը, որտեղ ևս հաջողություններ չարձանագրվեցին:

Ժնևյան գործընթացը ձախողվեց, քանզի այդ բանակցային գործընթացում ներգրավված կողմերի միջև կային լուրջ հակասություններ՝ կապված հակամարտության հանգուցալուծման տարբեր ուղիների ու մոտեցումների հետ: Բացի դրանից՝ բանակցային գործընթացում քրդերի բացակայությունը ևս բացասաբար ազդեց Ժնևի գործընթացի վրա, իսկ բուն բանակցություններին ներգրավված կողմերը չկարողացան գալ ընդհանուր հայտարարի զինադադարի և իսլամական ահաբեկչական խմբավորումներ-

րի դեմ պայքարը կազմակերպելու հարցում: Ժնևյան ձևաչափը կենտրոնացած էր հիմնական երեք խնդիրների կարգավորման վրա՝ ահաբեկչության դեմ պայքար, փախստականների իրողություն և անցումային կառավարություն: Բանակցություններում որոշակի արդյունքներ գրանցելով առաջին երկու խնդիրների դեպքում՝ անցումային կառավարության ու հետագա սիրիական իշխանական համակարգի հետ կապված հարցերում առաջընթաց չնկատվեց, որը ևս բացասաբար ազդեց հակամարտության կարգավորման ժնևյան գործընթացի արդյունավետության վրա¹⁶³: Ժնևյան գործընթացի անարդյունավետությունը, դրանում ներգրավված ներսիրիական և արտասիրիական կողմերի միջև հակասությունները ստիպեցին հակամարտության մեջ ներքաշված ուժային կենտրոններին այլ լուծումներ գտնել: Սիրիական հակամարտության կարգավորման ժնևյան ձևաչափը չէր բավարարում ՌԴ-ին, Թուրքիային և Իրանին, ինչն էլ ստիպեց այդ ուժային կենտրոններին սեփական նախաձեռնությամբ, կարգավորման նոր մոտեցումներով և գործընթացով հանդես գալ սիրիական խնդրում, որը հնարավորություն կտար առարկայական և արդյունավետ դարձնելու իրենց ծրագրերի իրականացումը Սիրիայում:

Աստանայի գործընթաց

Սիրիական հակամարտության հանգուցալուծմանն ուղղված Ժնևյան գործընթացն աչքի չընկավ արդյունավետությամբ: Միջազգային այդ հարթակում սիրիական խնդրի կարգավորման բացակայությունն ավելի էր սրում իրավիճակը Սիրիայում: Զուգահեռաբար այն, ինչ այդ տարիներին տեղի էր ունենում Սիրիայում, մտահոգիչ էր ոչ միայն այն առումով, որ ի հայտ էին գալիս նոր իրողություններ, որոնք բացասաբար էին ազդում ինչպես երկրի ներսում տիրող ընդհանուր իրավիճակի (օրինակ՝ լայնա-

մասշտաբ ռազմական գործողություններ, իսլամական ծայրահեղականության ակտիվացում, սիրիացիների զանգվածային տեղաշարժեր և այլն), այնպես էլ իրենց ազդեցությունն էին ունենում մերձավորարևելյան տարածաշրջանային և դրանից դուրս տեղի ունեցող գործընթացների վրա (օրինակ՝ փախստականների զանգվածային արտահոսք, իսլամականների ակտիվություն Մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս, ահաբեկչություններ և այլն): Արդյունավետությամբ աչքի չընկած ժնկյան գործընթացը նոր ձևաչափերով փոխարինելու ծրագրեր էին մշակվում, որոնք հակամարտության վրա ազդելու նոր լծակներ կտային արտասիրիական շահագրգիռ կողմերին:

Աստանայի գործընթացը նախաձեռնվեց՝ ի հակակշիռ սիրիական հակամարտության կարգավորմանը միտված ժնկյան ձևաչափով հանդիպումներին: Աստանայի գործընթացն ի հայտ եկավ այն ժամանակ, երբ 2016 թ. դեկտեմբերին Ռուսաստանը, Իրանն ու Թուրքիան եկան համաձայնության՝ սիրիական հակամարտության կարգավորմանն ուղղված հանդիպում անցկացնելու Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում, և հանդես եկան որպես սիրիական հակամարտության հանգուցալուծման նոր ձևաչափի համահեղինակներ՝ Աստանայի գործընթացում ԱՄՆ-ին տրամադրելով դիտորդի կարգավիճակ*։ Աստանան դիտարկելով որպես ժնկի գործընթացը փոխլրացնող նախաձեռնություն՝ Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը, ինչպես նաև ՄԱԿ-ը, հույս հայտնեցին, որ Աստանայի գործընթացը շարունակելու է ծառայել սիրիական հակամարտության հանգուցալուծմանը¹⁶⁴: Ի

* Սիրիայում ստեղծված իրավիճակն ու հակամարտությունում Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի ակտիվ ու առարկայական ներգրավվածությունն էր պատճառը (ինչը հիշյալ երեք երկրների խաղաղ կարգավորմանը միտված նախաձեռնությունների առումով խնդիրներ կարող էր առաջացնել հակամարտության մեջ ներգրավված ներսիրիական և արտասիրիական կողմերի ընկալումներում), որ սիրիական խնդրի հանգուցալուծման գործընթացի համար ընտրվեց չորրորդ երկրի՝ Ղազախստանի մայրաքաղաքը:

տարբերություն ժնկյան ձևաչափի, որտեղ ներգրավված կողմերը շատ էին, նրանց միջև կային լուրջ հակասություններ, և գործընթացը հիմնականում ձախողվում էր, Աստանայում ներգրավված կողմերն ունեին հիմնականում ընդհանրական մոտեցումներ, որոնք էլ ավելի ձկունություն էին հաղորդում գործընթացին:

Աստանայի մեկնարկը տրվեց 2017 թ. հունվարին, որից հետո՝ փետրվարին և մարտին, անցկացվեցին գործընթացի հաջորդ փուլերը: 2017 թ. հունվարի 23-ին Աստանայում տեղի ունեցած սիրիական հակամարտության կարգավորմանը միտված բանակցություններին հրավիրված էին սիրիական իշխանությունների և ընդդիմության պատվիրակությունները: Այս փուլում դրական տեղաշարժ չգրանցվեց. բանակցող կողմերի շփումները տեղի էին ունենում միջնորդավորված ձևով, դարձյալ չհրավիրվեցին քրդական ազդեցիկ կառույցները (Սիրիայի առանձին հատվածներում քրդերի ինքնավարության ստեղծումն ու ակտիվությունը ևս չէին կարող գոհացնել ո՛չ սիրիական կառավարության, ո՛չ ընդդիմադիր ճամբարի պատվիրակություններին), մասնավորապես՝ ԴՄԿ-ն (փոխարենը հրավիրվեց ՔԱԽ պատվիրակությունը) և այլն¹⁶⁵:

Որոշակի դրական միտումներ նկատվեցին Աստանայի գործընթացի հաջորդ փուլում, որը տեղի ունեցավ 2017 թ. փետրվարի 15-16-ին սիրիական իշխանությունների և ընդդիմության պատվիրակությունների անմիջական մասնակցությամբ: Ռուսաստանի, Իրանի ու Թուրքիայի կողմից հովանավորվող այդ բանակցությունների վերջնարդյունքը եղավ սիրիական հակամարտության կարգավորմանն ուղղված ճանապարհային քարտեզի ընդունումը, որը կարող էր բերել իրավիճակի կայունության:

Աստանայի գործընթացում ներգրավված երկրների ուշադրության կենտրոնում էր նաև Սիրիայի այն հատվածների հարցը, որը լուրջ խոչընդոտ էր հակամարտության կարգավորման

խնդրում հաջողությունների հասնելու համար: Դրանցից էր Սիրիայի Իդլիբ նահանգը, որն իր ռազմավարական և աշխարհագրական նշանակությամբ չափազանց կարևոր մի տարածք էր Սիրիայի, Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի համար: Իդլիբը գտնվում էր իսլամական ծայրահեղական կառույցների վերահսկողության տակ, այսինքն՝ դուրս էր հակամարտության կարգավորման Աստանայի գործընթացի ազդեցությունից: 2017 թ. սեպտեմբերին Մոսկվայի, Անկարայի և Թեհրանի միջև ձեռք բերված համաձայնության արդյունքում Իդլիբ նահանգում՝ Թուրքիայի հետ սահմանամերձ հատվածում, պետք է ստեղծվեր թուրքական ազդեցության տակ գտնվող «ապառազականացված գոտի»: Թուրքիային չհաջողվեց վերահսկողություն ունենալ ամբողջ Իդլիբ նահանգի վրա, փոխարենը Անկարան կարողացավ այս հատվածում տեղակայել ռազմական դիտակետեր*:

Աստանայում քննարկվող հարցերի շրջանակն ընդգրկում էր Սիրիայի առանձին հատվածներում կրակի դադարեցման, «ապառազականացված գոտիների», հումանիտար օգնության և այլ հարցեր, որոնք հնարավոր եղավ իրականացնել նաև այն պատճառով, որ Սիրիայի առանձին հատվածներ գտնվում էին հիշյալ երկրների՝ ՌԴ, Թուրքիայի և Իրանի ազդեցության տակ (քաղաքական գործընթացների փուլային տարբերակ Սիրիայի առանձին հատվածներում): Ի տարբերություն Աստանայի՝ Ժնևյան բանակցություններն արդյունավետ չէին նաև վերոհիշյալ հնարավորությունների բացակայության պատճառով: Ժնևում քննարկման հիմնական առարկա հանդիսացող օրակարգային այնպիսի հար-

* Իդլիբի հյուսիսում թուրքական դիտակետերի տեղակայումը նպատակ էր հետապնդում ոչ միայն վերահսկելու քրդական կառույցների և խմբավորումների տեղաշարժերը, այլ նաև նախապատրաստվելու թուրքական բանակի ռազմական ներխուժման: 2018 թ. հունվարին Աֆրիկի ուղղությամբ թուրքական բանակը նախաձեռնեց «Չիթենու ճյուղ» ռազմական գործողությունը՝ կանխելու համար Սիրիայի հյուսիսում «քրդական միջանցքի» ստեղծումը:

ցեր, ինչպիսիք էին՝ Բաշար ալ-Ասադի հեռացումը, անցումային կառավարության ստեղծումը, սահմանադրական բարեփոխումները, խորհրդարանական արտահերթ ու ազատ ընտրությունները և այլն (քաղաքական անցումային գործընթացների տարբերակ, որը համակում էր ողջ Սիրիան), լուծումներ չէին գտնում Ժնևում, հետևաբար չէին ազդում բանակցությունների հաջող ընթացքի վրա:

Պետք է փաստել նաև, որ Աստանայի գործընթացում նախաձեռնող կողմերի միջև առկա էին նաև խնդիրներ և տարբերվող մոտեցումներ հակամարտության երկարաժամկետ կարգավորման առումով: Այդ համատեքստում դժվար էր երկարաժամկետ հեռանկարում Ռուսաստանին, Իրանին և Թուրքիային գոհացնող լուծումներ գտնել Սիրիայում, որտեղ խաչվում էին վերոհիշյալ երկրների շահերը: Սակայն ի տարբերություն Ժնևի, որն ընդգրկում էր բանակցող կողմերի առավել լայն շրջանակ, Աստանայի բանակցային ձևաչափում մասնակցող կողմերի թվաքանակը քիչ էր, իսկ քննարկվող հարցերի շրջանակը՝ ավելի նեղ:

Աստանայի գործընթացի շրջանակներում Սիրիայի ճգնաժամի հանգուցալուծմանն ուղղված մի քանի հանդիպումներ տեղի ունեցան նաև 2018-2019 թթ., որոնց ընթացքում ընդունված որոշումները վերաբերում էին հիմնականում Սիրիայի առանձին հատվածներին: Աստանայի գործընթացին զուգահեռ ՌԴ, Թուրքիայի և Իրանի նախագահները կազմակերպեցին նաև եռակողմ հանդիպումներ Մոսկովում, Անկարայում և Թեհրանում՝ երեք երկրների կողմից Սիրիայի ճգնաժամի հանգուցալուծմանը միտված նախաձեռնություններին հաղորդելով ավելի մեծ ուշադրություն ու արդյունավետություն: Աստանայի շարունակությունը համարվող հիշյալ գործընթացները միտված էին Սիրիայում տեղի ունեցող քաղաքական գործընթացի փուլն (Աստանայի ձևաչափ) առանձնացնել քաղաքական անցումային (Ժնևի ձևաչափ)

փուլից՝ դուրս մղելով սիրիական խնդրի կարգավորման ժնկյան գործընթացը:

Աստանայի ձևաչափի առանձնահատկություններից մեկը, ի տարբերություն Ժնևի բանակցությունների, այն էր, որ Աստանան բոլորովին այլ գործընթաց էր և նոր ընտրված ձևաչափ Սիրիայի հակամարտության կարգավորման համար: Մինչդեռ Ժնևի բանակցային փուլերը իրար փոխլրացնող գործընթացներ էին՝ ստատիկ կազմով ու հնչող տեսակետներով, որտեղ նոր մոտեցումներին ու նոր խոսքին հիմնականում տեղ չէր հատկացվում:

Սիրիական հակամարտության կարգավորման Ժնևի և Աստանայի գործընթացներում ակտիվություն ցուցաբերող ուժային կենտրոնների վարքագիծը պայմանավորված էր հետևյալ իրողություններով. ԱՄՆ-ն ուներ սեփական շահերն ու նպատակները Սիրիայում: Վաշինգտոնի քաղաքականությունը կառուցվում էր Բաշար ալ-Ասադի իշխանության դեմ ընդդիմադիր ուժերի աջակցության ու ֆինանսավորման վրա, որը հնարավորություն էր տալիս ԱՄՆ-ին պասիվ մասնակցություն ունենալու սիրիական հակամարտությունում՝ խուսափելով վտանգներից, հավելյալ ռեսուրսների ու ֆինանսների վատնումից: ԱՄՆ նման վարքագծի առարկայական դրսևորումներից մեկն էլ այն էր, որ Միացյալ Նահանգները համաձայնում էր սիրիական ճգնաժամի հանգուցալուծման նախաձեռնություններում քրդերի բացակայությանը՝ մինևույն ժամանակ զինելով ու աջակցելով վերջիններիս սիրիական պատերազմի ընթացքում:

Աստանայի գործընթացը նախաձեռնած Ռուսաստանի, Իրանի ու Թուրքիայի՝ սիրիական հակամարտությանն առնչվող մոտեցումները պայմանավորված էին նրանով, որ երեք երկրներն էլ ակտիվ ներքաշված էին խնդրում և ռազմաքաղաքական ու տնտեսական շահերից ելնելով՝ ունեին առարկայական լուրջ ներկայություն Սիրիայում: Ռուսաստանը Սիրիայի իշխանու-

թյունների հիմնական դաշնակիցներից մեկն էր, որի շնորհիվ Մոսկվան փորձում էր ավելացնել սեփական ազդեցությունը ոչ միայն Սիրիայում, այլ նաև տարածաշրջանում: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա Սիրիայում ստեղծված իրավիճակը ստիպեց թուրքական իշխանություններին գնալ սիրիական հակամարտության մեջ անմիջական ներքաշվելու և ռազմական լուծման ճանապարհով՝ գիտակցելով ավելացող և սեփական անվտանգությանը սպառնացող այն վտանգը, որը գալիս է Սիրիայի քրդերից: Սիրիական հակամարտությունում ներքաշված քրդական ԴՄԿ-ն (և դրա ռազմական թևը՝ ԺՊՄ-ն) Թուրքիայի համար ահաբեկչական որակվող ՔԱԿ ճյուղավորումն էր Սիրիայում: Դրանով պայմանավորված՝ Անկարան հանդես էր գալիս քրդական վերոհիշյալ կառույցի ներգրավվածության դեմ Ժնևի ու Աստանայի բանակցային գործընթացներին: Ավելին, Անկարան սպառնում էր դուրս գալ բանակցային գործընթացից, եթե քրդական այդ կառույցը հրավիրվեր: Իրանը ևս ուներ իր ազդեցությունն ու շահերը Սիրիայում, որոնք արտահայտվում էին Դամասկոսին ուղարկվող ռազմական ու տնտեսական աջակցության տեսքով: Բացի դրանից՝ Իրանը մտահոգված էր շիայական իշխանությունների և Սիրիայում իրանամետ ուժերի դիրքերի թուլացմամբ, Եփրատից արևելք ընկած հատվածներում ԱՄՆ զինուժի առկայությամբ, այդ հատվածում վերջինիս հովանավորության տակ գործող քրդական խմբավորումների ակտիվությամբ և այլն: Այնուամենայնիվ, ԱՄՆ քաղաքականությունը Սիրիայում դրդեց Մոսկվային, Թեհրանին և Անկարային Սիրիայի հակամարտության կարգավորման համընդհանուր մեկնակետ ու երկրի տարածքային ամբողջականության պահպանմանն ուղղված միասնական մոտեցում ունենալուն: Սիրիայի հարցում Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի դիրքորոշումներում գերակշռում էր նաև սեփական ազդեցության գոտիներ ունենալը, որը սիրիական հակա-

մարտության այս փուլում եռակողմ ձևաչափում ընդհանրական կարծիքներ ունենալու հնարավորություն էր ստեղծում:

Միջազգային տարբեր ձևաչափերով սիրիական խնդրի կարգավորման գործընթացներում հիմնականում նկատվեցին հատվածային լուծումներ, որոնք պայմանավորված էին սիրիական հակամարտության առանձնահատկությամբ ու համընդհանուր բնույթով: Սիրիական հակամարտության կարգավորման հիշյալ գործընթացները թույլ են տալիս ենթադրել, որ հակամարտության մեջ ներգրավված կողմերն անցում են կատարել Սիրիայի ճգնաժամի հատվածային կարգավորման տարբերակին, որը ենթադրում է Սիրիայի առանձին շրջաններին առնչվող խնդիրների կարճաժամկետ կարգավորում, որից հետո հնարավոր կլինի սիրիական խնդրի վերաբերյալ համընդգրկուն պայմանավորվածությունների իրականացումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

2010 թ. վերջից արաբական երկրներում սկսված զանգվածային շարժումներն ու ցույցերը փոփոխությունների և հեղաշրջումների պատճառ դարձան մի շարք երկրներում: Միրիան նույնպես անմասն չմնաց վերոհիշյալ գործընթացներից: 2011 թ. մարտից երկրում սկսվեցին բողոքի ակցիաներ և ցույցեր, որոնք հետագայում վերածվեցին զինված բախումների և ռազմական լայնամասշտաբ գործողությունների սիրիական իշխանությունների և ընդդիմության միջև երկրի ողջ տարածքում: Իր սկզբնավորման ժամանակահատվածից սիրիական հակամարտությունն առավելապես սոցիալական բնույթ էր կրում, որը հետագայում աստիճանաբար ընդունեց սուր քաղաքական ուղղվածություն՝ երկիրը կանգնեցնելով խոր ճգնաժամի առջև: Աստիճանաբար ակնառու դարձան Միրիայում ներգրավված հակամարտող կողմերը՝ ներկայիս իշխանություններն ու հիմնականում դրսից (Պարսից ծոցի արաբական միապետություններ, Թուրքիա, Հորդանան և այլն) կազմակերպվող ու ֆինանսավորվող ընդդիմադիր զանգվածը, որը սկզբնական շրջանում ներկայացված էր առավելապես «չափավոր» ուժերով, հետագայում նրանք իրենց դիրքերը զիջեցին կազմակերպչական, համախմբվածության և ռազմական փորձի առումով իրենց գերազանցող իսլամական ծայրահեղական ուժերին:

Հակամարտության աստիճանական սրման պայմաններում 2011 թ. վերջին սիրիական իշխանությունները որդեգրեցին ռազմավարական կարևորություն ներկայացնող Միրիայի արևմտյան տարածքներն ու մարզկենտրոնները պաշտպանելու և այս հատվածներում ռազմական լայնածավալ գործողություններից խուսափելու մարտավարությունը:

Այդ փուլում ստեղծված անկայուն իրավիճակը հնարավորություն տվեց Սիրիայի հյուսիսային քրդաբնակ Աֆրինում, Քոբանիում և ալ-Հասաքայում բնակվող քրդերին ակտիվություն դրսևորելու հյուսիսային հատվածներում: Սիրիական իշխանությունների և քրդերի միջև սկսեցին ընթանալ բանակցություններ, որոնց արդյունքում քրդերին տրվեցին որոշ արտոնություններ: Փոխարենը կանոնավոր բանակի հիմնական ստորաբաժանումները դուրս բերվեցին հյուսիսային քրդաբնակ տարածքներից՝ կենտրոնացնելով երկրի արևմտյան հատվածներում:

2012-2014 թթ. Սիրիայի ներսում ընթացող ռազմական թեժ բախումներին զուգահեռ միջազգային հարթակներում ճգնաժամի հանգուցալուծման բազմաթիվ ծրագրեր և համաձայնություններ մշակվեցին՝ նպատակ ունենալով հասնել Սիրիայում ստեղծված իրավիճակի կայունության, հակամարտող կողմերին նստեցնել բանակցային սեղանի շուրջ և որոշակի քայլերի հերթականությամբ (կրակի դադարեցում, անցումային կառավարություն, ընտրություններ և այլն) լուծումներ գտնել սիրիական խնդրի շուրջ: Սակայն սիրիական հակամարտության կարգավորմանն ուղղված միջազգային տարբեր հարթակներում մշակվող նախաձեռնությունները չառանձնացան հանգուցալուծմանն ուղղված «անկեղծ» միտումներով և շարունակվող ռազմական գործողությունների պայմաններում բավական խնդրահարույց դարձան:

2014-2015 թթ. Սիրիայում նոր իրողությունների ականատեսն եղանք: Հյուսիսային որոշ շրջաններում քրդերը, սիրիական իշխանություններից ստանալով արտոնություններ, ստեղծեցին ինքնակառավարման մարմիններ և սեփական ինքնապաշտպանական ռազմական խմբեր: Դրա հետ մեկտեղ Սիրիայի հյուսիսային Աֆրին, Քոբանի և ալ-Ջազիրա քրդաբնակ շրջաններում ազդեցիկ քրդական կառույցներից «Դեմոկրատական միություն կուսակցությունը» հանդես եկավ ինքնավարություն հիմնելու

հայտարարություններով, ինչը քննադատության արժանացավ ինչպես տարածաշրջանում (Սիրիա, Թուրքիա և այլն), այնպես էլ՝ քրդերի շրջանում: Մյուս իրողությունը իսլամական ծայրահեղ արմատականության աննախադեպ ակտիվությունն էր Սիրիայում: Դրա անմիջական արտահայտությունը եղավ 2014 թ. ամռանը «Իսլամական պետության» հռչակումը Սիրիայի զգալի տարածքների վրա: Աշխարհի տարբեր հատվածներից նկատվեց իսլամականների աննախադեպ ներհուսք դեպի Սիրիա: Դեպի Սիրիա շարժվող իսլամականների շարքերում մեծ թիվ էին կազմում նաև Կովկասը ներկայացնող իսլամականները: Իսլամական ծայրահեղականների ակտիվությունը պատճառ դարձավ իսլամական ծայրահեղական երկու հիմնական ճամբարների՝ «ալ-Կաիդայի» և «Իսլամական պետության» միջև հակասությունների սրման և բախումների համար:

2014 թ. փոփոխություն նկատվեց սիրիական զարգացումներին առնչվող մեծ տեղությունների վարքագծում, ինչը հիմնականում պայմանավորված էր երկրի զգալի հատվածում անկանխատեսելի և անվերահսկելի իրավիճակով: Դա արտահայտվեց ԱՄՆ-ի և Ռուսաստանի՝ սիրիական հակամարտության մեջ անմիջական ներքաշմամբ: ԱՄՆ և նրա դաշնակից երկրների ռազմաօդային ուժերը 2014 թ. ընթացքում սկսեցին թեժ ավիահարվածներ հասցնել Սիրիայում՝ հիմնականում թիրախավորելով ընդդիմադիր իսլամական ծայրահեղական խմբավորումներին: Ցամաքում ԱՄՆ-ն սկսեց փնտրել դաշնակիցներ, և ամերիկացիների ընտրությունը կանգնեց Սիրիայի քրդերի վրա:

Իրավիճակը կտրուկ փոխվեց 2015 թ. վերջին: Այդ ժամանակ Սիրիայում տեղի ունեցավ մի գործընթաց, որին գործուն մասնակցություն բերեց Ռուսաստանը. դա սիրիական իշխանություններին տրված ռուսական անմիջական ռազմական օգնությունն էր: 2015 թ. սեպտեմբերին Սիրիայի կառավարությունը ընդդիմա-

դիր խմբավորումների դեմ պայքարելու համար ռազմական օգնության խնդրանքով դիմեց Ռուսաստանին: Սիրիական հակամարտությունում ռուսական զինուժի ռազմական միջամտությունը սկսվեց 2015 թ. սեպտեմբերի վերջից օդային թեժ հարվածների տեսքով: Հետագայում ռուսներն ավելացրին իրենց ռազմական ներկայությունը Սիրիայում՝ սպառազինություն և զինուժ տեղակայելով Տարտուս ու Հմեյմիմ ռազմաբազաներում, ակտիվորեն ներքաշվելով օդային և ցամաքային ռազմական գործողությունների մեջ:

Ռուսական օգնությունը փոխեց իրավիճակը Սիրիայում՝ հոգուտ սիրիական իշխանությունների: Այդ համատեքստում սիրիական հակամարտությունը կարելի է բաժանել երկու մեծ փուլերի՝ մինչև ռուսական զինուժի անմիջական ներգրավումը և դրանից հետո:

Ռուսական բանակի և շիայական խմբավորումների աջակցությամբ սիրիական զինուժը, 2016 թվականից սկսած, արձանագրեց ռազմական հաջողություններ. ազատագրվեցին մի շարք տարածքներ ու բնակավայրեր, այդ թվում՝ Սիրիայի համար կարևոր նշանակություն ունեցող Հալեպ քաղաքը:

2016-2020 թթ. տարածաշրջանային երկրներից Թուրքիան ռազմական ներխուժում իրականացրեց դեպի Սիրիա՝ նախաձեռնելով լայնածավալ ռազմական գործողություններ Սիրիայի հյուսիսում (2016 թ. օգոստոսին «Եփրատի վահան» ռազմական գործողությունը, որը առարկայական դարձրեց թուրքական ներկայությունը Սիրիայի հյուսիսային որոշ հատվածներում, 2017 թ. վերջին Իդլիբի ռազմական գործողությունները, որոնց հետևանքով նահանգում ստեղծվեցին թուրքական ռազմական դիտակետեր, 2018 թ. սկզբին քրդաբնակ Աֆրինի դեմ «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը, որի հետևանքով Աֆրինն անցավ թուրքական վերահսկողության տակ: Այդ ռազմական գործողու-

թյան նպատակը ոչ միայն այս հատվածից քրդական ուժերին դուրս հանելն էր, այլև այստեղ թուրքամետ տրամադրությունների ավելացումն ու իր սահմանին կանխատեսելի բնակչություն ունենալը, 2019 թ. հոկտեմբերին «Խաղաղության ակունք» ռազմական գործողությունը Ռաս ալ-Այն և Թալ Աբյադ բնակավայրերի ուղղությամբ, որի հետևանքով Սիրիայի հյուսիսային այդ հատվածում մոտ 100 կմ երկարությամբ և 30 կմ խորությամբ վերահսկողության գոտի ստեղծվեց թուրքական զինուժի կողմից, 2020 թ. հունվար-փետրվարին Իդլիբում ստեղծված լարված իրավիճակը ստիպեց Թուրքիային ավելացնել ռազմական ներուժը նահանգում):

Սիրիայում ընթացող գործընթացներն իրենց բացասական ազդեցությունն ունեցան երկրի էթնիկ-դավանական փոքրամասնությունների վրա ևս: Այդ համատեքստում Սիրիայում ծավալված ռազմական գործողությունները անմիջապես իրենց ներգործությունն ունեցան սիրիահայերի ու քրդերի վրա, որոնք, հիմնականում բնակվելով երկրի հյուսիսային շրջաններում, հակամարտության սկզբից հայտնվեցին ռազմական ակտիվ բախումների թատերաբեմում: 2016 թ. վերջին հայաբնակ Հալեպ քաղաքի ազատագրումը որոշ չափով թեթևացրեց սիրիահայերի վիճակը: Այնուամենայնիվ, 2019 թ. վերջին և 2020 թ. սկզբին Սիրիայի հյուսիսային տարածքների ողջ երկայնքով, մասնավորապես Լաթակիա, Իդլիբ, Հալեպ, ալ-Ռակկա, ալ-Հասաքա նահանգներում ծավալված ռազմական գործողությունները դեռևս վտանգավոր էին սիրիահայերի, քրդերի և մյուս էթնիկ-դավանական փոքրամասնությունների համար:

2019 թ. վերջին և 2020 թ. սկզբին սիրիական պատերազմի թեժ կետեր դարձան Իդլիբ և Հալեպ նահանգները, որտեղ տեղի ունեցան ռազմական բախումներ սիրիական բանակի ու ընդդիմադիրների միջև: Սիրիական կառավարական ուժերի և ընդդի-

մադիրների շրջանում գրանցված գոհերից գատ՝ սպանվեցին նաև թուրք և ռուս զինվորականներ: Դա խոսեց Սիրիայի հյուսիսարևմտյան հատվածում 2020 թ. սկզբին ստեղծված բավական բարդ իրավիճակի, այստեղ տեղի ունեցող բավական թեժ և արյունալի բախումների մասին: Սիրիական բանակի առաջխաղացումը վերոհիշյալ հատվածում բարելավեց իշխանությունների դիրքերը կարևոր այդ նահանգներում և ավելացրեց սիրիական հակամարտության կարգավորմանը միտված ջանքերի արդյունավետությունը:

Սիրիական հակամարտությունը ազդել է մերձավորարևելյան տարածաշրջանային և արտատարածաշրջանային զարգացումների վրա՝ ճանապարհի հարթելով նոր իրողությունների, մի շարք ուժային կենտրոնների՝ Մերձավոր Արևելքում ընթացող գործընթացներում ակտիվ ներգրավվածությանը ու սիրիական հակամարտության խաղաղ կարգավորմանը միտված տարբեր ձևաչափերով գործընթացների մասնակցությանը: Սիրիական հակամարտության ընթացքում նկատվել է նաև արտասիրիական ուժային այլ կենտրոնների (տարածաշրջանային և արտատարածաշրջանային), ինչպես նաև այլ դերակատարների միջնորդավորված ու անմիջական ներգրավվածություն, ինչն էլ այս կամ այն չափով ազդել է սիրիական հակամարտության վրա: Բաշար ալ-Ասադի դեմ հանդես եկող արտաքին ուժերը բազմազան էին՝ սկսած արևմտյան գերտերություններից մինչև տարածաշրջանային ուժային կենտրոններ, որոնք սկսեցին գործունե մասնակցություն ունենալ սիրիական ընդդիմադիր ճամբարի ստեղծման գործում՝ էլ ավելի ակտիվացնելով ընդդիմությանը տրվող օժանդակությունը:

Հակամարտության ընթացքում (2011-2020 թթ.) սիրիական ճգնաժամի կարգավորման միջազգային տարբեր ձևաչափերով բանակցային գործընթացներում որոշակի արդյունքներ գրանց-

վեցին: Դրանք հիմնականում Միրիայի առանձին հատվածներում հատվածային խնդիրներ էին լուծել: Սակայն չի կարելի թերագնահատել նման ձևաչափերով հանդիպումների կարևորությունը: Հակամարտության առանձնահատկությունն ու գլոբալ բնույթը այլ ելք չէին տալիս, քան Միրիայի ճգնաժամի հատվածային լուծումների համար, ինչը չափազանց մեծ ազդեցություն ունեցավ ու հակամարտող կողմերի տեսակետները լսելի դարձնելու հնարավորություններ ստեղծեց: Միրիական հակամարտության կարգավորման հիշյալ գործընթացները թույլ են տալիս ենթադրել, որ հակամարտության մեջ ներգրավված կողմերն անցում են կատարել Միրիայի ճգնաժամի հատվածային կարգավորման տարբերակին: Այն ենթադրում է ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական կարևորություն ունեցող առանձին շրջաններին առնչվող խնդիրների կարճաժամկետ լուծում կամ սառեցում, զարգացումների կանխատեսելիության ապահովում, որից հետո հնարավոր կլինի սիրիական խնդրի վերաբերյալ համապարփակ համաձայնագրի ձեռքբերումը:

Մինչև այսօր շարունակվող սիրիական հակամարտությունը խլել է հազարավոր մարդկանց կյանքեր, անօթևան թողել ու փախստական դարձրել միլիոնավոր սիրիացիների, պատճառ դարձել ավերածությունների, խեղված ճակատագրերի: Չնայած 2020 թ. սկզբին կանոնավոր բանակի առաջխաղացմանը՝ սիրիական հակամարտությունը դեռևս մնում է անկանխատեսելի, այստեղ դեռևս խաչվում են տարածաշրջանային և արտատարածաշրջանային բազմաթիվ շահեր, այն դեռևս պարարտ հող կարող է լինել վտանգավոր նոր դրսևորումների համար: Միրիական հակամարտությունը վաղուց դադարել է լինել մերձավորարևելյան տարածաշրջանային իրողություն՝ ազդելով գլոբալ գործընթացների վրա: Հակամարտության կարգավորումը պետք է ունենա թե՛ տարածաշրջանային, թե՛ արտատարածաշրջանային չա-

փումներ, հիմնված լինի խելամիտ և անկեղծ մոտեցումների վրա, որոնք պետք է մղեն հակամարտության շուտափույթ լուծմամբ մտահոգված կողմերին գտնել սիրիական հակամարտության հանգուցալուծման բանալին:

Саркис Григорян
Сирийский конфликт 2011-2020 гг.
Резюме

С конца 2010 г. массовые движения и митинги, начавшиеся в арабских странах, стали причиной изменений и переворотов в ряде стран. Сирия также не осталась в стороне от указанных процессов. С марта 2011 г. в стране начались акции протеста и митинги, которые в дальнейшем переросли в вооруженные столкновения и крупномасштабные военные действия между сирийским правительством и оппозицией на территории всей страны.

В момент своего возникновения сирийский конфликт в основном носил социальный характер, который в дальнейшем приобрел острую политическую направленность, в результате чего страна оказалась перед угрозой глубокого кризиса. Постепенно четко обозначились конфликтующие стороны – действующие власти и оппозиция, координируемая и финансируемая в основном извне (монархические арабские страны Персидского залива, Турция, Иордания и т.д.), которая первоначально была представлена «умеренными» силами. Впоследствии она уступила свои позиции с точки зрения организационного и военного опыта превосходящим ее исламистским экстремистским силам.

В условиях нарастающей эскалации конфликта в конце 2011 г. сирийские власти применили тактику защиты стратегически важных западных территорий и региональных центров, чтобы не допустить крупномасштабных военных действий в этих районах.

Нестабильная ситуация в стране на этом этапе позволила курдам, населяющим три северных района Сирии – Африн, Кобани и Аль-Хасака, активизироваться в этих северных районах. Между сирийскими властями и курдами начались переговоры, по итогам которых курдам были предоставлены определенные привилегии. Взамен основные подразделения регулярной армии были выведены из северных, населенных курдами районов и сосредоточены в западной части страны.

Наряду с военными столкновениями, происходившими в 2012-2014 гг. внутри Сирии, на международной арене были разработаны многочисленные программы и соглашения, направленные на урегулирование кризиса, с целью добиться стабильности в возникшей в Сирии ситуации, посадить конфликтующие стороны за стол переговоров и с помощью определенных шагов (прекращение огня, переходное правительство, выборы и т.д.) найти решение сирийской проблемы. Однако инициативы, разработанные на различных международных платформах для урегулирования сирийского конфликта, не отличились «искренними» тенденциями и стали весьма проблематичными в контексте продолжающихся военных действий.

В 2014-2015 гг. мы стали свидетелями новых событий в Сирии. В некоторых северных районах курды, получив привилегии от сирийских властей, создали органы самоуправления и собственные военные группы самообороны. В то же время «Курдский демократический союз» – одна из влиятельных курдских структур в населенных курдами районах северной части Сирии Африне, Кобани и Аль-Джазире – сделал заявление об установлении автономии, которое было раскритиковано как в регионе (Сирия, Турция и т.д.), так и среди курдов.

Другим явлением стала беспрецедентная активность исламистского радикализма в Сирии. Непосредственным выражением этого стало провозглашение «Исламского государства» на значительных территориях Сирии летом 2014 г. Произошел массовый приток исламистов со всего мира в Сирию. Среди мусульман, направляющихся в Сирию, было также большое количество мусульман с Кавказа. Активность исламистских экстремистов вызвала напряженность в регионе и столкновения между двумя основными исламистскими экстремистскими лагерями – «Аль-Каидой» и «Исламским государством».

В 2014 г. в связи с развитием событий в Сирии произошли изменения в поведении сверхдержав, что было обусловлено главным образом непредсказуемой, неконтролируемой и опасной ситуацией в большей части страны. Это выразилось в непосредственном вовлечении США и России в сирийский конфликт. ВВС США и их союз-

ных государств в течение 2014 г. наносили интенсивные авиаудары по Сирии, в основном по оппозиционным исламистским экстремистским группировкам. В США начали искать союзников внутри Сирии, и выбор американцев выпал на сирийских курдов.

Ситуация резко изменилась к концу 2015 г. В то время в Сирии происходили события, в которых активное участие приняла Россия, оказавшая непосредственную военную помощь сирийским властям.

В сентябре 2015 г. правительство Сирии обратилось к России с просьбой оказать военную помощь в борьбе с оппозиционными группировками. Российское военное вмешательство в сирийский конфликт начинается в конце сентября 2015 г. нанесением интенсивных воздушных ударов. Впоследствии русские увеличили свое военное присутствие в Сирии, развернув войска и усилив их вооружение на военных базах в Тартусе и в Хмеймиме, активно участвуя в воздушных и наземных военных действиях. Оказанная Россией помощь изменила ситуацию в Сирии в пользу сирийских властей. В этом контексте сирийский конфликт можно разделить на два основных этапа – до и сразу после российского военного вмешательства.

Сирийские вооруженные силы при поддержке российской армии и шиитских группировок начиная с 2016 г. добились определенных военных успехов: был освобожден ряд территорий и поселений, в том числе город Алеппо, имеющий важное для Сирии значение.

В 2016-2020 гг. одна из региональных стран – Турция – проводила операции по вторжению в Сирию, начав широкомасштабные военные действия на Севере Сирии (военная операция «Щит Евфрата» в августе 2016 г., которая эксплицировала присутствие Турции в некоторых частях Севера Сирии; военные операции в Идлибе в 2017 г., в результате которых в ряде провинций появились турецкие военные наблюдательные пункты; военная операция «Оливковая ветвь» в населенном курдами Африне в январе 2018 г., вследствие которой Африн перешел под контроль Турции. Целью этой военной операции было не только изгнать курдские силы из этого района, но и усилить протурецкие настроения в нем, а также иметь подчиняющееся Турции население на ее границах; в октябре 2019 г. военная операция в поселениях Рас-аль-Айн и Тель-Абьяд

привела к созданию турецкой армией зоны контроля длиной 100 км и шириной 30 км в этой северной части Сирии; напряженная ситуация в Идлибе в январе-феврале 2020 г. вынудила Турцию увеличить свой военный потенциал в провинции.

Процессы в Сирии оказали также негативное влияние и на положение этнических и религиозных меньшинств страны. В этом контексте военные операции в Сирии незамедлительно повлияли на сирийских армян и курдов, которые, проживая в основном в северных районах страны, с начала конфликта оказались в центре активных военных действий. Освобождение в 2016 г. армянонаселенного города Алеппо в какой-то степени облегчило положение сирийских армян. Тем не менее, военные действия конца 2019 г. и начала 2020 года, происходящие на северных сирийских территориях, особенно в Латакии, Идлибе, Алеппо, Аль-Ракке, Аль-Хасаке, все еще представляли угрозу для сирийских армян, курдов и других этнических и религиозных меньшинств.

В конце 2019 г. и в начале 2020 г. эпицентром сирийской войны стали провинции Идлиб и Алеппо, где произошли военные столкновения между сирийской армией и оппозицией. Помимо жертв среди сирийских правительственных сил и оппозиции, были также потери среди турецких и российских военнослужащих. Это был результат сложившейся в начале 2020 г. довольно сложной ситуации на Северо-Западе Сирии и горячих и кровавых столкновений в этой области. Продвижение сирийской армии в упомянутом секторе укрепило положение властей в этих важных для страны провинциях и еще более повысило эффективность усилий, направленных на урегулирование сирийского конфликта.

Сирийский конфликт повлиял и на ближневосточные региональные и внерегиональные события, проложив путь активной вовлеченности в сирийские события ряда силовых центров Ближнего Востока и процессам различных форматов, направленных на мирное урегулирование сирийского конфликта. На протяжении всего сирийского конфликта было заметно прямое и косвенное участие несирийских, иностранных, силовых центров (региональных и внерегиональных), а также других акторов, в той или иной мере влияющих на

сирийский конфликт. Внешние силы, противостоящие Башару Асаду, – от западных держав до региональных центров, начали активно участвовать в создании сирийского оппозиционного лагеря, что еще больше усилило оказываемую оппозиции поддержку.

Во время конфликта (2011-2020 гг.) переговорный процесс по сирийскому кризису, протекавший в различных международных форматах, давал определенные результаты. В основном они лишь частично решали проблемы в отдельных частях Сирии. Однако нельзя недооценивать важность встреч в подобных форматах. Неоднозначность и глобальный характер конфликта не давали другого выхода, кроме фрагментарного решения сирийского кризиса, что оказало воздействие на процесс урегулирования конфликта и создало возможность для того, чтобы мнения сторон были услышаны. Упомянутые процессы позволяют предположить, что стороны, вовлеченные в конфликт, совершили переход к частичному урегулированию сирийского кризиса. Это предполагает краткосрочное решение проблем или замораживание вопросов, связанных с конкретными районами, имеющими важное военно-политическое и социально-экономическое значение, обеспечение предсказуемости развития событий, после чего станет возможным комплексное соглашение по сирийской проблеме.

Продолжающийся сирийский конфликт отобрал жизни тысячи человек, оставил без крова и сделал беженцами миллионы сирийцев, сломал судьбы людей и стал причиной многочисленных разрушений. Несмотря на продвижение регулярной армии в начале 2020 г., сирийский конфликт по-прежнему непредсказуем. Он все еще находится на пересечении многих региональных и внерегиональных интересов, он все еще остается благодатной почвой для новых опасных процессов. Сирийский конфликт, влияющий на глобальные процессы, давно перестал быть ближневосточной региональной реальностью. Урегулирование конфликта должно иметь как региональные, так и внерегиональные измерения, основанные на разумных и «искренних» подходах, которые должны побудить заинтересованные в быстром урегулировании сирийского конфликта стороны найти ключ к его развязке.

Sargis Grigoryan
The Syrian Conflict in 2011-2020
Summary

The riots and rebellions which started in Arabic countries since the end of 2010 have caused a lot of changes and revolutions in a number of countries. One such country was Syria. In March 2011 rallies and demonstrations started in Syria which later developed into an armed conflict and large scale military battles between the Syrian government and opposition all over the country. At the very beginning the Syrian conflict was mostly of a social nature, and later it gradually became highly political, thus, leading the country to a deep crisis. Gradually, the parties involved in the Syrian conflict became obvious - the current government and the opposition mainly formed and funded from the outside (the Persian Gulf Arab states, Turkey, Jordan, etc.). At the beginning, the opposition was mainly represented by “moderate” forces, which later lost their positions to Islamic extremist organizations, that were more organized and had more experience in military operations.

With the gradual escalation of the conflict at the end of 2011 the Syrian government adopted a strategy to defend the western territories and regional centers, which were of strategic importance in Syria, and to avoid large-scale military operations in these areas.

The unstable situation at that stage enabled the Kurds, living in the three northern Kurdish populated areas of Syria - Afrin, Kobani and Al-Hasakah, to become politically active in the northern parts of the country. Negotiations began between the Syrian government and the Kurds. As a result, the Kurds were granted some privileges. Instead, the main units of the regular army were withdrawn from the northern Kurdish populated areas and were concentrated in the western parts of the country.

Between 2012 and 2014 alongside the heated military clashes inside Syria, numerous programs and agreements were developed on the international arena to resolve the conflict, to reach stability of the situation, to bring the conflicting parties to the negotiating table, and to take certain steps (cease-fire, transitional government, elections, etc.) to

find solutions to the Syrian problem. However, the initiatives elaborated on various international platforms for the settlement of the Syrian conflict have not been singled out as "sincere" tendencies for resolving the conflict and have become quite problematic in the context of ongoing military actions.

Between 2014 and 2015 we witnessed new realities in Syria. In some Kurdish populated northern regions the Kurds, having received privileges from the Syrian government, established self-governing bodies and self-defense military groups. At the same time, in the northern regions - Afrin, Kobani and Al-Jazira a very influential Kurdish party "Kurdish Democratic Union" announced about establishing autonomy, which aroused criticism both in the whole region (Syria, Turkey, etc.) and among the Kurds. Another reality was the unprecedented activism of Islamic radicalism in Syria. Its immediate expression was the declaration of the "Islamic State" on most parts of Syria in the summer of 2014. There was an unprecedented influx of Islamists into Syria from all over the world. Among them were also large numbers of Muslims from the Caucasus. The activism of Islamic extremists caused tensions and clashes between the two main Islamic extremist camps "Al-Qaeda" and the "Islamic State".

2014 saw a change in the behavior of superpowers associated with Syrian developments, which was mainly due to the existing unpredictable, uncontrollable and dangerous situation in the most parts of the country. This was expressed by the direct involvement of the US and Russia in the Syrian conflict. In 2014 the US and its allied Air Forces started intense airstrikes, mainly targeting Islamic extremist opposition groups in Syria. The United States began to look for allies on the land, and the Americans choice fell on the Kurds living in Syria.

The situation in Syria changed dramatically at the end of 2015. It was due to Russia's direct military assistance to the Syrian government. In September 2015 the Syrian government asked Russia for military assistance to combat the opposition groups. Russian military intervention in Syrian conflict began in late September 2015 in the form of intense airstrikes. Later, the Russians increased their military presence by

deploying armaments and troops at the Tartus and Hmeimim military bases, actively engaging in air and land operations.

Russian assistance changed the situation in Syria for the benefit of the Syrian government. In this context, the Syrian conflict can be divided into two major stages: before the Russian direct military engagement and after it.

Supported by the Russian Armed Forces and Shiite Groups the Syrian Regular Army has had major military successes since 2016. A number of territories and settlements have been liberated, including the city of Aleppo which is of vast importance for Syria.

Between 2016 and 2020 one of the regional countries, Turkey, invaded Syria, launching large-scale military operations in the northern parts of the country (in August 2016 the military operation “Euphrates Shield”, which led to Turkish presence in some parts of northern Syria; at the end of 2017 Idlib military operations, as a result of which Turkey set up military observation posts in the state; military operation “Olive Branch” against Kurdish Afrin in early 2018, as a result of which Afrin went under Turkish control. The aim of this operation was not only to expel the Kurdish forces from this area, but also to increase pro-Turkish sentiment and to have a predictable population on its border. In October 2019, a military operation “Peace Spring” in the areas of Ras al-Ayn and Tell Abiad resulted the creation of a 100-kilometer-long and 30-kilometer-wide control zone by the Turkish armed forces in the northern part of Syria. In January-February 2020 the tense situation in Idlib forced Turkey to increase its military potential in the province).

These processes in Syria have also had a negative impact on the country's ethnic-religious minorities. In this context, the military operations had an immediate impact on Syrian-Armenians and Kurds, who mainly residing in the northern parts of the country, happened to be on the scene of active military clashes since the beginning of the conflict. At the end of 2016 the liberation of the Armenian-populated city of Aleppo somewhat eased the situation for Syrian Armenians. However, at the end of 2019 and at the beginning of 2020 the military operations throughout the northern Syrian territories, particularly in Latakia, Idlib,

Aleppo, Ar-Raqqqa, Al-Hasakah, were still a serious threat to Syrian-Armenians, Kurds and other ethnic-religious minorities.

At the end of 2019 and at the beginning of 2020 the provinces of Idlib and Aleppo became the hot spots of the war where the Syrian army and the opposition groups clashed. Turkish and Russian soldiers were killed in addition to the casualties among Syrian government forces and opposition groups. This meant that the situation in the north-western part of Syria was very serious at the beginning of 2020 and that there were hot and bloody clashes there. The advancement of the Syrian army in the aforementioned regions has improved the position of the Syrian government in these important provinces and further enhanced the effectiveness of efforts aimed at the settlement of the conflict.

The Syrian conflict has affected regional and extra-regional developments in the Middle East, paving the way for new realities, for the active engagement of a number of power centers in the Middle East and for the processes of various formats aimed at a peaceful resolution of the conflict. There was also direct and indirect involvement of other foreign power centers (regional and extra-regional), as well as other forces, which have affected the Syrian conflict this way or other. External forces opposed to Bashar al-Assad were diverse, ranging from Western superpowers to regional power centers, which began to actively participate in the creation of the opposition camp, further intensifying support for the Syrian opposition.

During the conflict (2011-2020) there were some results in the negotiation process (regulated by various international formats) of the crisis. Though they had mainly solved problems partially in certain parts of Syria, the importance of meetings in such formats cannot be underestimated. The peculiarity and global nature of the conflict provided no other solution than partial solutions to the Syrian crisis, which had an enormous impact and created opportunities for the views of the conflicting parties to be heard. The aforementioned resolution processes of the conflict allow us to assume that the parties involved in the conflict have shifted to a partial solution to the Syrian crisis. It presupposes a short-term solution or freezing of issues related to some areas of military-

political and socio-economic importance, ensuring predictability of developments, after which it will be possible to get a comprehensive agreement on the Syrian conflict.

The ongoing Syrian conflict has claimed thousands of lives, has left millions of Syrians homeless and displaced, has caused devastation and broken destinies. Despite the advance of the regular army at the beginning of 2020, the conflict is still unpredictable, many regional and extra-regional interests are still intertwined and it can still provide fertile ground for new and dangerous manifestations. The Syrian conflict has long ceased to be a Middle Eastern regional reality, affecting global processes. Conflict resolution must have both regional and extra-regional dimensions, based on sensible and sincere approaches, which should prompt parties concerned with a quick resolution to the conflict to find the key to resolving the Syrian issue.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՑՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

¹ Weiss M., Hassan H., ISIS, Inside the Army of Terror, New York, 2015, pp. 131-144.

² Տե՛ս BBC News, Galpin R., Syria crisis. Turkey training rebels, says FSA fighter, 4 August, 2012, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-19124810>:

³ Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն: Բուհական դասագիրք, Երևան, 2019, էջ 445-446:

⁴ Սիրիական հակամարտության սկզբնական փուլում ստեղծված անկայուն իրավիճակը հնարավորություն տվեց Սիրիայի հյուսիսային քրդաբնակ երեք հատվածներում՝ Աֆրինում, Քոբանիում և ալ-Հասսաքայում բնակվող քրդերին ակտիվություն դրսևորելու հյուսիսային քրդաբնակ շրջաններում (տե՛ս Գրիգորյան Ս., Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆոթյան հռչակում, Երևան, 2016, էջ 160-161):

⁵ Syria news, Why the Anti-Syrian War Coalition is Losing the War, July 28, 2013, <https://www.syrianews.cc/anti-syrian-coalition-losing-war/>.

⁶ United Nations, General Assembly, in Resolution, Demands All in Syria ‘Immediately and Visibly’ Commit to Ending Violence that Secretary-General Says Is Ripping Country Apart, August 3, 2012, <https://www.un.org/press/en/2012/ga11266Rev1.doc.htm>.

⁷ Reuters, Syrian army captures strategic border town of Qusair, June 5, 2013, <https://www.reuters.com/article/us-syria-crisis-town/syrian-army-captures-strategic-border-town-of-qusair-idUSBRE95406220130605>.

⁸ Enabbaladi.net, To Al-Qusayr Time: Hezbollah In Syria Between Intervention And Reduction Of Forces, July 14, 2019, <https://english.enabbaladi.net/archives/2019/07/to-al-qusayr-time-hezbollah-in-syria-between-intervention-and-reduction-of-forces/>.

⁹ UN SC, Resolution 2118 (2013), [https://undocs.org/S/RES/2118\(2013\)](https://undocs.org/S/RES/2118(2013)).

¹⁰ The White House, Office of the Press Secretary, Remarks by the President in Address to the Nation on Syria, September 10, 2013, <https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2013/09/10/remarks-president-address-nation-syria>.

¹¹ «Քրդական ազգային խորհուրդը» ստեղծվել էր Քուրդիստանի ռեզիմնալ կառավարության նախագահ և «Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության» (ՔԴԿ) առաջնորդ Մասուդ Բարզանու զխավորությամբ, որը ներառում էր Սիրիայի քրդական շուրջ 16 կուսակցություններ (տե՛ս Պետրոսյան Վ., «Դեմոկրատական միություն» կուսակցության վերելքի պատճառները սիրիական զարգացումների համատեքստում, «Շամանակակից Եվրասիա», 4 (2), 2015 թ., էջ 10-50):

¹² Statement of Liwa al-Tawheed leader, September 12, 2013, <https://www.youtube.com/watch?v=-5C0nwi4x7U#t=29>.

¹³ BBC, What is the Geneva II conference on Syria?, January 22, 2014, <https://www.bbc.com/news/world-middle-east-24628442>.

¹⁴ «Դեմոկրատական միություն կուսակցության» (ԴՄԿ) մասին տե՛ս Պետրոսյան Վ., «Դեմոկրատական միություն» կուսակցության վերելքի պատճառները սիրիական զարգացումների համատեքստում, «Ժամանակակից Եվրասիա», 4 (2), 2015 թ., էջ 10-50:

¹⁵ Van Wilgenburg W., The Kurds and Geneva II, Carnegie Middle East Center, January 20, 2014, <https://carnegie-mec.org/diwan/54247>.

¹⁶ The Guardian, Bashar al-Assad wins re-election in Syria as uprising against him rages on, June 4, 2014, <https://www.theguardian.com/world/2014/jun/04/bashar-al-assad-wins-reelection-in-landslide-victory>.

¹⁷ NBCnews, U.S. Bombs ISIS Sites in Syria and Targets Khorasan Group, September 24, 2014, <https://www.nbcnews.com/storyline/isis-terror/u-s-bombs-isis-sites-syria-targets-khorasan-group-n209421>.

¹⁸ Տե՛ս Գրիգորյան Ս., Իսլամական պետություն: Ակունքներից մինչև խալիֆության հռչակում, Երևան, 2016, էջ 120-123:

¹⁹ CNN, Sciutto J., Castillo M., Yan H., U.S. airstrikes hit ISIS inside Syria for first time, September 23, 2014, <https://edition.cnn.com/2014/09/22/world/meast/u-s-airstrikes-isis-syria/>.

²⁰ Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 447-448:

²¹ Balanche F., The Washington Institute, The Druze and Assad: Strategic Bedfellows, October 20, 2016, <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/the-druze-and-assad-strategic-bedfellows>.

²² Shells target the capital, wound in a shelling by the regime forces on Darayya city and violet clashes in the area and al-Zabadani city, August 2, 2015, <https://web.archive.org/web/20150811051905/http://www.syriahr.com/en/2015/08/shells-target-the-capital-wound-in-a-shelling-by-the-regime-forces-on-darayya-city-and-violet-clashes-in-the-area-and-al-zabadani-city/>.

²³ Dispatch from the Field, Islamic Sate, Ammunition in Iraq and Syria, Conflict Armament Research, October 2014, http://www.conflictarm.com/wp-content/uploads/2014/10/Dispatch_IS_Iraq_Syria_Ammunition.pdf.

²⁴ Bustle.com, ISIS Controls Over 50% Of Syria, After Seizing The Historic City Of Palmyra, May 21, 2015, <https://www.bustle.com/articles/84870-isis-controls-over-50-of-syria-after-seizing-the-historic-city-of-palmyra>.

²⁵ Այդ աջակցությունը դրամադրվել է նաև արտասիրիական առանցքային այլ ուժային կենտրոններից (տե՛ս Գրիգորյան Ս., նշվ. աշխ., էջ 100-102):

²⁶ Long War Journal, Al Qaeda and allies form coalition to battle Syrian regime in Idlib, March 24, 2015, <https://www.longwarjournal.org/archives/2015/03/al-qaeda-and-allies-form-coalition-to-battle-syrian-regime-in-idlib.php>.

²⁷ Տե՛ս Գրիգորյան Ս., Իսլամական արմատականությունը Կովկասում (ծայրահեղ արմատական դրսևորումներն ու ներկա միտումները), Երևան, 2017, էջ 44-52:

²⁸ Bellingcat, Syrian Turkmen Groups in Latakia: An Overview, February 7, 2019, <https://www.bellingcat.com/news/mena/2019/02/07/syrian-turkmen-groups-in-latakia-an-overview/>.

²⁹ Los Angeles Times, Patrick J., McDonnell; W.J., Hennigan B., Russia launches airstrikes in Syria amid U.S. concern about targets, September 30, 2015, <https://www.latimes.com/world/europe/la-fg-kremlin-oks-troops-20150930-story.html>.

³⁰ Al Jazeera, Russia carries out first air strikes in Syria, September 30, 2015, <https://www.aljazeera.com/news/2015/09/russian-carries-air-strikes-syria-150930133155190.html>.

³¹ Այդ դեպքի հետ կապված՝ Թուրքիայի ԶՈՒ ԳՇ-ն հայտնեց, որ Թուրքիայի օդային տարածքը խախտելու համար թուրքական F-16 կործանիչները խոցել են «անհայտ օդանավ», որը մինչ խոցումը ստացել էր նախազգուշացումներ (տե՛ս Al-Jazeera, Turkey downs Russian jet, November 24, 2015, http://live.aljazeera.com/Event/Turkey_downs_Russian_jet/207502662):

³² The Times of Israel, Turkmen rebels say they killed both pilots in downed Russian plane, November 24, 2015, <https://www.timesofisrael.com/turkmen-rebels-say-they-killed-both-pilots-in-downed-russian-plane/>.

³³ News UN, Совет Безопасности ООН одобрил «венские» договоренности о продвижении политических преобразований в Сирии, 18 декабря 2015, <https://news.un.org/ru/story/2015/12/1277271#.VnbuP7Z96t->.

³⁴ BBC, Turkey enters Syria to remove precious Suleyman Shah tomb, February 22, 2015, <https://www.bbc.com/news/world-middle-east-31572257>.

³⁵ BBC, Syria war pause plan agreed by world powers, February 12, 2016, <https://www.bbc.com/news/world-middle-east-35556783>.

³⁶ Long War Journal, Weiss C., Uzbek group showcases fighting Kurds in Aleppo, April 13, 2016, <https://www.longwarjournal.org/archives/2016/04/uzbek-group-showcases-fighting-kurds-in-aleppo.php>.

³⁷ العربية، 70 قتيلًا في معارك بين النظام و "جيش الفتح" جنوب حلب،

<https://www.alarabiya.net/ar/arab-and-world/syria/2016/05/06/%D8%A3%D9%83%D8%AB%D8%B1-%D9%85%D9%86-70-%D9%82%D8%AA%D9%8A%D9%84%D8%A7-%D9%81%D9%8A-%D9%85%D8%B9%D8%A7%D8%B1%D9%83-%D8%A8%D9%8A%D9%86-%D8%A7%D9%84%D9%86%D8%B8%D8%A7%D9%85-%D8%A7%D9%84%D9%86%D8%B5%D8%B1%D8%A9-%D8%AC%D9%86%D9%88%D8%A8-%D8%AD%D9%84%D8%A8-.html>.

³⁸ مصرع عميد في "الحرس" الإيراني جنوب حلب،

<https://www.aljazeera.net/news/arabic/2016/5/9/%D9%85%D8%B5%D8%B1%D8%B9-%D8%B9%D9%85%D9%8A%D8%AF-%D9%81%D9%8A-%D8%A7%D9%84%D8%AD%D8%B1%D8%B3-%D8%A7%D9%84%D8%A5%D9%8A%D8%B1%D8%A7%D9%86%D9%8A-%D8%AC%D9%86%D9%88%D8%A8-%D8%AD%D9%84%D8%A8>.

³⁹ Syria Live, Map: ISIL recaptured Dudiyan, Tall Sha'ir and Aykadah from rebels, <https://syria.liveuamap.com/en/2016/2-may-map-isil-recaptured-dudiyan-tall-shair-and-aykadah>.

⁴⁰ <http://hadithcollection.com/sahihmuslim/169-Sahih%20Muslim%20Book%2041.%20Turmoil%20And%20Portents%20Of%20The%20Last%20Hour/15505-sahih-muslim-book-041-hadith-number-6924.html>.

⁴¹ Carnegie Middle East Center, Lund A., A Turning Point in Aleppo, December 15, 2016, <https://carnegie-mec.org/diwan/66314>.

⁴² Center For Strategic and International Studies, Markusen B.M., Idlib Province and the Future of Instability in Syria, September 21, 2018, <https://www.csis.org/analysis/idlib-province-and-future-instability-syria>.

⁴³ BBC, Syria war: Turkish forces set up positions in Idlib, October 13, 2017, <https://www.bbc.com/news/world-middle-east-41607822>.

⁴⁴ CNN, Gul T., Sterling J. and Elwazer S., Turkish jets hammer Syrian town to oust US-backed Kurdish militia, January 21, 2018, <http://edition.cnn.com/2018/01/20/middleeast/turkey-syria-military-operation/index.html>.

